# «ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ» ԾՐԱԳԻՐ

## Ծրագրի թիրախ համայնքներում սոցիալական կարիքները և ծառայությունների արձագանքը

*Գնահատողական հետազոտության արդյունքները*

ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Հուլիս-հոկտեմբեր, 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ** ........ 2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ........ 3
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ......... **Ошибка! Закладка не определена.**
**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ** ........ 22
**ԲԱԺԻՆ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** ........ 24
1.1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ........ 24
1.2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ........ 24
1.3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ ........ 24
1.4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ........ 25
**ԲԱԺԻՆ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ** ........ 27
2.1. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ........ 27
**2.1.1. ՄԵԾԱՄՈՐ** ........ 27
**2.1.2. ԱՐՄԱՎԻՐ** ........ 32
**2.1.3. ՄՐԳԱՇԱՏ** ........ 38
2.2. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ........ 41
**2.2.1. ԻՋԵՎԱՆ** ........ 41
**2.2.2. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ** ........ 49
2.3. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ........ 54
**2.3.1. ԳՅՈՒՄՐԻ** ........ 54
**2.3.2. ՄԱՐՄԱՇԵՆ** ........ 63
2.4. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ........ 71
**2.4.1. ԳՈՐԻՍ** ........ 71
**2.4.2. ՍԻՍԻԱՆ** ........ 85
**2.4.3. ՏԱԹԵՎ** ........ 93
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ........ 100
Հավելված 1. Ֆոկուս խմբերի վարման ուղեցույց ........ 102
Հավելված 2. Փորձագիտական հարցման ուղեցույց ........ 104
Հավելված 3. Խորին հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ ........ 106

## ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հիլֆսվերկ Ինթերնեյշնը և Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան, «Ընտանիք և Համայնք» ՀԿ-ի և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի հետ գործընկերությամբ Ավստրիական զարգացման հիմնադրամի և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ՝ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» եռամյա ծրագիրը: Վերջինիս նպատակն է պայքարել աղքատության և անհավասարության դեմ և նպաստել սոցիալական փոփոխություններին, ինչպես նաև ներառական ու կայուն զարգացմանը Հայաստանում: Այս նպատակին հասնելու համար փորձ է արվելու 1) ակտիվացնել միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունը պետական և ոչ պետական կառույցների միջև՝ տեղական մակարդակում, 2) ամրապնդել ՔՀԿ դերն ու մասնակցությունը տեղական սոցիալական պլանների մշակման և ներդրման գործընթացներում, ինչպես նաև նպաստել որակյալ և նպատակային սոցիալական ծառայությունների մատուցմանն ու 3) նպաստել սոցիալական ծառայությունների պետական ֆինանսավորման թափանցիկ մեխանիզմների ներդրմանը:

Ծրագիրը նպատակ ունի մշակել և ներդնել սոցիալական ծառայություններ՝ մշակված տեղական սոցիալական պլաններից բխող՝ ի շահ Հայաստանի մարզերի աղքատ և անապահով ընտանիքների: Ծրագիրն իրականացվում է Արմավիրի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ ընդհանուր թվով 10 համայնքներում:

Ծրագրի առջև դրված նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել իրականացնել սոցիալական կարիքների գնահատում՝ թիրախային 10 համայնքներում (Մեծամոր, Արմավիր, Մրգաշատ, Իջևան, Նոյեմբերյան, Գյումրի, Մարմաշեն, Գորիս, Սիսիան, Տաթև) սոցիալական կարիքները բացահայտելու և առաջնահերթությունները գնահատելու նպատակով: Կարիքների գնահատումը իրականացնելիս օգտագործվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության, փորձագիտական հարցումների, ինչպես նաև ծառայություններից օգտվողների հետ ֆոկուս խմբային քննարկումների մեթոդները:

Հաշվետվության մեջ համայնք առ համայնք ներկայացված են հարցվողների պատկերացմամբ իրենց համայնքների խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Գնահատողական հետազոտության արդյունքների վերաբերյալ սույն փաստաթուղթն ունի հետևյալ կառուցվածքը: Նախ ներկայացված են փաստաթղթում օգտագործվող բոլոր հիմնական հասկացությունների սահմանումները: Ապա Բաժին 1-ում կարելի է գտնել օգտագործված մեթոդաբանության վերաբերյալ տեղեկություններ, իսկ բաժին 2-ում ներկայացված են հետազոտության արդյունքները: Փաստաթուղթն ավարտվում է եզրակացությամբ և հավելվածներով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Թիրախային 10 համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել ներքոնշյալ հիմնական ընդհանուր խնդիրները, ներառյալ ենթակառուցվածքային կամ տնտեսական բնույթի, որոնք անուղղակի (բացասական) ազդեցություն ունեն սոցիալական դաշտի վրա:




Այսպիսով.

*1. Գործազրկություն, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ*

*1.1. Աշխատանք գտնելու հարցում առավել խոցելի են՝*

- **40-ից բարձր տարիք ունեցողները,** հատկապես կանայք, քանի որ գործատուները հիմնականում ցանկանում են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ աշխատողների:
- **հաշմանդամություն ունեցող անձինք**, քանի որ գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, նույնիսկ աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանով:
- **հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները**.Համայնքներում չկան այնպիսի ծառայություններ, որոնք կիրականացնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց խնամքը մինչև ընտանիքի անդամը աշխատանքից վերադառնա:
- **Երիտասարդները** – Համայնքում առկա աշխատատեղերի սղության և սահմանափակ հնարավորությունների պատճառով երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևան քաղաքում:

1.2. ***Ժամանցի, ակտիվ շփման կարիքի բավարարման համար հնարավորությունների պակասը.***

- Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտություններն իրացնելու: Այդ պատճառով կարիք են ունենում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, զրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին, սակայն նման հնարավորություն չկա և ոչ մի համայնքում:
- Երեխաների և երիտասարդների համար զարգացման և ժամանցի ապահովման հնարավորությունները խիստ անհամապատասխան են պահանջարկին և տեսականու արդիական ձևերին, որոնք հասանելի են Երևանում և մի քանի խոշոր քաղաքներում: Կարիքները վերաբերում են՝
  - արդիական մասնագիտությունների հետ կապված արտադպրոցական խմբակների ստեղծմանը (ծրագրավորում, դիզայն, անիմացիա, ռոբոտաշինություն և այլն),
  - կրթական կենտրոնների հիմնմանը,
  - երեխաների նախասիրությունների և հետաքրքրությունների բացահայտման համար անհրաժեշտ ու տարբեր հմտությունների զարգացման համար խմբակների ստեղծման անհրաժեշտությանը,
  - երիտասարդների համար ոչ ավանդական և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների ստեղծմանը:

2. ***Սոցիալական աջակցության ծառայությունների սակավություն, մարդկանց կարիքներին անհամապատասխանություն, դրանց տեսականու ծածկույթի անբավարարություն, մատչելիության խնդիր***
   - Սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք թոշակ կամ նպաստ չեն ստանում և տեղեկացված էլ չեն միանվագ և պարբերաբար տրամադրվող դրամական օգնություն ստանալու կարգի մասին:

*Որքան անապահով է ընտանիքը եկամուտների տեսակետից և որքան շատ են այդ ընտանիքում տարբեր խոցելիություն ունեցող անձիք՝ հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություն, անչափահաս մանկահասակ երեխաներ և այլն, այնքան ցածր է տեղեկացվածությունը գործող աջակցային ծառայությունների և դրանց ընթացակարգերի վերաբերյալ, ինչը հանգեցնում է* ***մարգինալացման:***
***ՖԽ հանդիպման մասնակից***

3. ***Մասնագիտացված ծառայությունների անբավարարություն և ցածր հասանելություն:***

   3.1. ***Մատուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիրը***

- Բոլոր համայնքներում դրամական՝ աղքատության, երեխայի խնամքի համար տրվող և այլն նպաստներից օգտվող շահառուները նշում էին այդ նպաստների չափի՝ կյանքի նվազագույն պայմանների ապահովման համար պահանջվող չափի հետ խիստ անհամապատասխանության խնդիրը, դժգոհ էին նպաստի չափերից այն հիմնավորմամբ, որ այն թույլ չի տալիս ընտանիքի համար որևէ էական հարց լուծել՝ անգամ երեխաների համար նվազագույն սննդապահովման հարցը: Անշուշտ, նույնը վերաբերում էր նաև կենսաթոշակի, հաշմանդամության թոշակի և այլ դրամական աջակցության չափերին:

- Բոլոր համայնքներում հարցվածները դժգոհություն էին հայտնում իրենց տարածքում մասնագիտացված սոցիալական ծառայությունների բացակայությունից/պակասից, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների, տարեցների, երիտասարդների համար, ինչպես նաև համայնքում զարգացնող/խթանող ծառայությունների անբավարարությունից: Բացի համընդհանրական ՝ դպրոց, պոլիկլինիկա, մանկապարտեզ (ոչ բավարար տեղերով) և գործող մեկ կամ երկու առանձին ծառայությունների, որոնք մատուցվում են հկ-ների կողմից և ըստ էության կայուն չեն, այլ ծառայություններ համայնքներում չկան:
- Խոշորացված համայնքների պարագայում հիմնականում գործող ծառայությունները առկա են հենց վարչական կենտրոնում, մինչդեռ մյուս տարածքներում/գյուղերում խիստ անհամաչափ է ծառայությունների տեղակայումը, իսկ գործող ծառայությունները մոբիլ–արտագնա տարբերակներ չունեն: Ստացվում է, որ ծառայությունների կարիք ունեցող մեծ թվով մարդիկ դուրս են մնում ծառայություններից:
- Բոլոր գնահատված համայքներում առկա է թեքահարթակների խնդիր. համայնքի ոչ բոլոր հատվածներում կան թեքահարթակներ, եղածներն են ճիշտ չեն կառուցված: Համայնքներում հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է նաև հասարակական տրանսպորտի հասանելիության հարցը: Անձինք, ովքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, չեն կարողանում համայնքի տարբեր հատվածներ հասնել, քանի որ չկա հարմարեցված հանրային տրանսպորտ:

### *3.2. Մասնագիտական ներուժի խնդիրը համայնքներում*

- Բոլոր համայնքներում հարցվողները նշում էին անբավարար բժշկական կադրերի և մասնագիտացված ծառայությունների պակասի մասին:
- Բոլոր համայնքներում անհրաժեշտ են լավ վերապատրաստված հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, էրգոթերապևտներ, ֆիզոթերապևտներ:

## *4. Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ.*

- **Լուսավորության խնդիրը.** Գրեթե բոլոր համայնքներում նշում էին փողոցների անբավարար լուսավորության խնդրի մասին կամ ընդհանրապես գիշերային լուսավորության բացակայության մասին:
- **Խաղահրապարակների սակավություն/անբավարարությունը.** Երեխաները չունեն հարմարեցված խաղահրապարակներ, ոչ բոլոր համայնքներում են ստեղծված անվտանգ պայմաններ երեխաների խաղալու համար:
- **Թափառող շների հետ կապված հարցերը**. Բնակիչները վախենում են երեկոյան ժամերին դուրս գալ տանից, չկա կառույց ԹԿԿԿ, որը կարողանա զբաղվել թափառող շների հարցով:

# ՄԵԾԱՄՈՐ

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 12,165 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 3,014 |
| **Երեխաների թիվ** | 4,120 |
| **Գործազուրկներ** | N/A |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 109 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 2 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 37<br>(տարիք 18-65՝ 29 , 65+ ՝ 8 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- 13+ տարիքի երեխաները ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում:
- Բացակայում է քաղաքի տնակային հատվածը և 4-րդ թաղամասը քաղաքին կապող հանրային տրանսպորտը: Այս թաղամասի երեխաները մանկապարտեզ չեն կարողանում գնալ, իսկ դպրոց գնում են շատ մեծ բարդություններով:
- Մեծամոր քաղաքի ծայրամասում (դեպի Ակնալիճ գյուղ տանող ճանապարհին) գտնվում է տնակային թաղամասը, որը բավականին կտրված է քաղաքից, չի աշխատում որևէ տրանսպորտ, չկան մանկապարտեզներ, խանութներ: Բնակիչները մեծ դժվարությամբ են կարողանում կազմակերպել երեխաներին ամեն օր մանկապարտեզ և դպրոց տանելու հարցերը: Տրանսպորտային միջոցի աշխատելու պարագայում բավականին կմեղմվեր այս խնդիրը:
- Մեծամորը Արմավիր մարզկենտրոնին կապող տրանսպորտային միջոցը քաղաքի միջով չի անցնում:
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար որևէ ծառայություն չկա համայնքում:
- Մասնագիտական ուսուցման հնարավորություններ չկան երիտասարդների համար:
- Բնակիչների մոտ խնդիր է առաջացնում պոլիկլինիկայի՝ քաղաքից հեռու գտնվելը, հատկապես երբ անձը ունի տեղաշարժման խնդիր և պետք է հատի մայրուղին՝ պոլիկլինիկա հասնելու համար:

## Առաջարկներ

- Հարցվողները կարևորում են համայնքում ակտիվ մարդկանցից կազմված խմբի ձևավորումը: Խմբի հիմնական նպատակը պետք է լինի համայնքի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումների կազմակերպումը և ներդրումների ներգրավումը:
- Հաշմանդամների և՛ մեծերի, և՛ երեխաների ցերեկային կենտրոնի ստեղծում, որը կապահովի հաշմանդամի զբաղվածությունը, հնարավորություն կտա խնամողին աշխատելու: Այս դեպքում խնամողը ոչ մեկից գումար չի պահանջի:

- Տարեցների համար ժամանցի ու զբաղվածություն ցերեկային կենտրոնի ստեղծում՝ «Ծերապարտեզ»:
- Միայնակ ծերերի համար տնային խնամքի ծառայության ստեղծում:
- Սպորտային համալիրի վերանորոգումն ու շահագործում:
- Երիտասարդների համար արհեստների ուսուցման ծառայության ստեղծում:
- Մանկական ժամանցի և զարգացման կենտրոնների ստեղծում:
- Երեխաների համար խաղահրապարակի կառուցում:
- Կանանց ձեռքի աշխատանքների կենտրոնի հիմնադրում, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

# ԱՐՄԱՎԻՐ

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 37,053 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 10,046 |
| **Երեխաների թիվ** | 8,919 |
| **Գործազուրկներ** | 2,941 |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 699 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | այո |
| **ՀԿ-ների թիվը** | 4 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 49<br>(Տարիք 18-65՝ 35, 65+ ՝ 14 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Ընտանեկան բռնությունը, կանանց հիմնախնդիրները Արմավիրում նվազագույն չափով հասցեագրված խնդիրներն են ՝ըստ հարցվածների: Հատուկ ծառայության կարիք կա՝ իրազեկման, կանխարգելման, ինչպես նաև բռնության զոհերին աջակցելու նպատակով
- Ազգային փոքրամասնությունների հետ կապված խնդիրներ կան աղջիկ երեխաների վաղ ամուսնությունների, ընդհանրապես երեխաների կրթական բացթողումների մասով:
- **Տարեցների խնամքի և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի կենտրոնների բացակայությունը** – հարցվողները նշում են, որ համայնքում խոցելի են միայնակ տարեցներն ու հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներն ու իրենց ընտանիքները:
- **Մասնագիտական առողջապահական ռեսուրսի, որակի պակասը** – Հարցվողների խոսքով, եթե անհրաժեշտություն կա՝ կազմակերպելու բուժօգնությունը, պետք է ստիպված ծախսեր կատարել և հասնել Երևանի համապատասխան բուժհաստատություն:
- **Ուղղորդման և մասնագիտական աջակցության խնդիրը** – Մասնակիցները նշում են, որ տեղեկացված չեն, թե որ խնդրի դեպքում ի՞նչ կառույցի է պետք դիմել, սկսած ընտանեկան բռնությունից, ամուսնալուծությունից, կրթական և այլևայլ խնդիրներից մինչև սոցիալական խնդիրներ:

- **Երեխաների զարգացման կենտրոնների, խաղահրապարակների բացակայությունը** – Արմավիր քաղաքը մեծ է և ունի ընդամենը մեկ ոչ շատ մեծ խաղահրապարակ, մեկ հին կառուսել և նորաբաց մասնավոր կարուսելներ: Կանաչ գոտին բավարար չէ ամբողջ քաղաքի համար: Չկան բավարար զարգացման, մշակութային, կրթական կենտրոններ: Այն, ինչ կա, բավականին թանկ է և ոչ բոլորի համար է հասանելի:

**Առաջարկներ**

- Կենտրոնի/ծառայության ստեղծում, որը կբարձրացնի համայնքում ընտանեկան բռնության խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև կկազմակերպի ընտանեկան բռնության զոհերի կարողությունների զարգացման և հզորացման միջոցառումներ (վերապատրաստումներ, մասնագիտական կրթություն):
- Սոցիալական ծառայությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն համայնքի ազգային փոքրամասնությունների խնդիրներին, հատկապես ապահովեն երեխաների հանրակրթության հասանելիությունը :
- Բացել տարեցների ժամանցի և խնամքի կենտրոն,
- Բացել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ,
- Բացել մասնագիտական ուղղվածության, ստեղծագործական կենտրոններ՝ կավագործություն, ասեղնագործություն, քանդակագործություն, թատրոն, երաժշտություն և այլն:
- Բացել կանանց ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները,
- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ծառայություն, խնամքի կենտրոն, որպեսզի ծնողները կարողանան աշխատել:
- Համայնքում գործող պետական և ոչ պետական կառույցների և բնակչության միջև անվստահության մթնոլորտը փոխելու համար հաճախ կազմակերպել հանդիպումներ ոլորտի մասնագետների և հիմնական շահառուների միջև, խրախուսել ձեռներեցությունը, նոր գաղափարները, աշխատասիրությունը:
- Համայնքի ծայրամասային թաղամասերում ուշադրություն դարձնել վաղ դեռահասության փուլում գտնվող երեխաների վրա: Նրանց արտադպրոցային կրթությունն ու ժամանցը կազմակերպելու համար ստեղծել կենտրոններ, որտեղ կուսուցանվեն կյանքի հմտություններ, կար ու ձև, ինքնապաշտպանությունը խրախուսող սպորտաձևեր, փայտագործություն:
- Համայնքում հիմնադրել ընտանեկան կենտրոն, որտեղ հոգեբանական ծառայություն կստանան ոչ միայն կանայք, այլ նաև տղամարդիկ, զույգերը, որից կշահեն երեխաները:
- Բարձրացնել իրազեկվածությունը համայնքային իրադարձությունների վերաբերյալ, ապահովել համայնքի բնակիչների տեղեկացվածությունը:

## ՄՐԳԱՇԱՏ

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 5,500 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 1,404 |
| **Երեխաների թիվ** | 1,060 |
| **Գործազուրկներ** | N/A |

| | |
|---|---|
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 80 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 0 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 38<br>(Տարիք 18-65՝ 32, 65+ ՝ 6 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Համայնքի առաջնային կարիքների շարքում է զբաղվածությունը, հատկապես երիտասարդների զբաղվածությունը, քանի որ համայնքում գյուղատնտեսությունը դարձել է անարդյունավետ:
- Առաջնային են համարում երեխաների զբաղվածության և ժամանցի խնդիրը, երեխաների համար չկա որևէ վայր, որտեղ կարող է անցկացնել ազատ ժամանակը, դպրոցական առարկաներից զատ ստանալ այլ գիտելիքներ, զարգանալ:
- Խնդիրներ կան հատկապես հաշմաղամություն ունեցող երեխաների հետ. նրանց համար որևէ ծառայություն չկա համայնքում՝ ոչ զարգացնող, ոչ խնամքի: Խնդրահարույց է նաև այդ երեխաների համար օգնող պարագաների՝ քայլակ և այլն ձեռք բերումը. գործընթացը խիստ բյուրոկրատական է և շատ ժամանակատար:
- համայնքի համար դժվար լուծելի խնդիների շարքում հիմնականում նշում են ոռոգման ջրի, լուսավորության խնդիրները:
- Բնակչության սոցիալական վիճակով պայմանավորված՝ ավելանում են նաև հիմնախնդիրները, որտեղ առաջնային են համարվում առողջապահական խնդիրները, քանի որ ցածր եկամուտների պատճառով շատերը դժվարանում են օգտվել առողջապահական ոլորտի ծառայություններից, որից առավելապես տուժում են երեխաներն ու տարեցները: Մի կողմից ոչ բոլոր մասնագետներն են տեղում առկա, մյուս կողմից, եթե ծառայությունները Արմավիրում կամ Երևանում կարող են գտնել, ապա վճարունակ չեն դրանց ստանալու համար:
- Համայնքի առաջնային խնդիրներից են նաև երեխաների և երիտասարդների համար ժամանցի վայրերի բացակայությունը՝ սրճարան, խաղահրապարակ, տարեցների խնամքի կենտրոնների բացակայությունը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ցերեկային կենտրոնի բացակայությունը:

## Առաջարկներ

- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ցերեկային ծառայություն:
- Համայնքում բացել տարեցների ժամանցի կենտրոն:
- Հիմնել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ:
- Ստեղծել կանանց, ինչու չէ նաև տարեցների ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

## ԻՋԵՎԱՆ

*ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 19,356 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 5,100 |
| **Երեխաների թիվ** | 4,544 |
| **Գործազուրկներ** | 1480 |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 621 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 8 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 37<br>(Տարիք 18-65՝ 28, 65+ ՝ 9 մասնակից) |

### Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- **Անվտանգության խնդիրը.** Բնակիչները որպես համայնքի առաջնային կարիք համարում են սահմանապահ գյուղերի ուժեղացմանն ու ապահովությանն ուղղված ծրագրերը:
- **Ճանապարհների բարեկարգման խնդիր** – Իջևան համայնքում, հատկապես՝ շենքերի բակերը գտնվում են անմխիթար վիճակում, կարիք ունեն ասֆալտապատման: Հատկապես անձրևների շրջանում բնակիչները մեծ դժվարությամբ են տեղաշարժվում: Շենքերի բակերում բացակայում են խաղահրապարակներ երեխաների համար: Երեխաները խաղում են փոշոտ և կեղտոտ ճանապարհներին՝ վտանգելով նաև իրենց կյանքը բակերով երթևեկող մեքենաների առկայության պատճառով:
- **Տրանսպորտային հաղորդակցման խնդիր** – շատ համայնքների երիտասարդներ զուրկ են մնում մի շարք միջոցառումների և ծրագրերի մասնակից լինելուց, քանի որ չեն կարողանում հասնել Իջևան մշտական տրանսպորտային ծառայություն չունենալու պատճառով, իսկ աշխատող տրանսպորտային միջոցներն էլ անհատական տաքսիներն են, որոնք բավականին թանկ են ամենօրյա չեն:
- **Թափառող շների և առանց հովիվ անասունների առկայության խնդիրը** համայնքում – համայնքում մեծ խնդիր է թափառող շների ոհմակների առկայությունը, բնակիչները վախենում են ազատ քայլել քաղաքում, երեխաները վախով են հաճախում դպրոց և ուսումնական հաստատություններ: Բացակայում են թափառող շների հարցերով զբաղվող կառույցներն ու ծառայությունները: Անտառներում ազատ արձակված կովերն ու ձիերը հաճախ շրջում են քաղաքում անհարմարություն պատճառելով բնակիչներին, երթևեկությանը ինչպես նաև աղտոտում են քաղաքը:
- **Կոյուղու բացակայություն** – համայնքի մի շարք թաղամասեր չունեն կոյուղու համակարգ: Խնդիրը լուծում են իրենց բակերում փոսեր փորելու միջոցով, որը մեծ անհարմարություն է՝ հատկապես ամառվա շոգ ամիսներին:
- **Զբաղվածություն տարեցների համար**- Տարեցների մեծ մասը նշում են, որ կարիք ունեն զբաղվածության: Չեն ուզում անգործ տանը նստել: Այնքան հարցերում կարող են օգտակար լինել, պատրաստ են աշխատել և օգնել իրենց զավակներին:
- **Ժամանցի, շփման կարիք**- Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտությունններն ի օգուտ ծառայեցնելու: Այդ պատճառով կարիք են տեսնում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, զրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին:

- **Ծառայություններ միայնակ ծերերի** համար- Միայնակ ծերերը անպաշտպան և անօգնական են համայնքում: Նրանք կարիք ունեն որպեսզի ինչ-որ մեկը պարբերաբար այցելի իրենց, զրուցի, հարցնի որպիսությունը: Շատ հաճախ դժվարանում են դուրս գալ խանութ հաց գնելու: Մեծ խնդիր է նաև տարեց մարդու տան մաքրության կազմակերպումը:

- **Հաշմանդամ երեխաների ծնողները կարիք** ունեն աշխատանքի – Հաշմանդամ երեխաների ծնողները զրկված են աշխատանքի հնարավորությունից: Կարիք կա ծրագրերի, որոնք կօգնեն նման ծնողներին աշխատել տանից՝ միաժամանակ խնամք տանելով իրենց երեխաներին:

- **Ցերեկային կենտրոններ հաշմանդամ երեխաների համար** – Մեծ կարիք կա ցերեկային խնամքի կենտրոնների, որտեղ կկազմակերպվի հաշմանդամ երեխաների խնամքը, հատուկ մասնագիտական աշխատանքը, կրթությունը, ֆիզիոթերապևտիկ աջակցությունը:

- **Ժամանցի վայրերի բացակայությունը** – համայնքներում բացակայում են երիտասարդների զարգացման կենտրոններ: Երիտասարդները չունեն հնարավորություններ մի տեղ նստելու՝ ծրագրեր մշակելու և լրացուցիչ հնարավորություններ ստեղծելու համար: Երիտասարդներին հենց իրենց համայնքներում զարգացման կենտրոններ են պետք, որպեսզի նախ ակտիվանա համայնքային կյանքը, ներքին ռեսուրսները օգտագործվեն հենց իրենց համայնքը զարգացնելու համար, գումար չծախսեն Իջևան հասնելու համար:

- **Սպասարկման ոլորտում առկա խնդիրները** – քաղաքում գործող սրճարաններում մատուցվող ծառայությունների մակարդակը ցածր է, իսկ երաժշտությունը անլսելի: Իջևանում չի գործում մի այնպիսի սրճարան, որ ընտանիքով կամ մտերիմներով հնարավոր լինի գնալ և վայելել:

- **Քաղաքի մաքրության պահպանումը** – քաղաքի մաքրությունը պահպանված չէ և զբոսաշրջիկները այցելելով Իջևան՝ անմիջապես նկատում են աղտոտված Աղստև գետը, աղբամանների մոտ թափված աղբը: Այդ բոլորը տեսնելով՝ զբոսաշրջիկները չեն ցանկանում անգամ նստել որևէ սրճարանում, որքան էլ այն գեղեցիկ լինի և հարմարավետ:

## Առաջարկներ

- Ստեղծել մի վայր, որտեղ տարեցները կարող են ազատ շփվել, մասնակցեն միջոցառումների, գիտելիքներ և հմտություններ փոխանցեն երիտասարդներին, կատարեն որոշ չափով գոնե վարձատրվող աշխատանք:

- Ստեղծել ծառայություններ միայնակ ծերերի համար:

- Համայնքում իրականացնել կրթական ծրագրեր հատուկ կարիքներով անձանց և նրանց ծնողների համար, որի արդյունքում ծնողը և երեխան ձեռք կբերեն հմտություններ և կկարողանան գումար վաստակել:

- Ստեղծել հաշմանդամների համար վերականգնողական կենտրոններ մարզերում:

- Ստեղծել ցերեկային խնամքի կենտրոններ հաշմանդամ երեխաների համար:

- Համայնքում իրականացնել լրացուցիչ կրթության դասընթացներ, որի շնորհիվ աշխատանքի կարիք ունեցող բնակիչները կկարողանան ձեռք բերել համակարգչային և այլ լրացուցիչ հմտություններ՝ աշխատանքի անցնելուց առաջ:

- Ստեղծել սոցիալական լայն հարթակ, որի միջոցով բնակիչները կկարողանան իրազեկվել գործող սոցիալական ծրագրերի և ծառայությունների մասին:

- Համայնքում բացել կենտրոն, որտեղ կկարողանան այցելել հաշմանդամություն ունեցող անձինք՝ ոչ միայն մտավոր այլ նաև ֆիզիկական խնդիր ունեցողները:
- Մասնագիտական կողմնորոշման կենտրոններ ստեղծել:
- Կազմակերպել միջոցառումներ և մշակել ծրագրեր երիտասարդներին ակտիվացնելու նպատակով:

# ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

*ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 16,623 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 4,821 |
| **Երեխաների թիվ** | 3,215 |
| **Գործազուրկներ** | |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 552 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 16 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 41<br>(Տարիք 18-65՝ 30, 65+ ՝ 11 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

Համայնքի առաջնային կարիքներից մասնակիցներն առանձնացրեցին մի քանիսը: Այսպես.

- Երեխաների համար ժամանցի վայրերի՝ մանկական սրճարանի, խաղահրապարակների ընտրության հնարավորություն առանձնապես չկա:
- Չկա երիտասարդների համար ժամանցի կենտրոններ:
- Համայնքում չկա ոռոգման ջուր, որպեսզի մարդիկ զբաղվեն գյուղատնտեսական աշխատանքներով և ունենան բավարար արդյունք:
- Որպեսզի համայնքն ունենա աշխատատեղեր միջին տարիքի մարդկանց համար, չկա որևէ տեքստիլ արտադրամաս՝ զբաղվածություն ապահովելու համար:
- Լավ կլինի ունենալ պահածոների գործարան, որպեսզի մարդիկ անտառից հավաքած բերք ու բարիքները կարողանան իրացնել:
- Համայնքում չկա հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական կենտրոն և համապատասխան մասնագետներ:
- Համայնքն ունի նաև բժշկական ոլորտի մասնագետների կարիք:
- Համայնքը գտնվում է սահմանամերձ գոտում, բայց չունի նորմալ վիճակում գտնվող, ապահով ապաստարան արտակարգ իրավիճակներում պատսպարվելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձինք իրազեկված չեն իրենց իրավունքներից, ուստի նախընտրելի է ունենալ նմանատիպ իրազեկման կենտրոն:

## Առաջարկներ

- Համայնքում բացել տարեցների ժամանցի կենտրոն,

- Բացել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ,
- Բացել կանանց ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները,
- Ստեղծել աշխատատեղերի վերաբերյա ինֆորմացիոն դաշտ,
- Չափահաս հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծել համապատասխան աշխատատեղեր:

## ԳՅՈՒՄՐԻ[1]

*ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 157,332 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 43,300 |
| **Երեխաների թիվ** | 26,876 |
| **Գործազուրկներ** | 10,041 |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 11,439 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 110 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 43<br>(Տարիք 18-65՝ 35, 65+ ՝ 8 մասնակից) |

### Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Ըստ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2019 թվականի ծրագրում առկա տվյալների, աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակով Շիրակի մարզն Հայաստանում առաջատարն է 44,3 և 51,8%-ով:
- Գյումրիում ծառայություններն անհավասարաչափ են բաշխված ըստ թաղամասերի: Ի տարբերություն Անի/58/ թաղամասի և քաղաքի կենտրոնական թաղամասերի, որտեղ բազմաթիվ պետական ու ոչ պետական կառույցներ, ծառայություններ են մատուցում երեխաների համար, Մուշ թաղամասում ընդամենը 60 երեխայի համար է մանկապարտեզ գործում, այն պարագայում, երբ այդ թաղամասը տարեցտարի ընդլայնվում է նոր շենքերի կառուցման ու բնակեցման հաշվին: Երեխաների աղքատությունը մեղմող ծառայությունների անբավարարության նմանատիպ պատկեր ունեն նաև քաղաքի հարավային թաղամասերը, մասնավորապես "Սեվերսկի" և "Կազաչի Պոստ" կոչվող թաղամասերը, որտեղ ընդհանրապես երեխաների համար ոչ մի զարգացման, խաղի ու ժամանցի հնարավորություն չկա:
- Թաղամասի դպրոցում մոտ 1000 աշակերտ է սովորում, իսկ խմբակներ, նեղ մասնագիտացված ծառայություններ ինչպիսիք են՝ ֆիզիոթերապիան, հոգեբանի, լոգոպեդի, էրգո և արտ-թերապիայի մասնագետների ծառայությունները, ինչպես նաև մանկապարտեզային տարիքի երեխաների անվճար կրթության հնարավորությունները, բացակայում են:
- Թաղամասը չունի նաև արհեստի, արվեստի ուղղությամբ երեխաների զարգացման հնարավորություն:

---

[1] Հաշվի առնելով համայնքի մեծությունը, կարիքի գնահատումը կենտրոնացել է հատկապես մանկական աղքատության հիմնախնդրի ծուրջ և առավել քիչ ծառայությունների հագեցվածություն ունեցող ՄՈՒՇ թաղամասում՝

- Չկան երեխաների համար զբաղվածության և այլընտրանքային զարգացման ծառայություններ՝ սպորտ, մշակույթ և այլն։
- Թաղամասի երեխաները և նրանց ընտանքիները սոցիալական աջակցության լրացուցիչ ծառայություններից, մասնավորապես հկ-ների ծառայություններից օգտվելու համար մատչելիություն չունեն. նրանք չեն կարող տրանսպորտային միջոցներից իրենց թույլ տալ օգտվել՝ հասնելու համար առավել կենտրոնական թաղամասերում տեղակայված ծառայություններ։
- Աղքատ երեխաների ընտանքիների անդամներն ակտիվություն չեն ցուցաբերում հանրային քննարկումներին մասնակցելու հարցում։ Հիմնականում հանրային քննարկումներին մասնակցում են ՀԿ-ները՝ որպես այդ խոցելի խմբերի շահերը ներկայացնող կազմակերպությունները։
- Աղքատ երեխաների ընտանիքները տեղեկացված են միայն նպաստ համակարգի և ՏՊ-ների կողմից մատուցվող ծառայությունների մասին։ Միաժամանակ, նրանք տեղեկացված չեն ՄՍԾ-ների գործունեության մասին և չգիտեն, թե այդ նոր կառույցները իրենց որ հարցերով կարող են զբաղվել։
- Ըստ ծնողների, նրանք խտրական վերաբերմունքնի են արժանացել պետական տարբեր ծառայությունների հետ առնչվելիս, ինչպես նաև վատ վերաբերմունքի են արժանացել ինչպես բժշկական ծառայություններից օգտվելու ժամանակ, այնպես էլ համայնքապետարան դիմելիս։ Փոխարենը ծնողները արդյունավետ և օգտակար են համարել Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության և ՎՎ կազմակերպության հետ շփումները։
- Բազմազավակ և աղքատ ընտանիքները բավարար աջակցություն չեն ստանում՝ դրամական և աջակցող ծառայությունների տեսքով։ Դրամական ծառայությունները թույլ չեն տալիս հիմնարար սննդից բացի երեխաների համար որևէ լրացուցիչ կարիք հոգալ։
- Երեխաներ ունեցող և աղքատ ընտանիքներում ծնողների մեծ մասը աշխատանք չունի, կամ վաստակում է ավելի փոքր գումար, քան նվազագույն աշխատավարձն է։ Աշխատատեղերի պակասից զատ, շատ ծնողներ մրցունակ չեն շուկայում, կախվածության մեջ են հայտնվել տարաբնույթ օգնություններից ու պետական նպաստից։
- Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական ծառայությունների հասանելիության և մատչելիության կարիք կա։ Երեխաները տարիներով մնում են հերթի մեջ՝ մեկ կամ երկու ամիս վերականգնողական կուրս անցնելու համար։
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղաշարժման սահմանափակումների վերացման կարիք։ Համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է նաև տրանսպորտի հանհասանելիության հարցը։ Անձինք, ովքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, չեն կարողանում քաղաքի տարբեր հատվածներ հասնել, քանի որ չկա հարմարեցված հանրային տրանսպորտ։
- Երեխաների զբաղվածության ապահովման անվճար կենտրոնների, այգիների, ժամանցի կազմակերպման վայրերի կարիք կա։ Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները չունեն զբաղմունք, զարգացման կենտրոններ հաճախելու հնարավորություն, քանի որ ֆինանսական միջոցներ չունեն։
- Մուշը մյուս թաղամասերիին կապող համայնքային տրանսպորտի բացակայությունը։
- Երեխաների համար գործող ծառայություններից Մուշ թաղամասում գործում է ֆուտբոլի ակադեմիա
- Մուշ թաղամասում թիվ 23 դպրոցում գործում է Արմաթ լաբորատորիա։

Ի լրումն,

**Առաջարկներ**

- Համայնքային երկարօրյա դպրոցներ
- Տաղանդավոր երեխաների համար անվճար ակադեմիաներ (Թումո)
- Մուշ թաղամասում Երեխաների համար համալիր կրթական-զարգացման ծառայությունների անվճար կենտրոն
- Հաշմանդամություն ունեցող անձանց ձեռքի աշխատանքների իրացման հնարավություն
- Անվճար իրավաբանական ծառայություն հատկապես հաշմանդամ անձանց համար
- Քիչ ժամաքանակով աշխատանքի հնարավորություն հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար
- Արհեստագործական խմբակներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ատամնաբուժարան
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար անվճար կենտրոն՝ դպրոցից հետո երեխաների զբաղվածության ապահովման համար
- Մայրերի, կանանց տնտեսական զարգացմանն ուղղված ծառայություններ մատուցող կառույցի ստեղծում
- Երեխաների և ծնողների համար հոգեբանական ծառայությունների մատուցման կենտրոն
- Ճիշտ թեքահարթակներ, գետնանցումներում շարժասանդուղքներ կառուցելու անհրաժեշտություն
- մանկապարտեզներում հոգեբանի, լոգոպեդի և այլ անհրաժեշտ մասնագետների հաստիքների տրամադրում,

# <u>ՄԱՐՄԱՇԵՆ</u>

*ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 10,952 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 3,309 |
| **Երեխաների թիվ** | 2,348 |
| **Գործազուրկներ** | N/A |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 372 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 1 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 36<br>(Տարիք 18-65՝ 28, 65+ ՝ 8 մասնակից) |

**Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ**

Հարցվողները  համայնքի ամենաարդիական խնդիրներից նշել են հետևյալները՝

- դպրոցների և մանկապարտեզների շենքային և գույքային հագեցվածության խնդիրը,

- որոշ համայնքներում մանկապարտեզների և ակումբների հիմնումը, որտեղ երեխաներն ու երիտասարդները, ինչու չէ, նաև մեծահասակները զբաղմունք կունենան,
- Համայնքում որակյալ կրթությունը խնդիր է.  լավ, որակով կրթություն ստանալու համար գնում են քաղաք, հատկապես բարձր դասարաններից: Եվ դպրոցներում աշակերտների թիվը գնալով քչանում է,  սոցիալական ծանր վիճակի հետ կապված աղքատ ընտանիքների երեխաները մնում են գյուղում՝ առանց զարգանալու հնարավորությունների:
- Նեղ մասնագետների, մասնավորապես լոգոպեդի կարիքը
- Երիտասարդ մասնագետների արտահոսք՝ աշխատատեղեր չլինելու պատճառով
- Երիտասարդների համար մասնագիտական կողմնորոշման և  մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների կարիք
- Բավականին թիվ են դեռևս կազմում տնակներում բնակվողների թիվը:
- Միջհամայնքային տրանսպորտի բացակայությունը
- Գյուղամիջյան և միջհամայնքային ճանապարհների  վատ վիճակը

**Առաջարկներ**

- դպրոցում, մանկապարտեզում ստեղծել պայմաններ և միջավայր հաշմանդամություն ունեցող երեխաների համար, Օրինակ՝ դպրոցում, մանկապարտեզում համապատասխան մասնագետներ ընդունել, վերապատրաստել  հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար,
- հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունն ապահովելու  համար խմբակներ՝ հեյունագործություն, ուլուքագործություն, նկարչություն:
- համայնքում խաղահրապարակ, սպորտ հրապարակ, ֆուտբոլի դաշտ ստեղծել, ինչպես նաև սպորտային խմբակներ, մարզական գույք տրամադրել,
- տարեցների համար ակումբ, որտեղ տարեցները կզբաղվեն սեղանային խաղերով,
- ողջ բնակչության համար  դեղատուն ունենալ:
- Այգեգործական դասընթացներ կազմակերպել գյուղացիների համար, ջերմոցներ աշխատեցնելու նրբությունները սովորեցնել, քանի որ ջերմոցային տնտեսությունները շատ արդիական են հիմա և եկամտաբեր:
- Միջհամայնքային տրանսպորտ ունենալ
- Ունենալ  կենտրոն, որը հնարավորություն կտրամադրի հաշմանդամություն ունեցող անձանց զարգացնել իրենց հմտությունները, զբաղմունքի հնարավորություն կստեղծի, միևնույն ժամանակ էլ կկարողանան ձեռքի աշխատանքներ պատրաստել և վաճառել: Այսինքն եկամտի և զբաղվածության ապահովման ծառայություններ:

## ԳՈՐԻՍ

*ՅՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 29,509 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 6,943 |
| **Երեխաների թիվ** | 5,254 |

| | |
|---|---|
| **Գործազուրկներ** | 653 |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 869 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 35 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 33<br>(Տարիք 18-65՝ 24, 65+՝ 9 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- գործազրկության տեսանկյունից ավելի խոցելի են երիտասարդ ընտանիք կազմած զույգերը, միջինից բարձր (50 և ավելի բարձր) տարիքային խմբերի ներկայացուցիչները, կանայք, հաշմանդամություն ունեցողները, 3 տարուց ավել գործազուրկի կարգավիճակում գտնվող անձինք:
- Ծառայություններ չկան հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Համայնքում չկան նաև վերականգնողական կենտրոններ, չկան մասնագիտական ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և, առհասարակ, նաև մեծահասակների համար:
- Համայնքում խնդրահարույց է այլընտրանքային անվճար կրթական հաստատությունների, ցերեկային խնամքի կենտրոնների բացակայությունը:
- Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար բացի մասնագիտական ծառայությունների բացակայությունից, բացակայում է նաև կրթական հաստատություններում ներառական միջավայրը:
- Անհրաժեշտ են այնպիսի մասնագիտացված կենտրոններ, որտեղ հնարավոր կլիներ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին գոնե 2-3 ժամով թողնել, որպեսզի ծնողները կարողանային թեկուզ կարճաժամկետ աշխատանքով զբաղվել:
- Շատ լուրջ խնդիր է տարեցների զբաղվածության խնդիրը: Կարիք կա ժամանցային կենտրոնների, որտեղ ծերերն ու միայնակ տարեցները կարողանային կազմակերպել իրենց առօրյան:
- ժամանցի վայրերի բացակայությունը ևս համայնքի կարևոր խնդիրներից է՝ հատկապես երեխաների և երիտասարդների համար:
- Գորիսում շատ են դեռևս Բաքվից գաղթած փախստականները, ովքեր շարունակում են ապրել տնակներում՝ ավելի քան 30 տարի:
- Տարեցների խնամքի և ժամանցի կենտրոնների բացակայությունը:
- Նեղ մասնագետների բացակայությունէ լոգոպեդներ, հոգեբաններ, արտթերապիստներ, ֆիզոթերապևտներ և այլն:

## Առաջարկներ

- Գորիսում հաշմանդամություն ունեցող երեխաների համար մասնագիտացված վերականգնողական կենտրոնի ստեղծման անհրաժեշտություն: Գորիսում կարիք կա այնպիսի մի կենտրոնի, որտեղ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ օրական 4 ժամ կարողանան մասնագետները աշխատել, որպեսզի ծնողն այդ ընթացքում փորձի աշխատել:
- Գորիսում անհրաժեշտ են լավ վերապատրաստված հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, էրգոթերապևտներ, ֆիզոթերապևտներ:
- Անհրաժեշտ են տարեցների ու միայնակ ծերերի խնամքի ու ժամանցի կենտրոններ:

- Վերանորոգել բարեգործական ճաշարանի տարածքը, թարմացնել գույքն ու կահույքը, ապահովելով տարեցների ու միայնակ ծերերի խնամքի ու ժամանցի համար համապատասխան միջավայր։ Բարեգործական ճաշարանը տարեցների ու անտունների միակ ընդհանուր հանգստի վայրն է Գորիսում:
- Սոցիալական ծառայությունների ոլորտում առկա մասնագետները լուրջ վերապատրաստման կարիք ունեն: Պետք է հաճախակի փորձի փոխանակման այցեր կազմակերպվեն, Երևանից հրավիրվեն փորձառու մասնագետներ, ովքեր տեղում իրենց փորձով կկիսվեն տեղացի մասնագետների հետ։
- երեխաների համար զարգացման և ժամանցի ապահովման կենտրոնների, արդի մասնագիտությունների հետ կապված արտադպրոցական խմբակների բացումը։
- Խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների կազմակերպում և բավարար մակարդակի ապահովում:
- Սոցիալական ծառայությունների հասցեականության, հասանելիության և մատչելիության բարելավում:
- Քաղաքացիների և ՀԿ-ների մասնակցության ապահովումը. տեղական մակարդակում սոցիալական քաղաքականությունների մշակման-իրականացման գործընթացներին:

## ՍԻՍԻԱՆ

*ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 30,575 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 4,271 |
| **Երեխաների թիվ** | 6,884 |
| **Գործազուրկներ** | 446 |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 678 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **ՀԿ-ների թիվը** | 7 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 33<br>(Տարիք 18-65՝ 25, 65+ ՝ 8 մասնակից) |

### Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Առողջապահության ոլորտում լավ մասնագետ բժիշկների կարիք ունի համայնքը: Օրինակ, Սիսիանի ԲԿ-ն չունի մանկական նյարդաբան:
- Համայնքը ունի նոր նախակրթարանի կարիք: Գործող մանկապարտեզները գերծանրաբեռնված են: Նախակրթարանի տարիքային երեխաների մոտ 35 տոկոսը դուրս է մնում կրթությունից տեղ չլինելու պատճառով:
- պատերազմից հետո մարդկանց մի մասը հաշմանդամություն է ձեռք բերել, մյուսներն էլ հոգեբանական ծանր սթրեսի մեջ են գտնվում: Մարդկանց դեռ չի հաջողվել հաղթահարել պատերազմի ժամանակ ունեցած ապրումները: Համայնքում խնդիր է անվճար հոգեբանական աջակցության կենտրոնի բացակայությունը մեծահասակների համար:
- Համայնքի տարեցները անպաշտպան են: Բարեգործական ճաշարանը գտնվում է քաղաքի ծայրամասում:, իսկ շահառուները ֆինանսապես ի վիճակի չեն տրանսպորտից օգտվելու:

- Կրթության ոլորտում տրանսպորտի բացակայության և մասնագետների պակասի պատճառով երեխաներին քիչ ժամանակ է հատկացվում, քանի որ հաստիքներն անբավարար են ։
- Գերիշխող խնդիր է երեխաների ամառային հանգստի/ճամբարների կազմակերպման բացակայութունը:
- Սիսիանում կա 155 առավել խոցելի ընտանիք, որոնց 70 տոկոսը չի աշխատում: Ըստ քաղաքապետարանի տվյալների՝ գործազուրկ է բնակչության 30-40%-ը: Գործազրկության տեսանկյունից առավել խոցելի խումբը հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներն են, խոցելի ընտանիքներն են, 45-63 տարեկան մարդիկ են, հաշմանդամություն ունեցող մարդիկ են, աշխատող և մինչև 3 տարեկան երեխաների մայրիկներն են:
- Խնդիրները շատ են նաև կրթական ոլորտում, հատկապես գյուղական բնակավայրերում՝ ուսուցիչների պակաս կա, ներառական կրթության ոլորտի մասնագետները չեն կարողանում գնալ-գալ հեռու գյուղեր՝ միջհամայնքային տրանսպորտի մասնակի առկայության կամ ընդհանրապես բացակայություն պատճառով:

## Առաջարկներ

Քննարկման մասնակիցների մեծամասնությունը կարևորում է՝

- 0-5 տարեկան երեխաների համար խնամքի կենտրոնի ստեղծումը /թեկուզ վճարովի/, որը կնպաստի աշխատող մայրերի, հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հոգսը թեթևացնելուն: Անհրաժեշտ է ունենալ նաև այնպիսի ծառայություն, որ ծնողը կարողանա շտապ մեկ-երկու ժամով երեխային կենտրոն տանի և իր հրատապ գործերով զբաղվի:
- հաշմանդամություն ունեցող երեխաների/մեծահասակների համալիր/վերականգնողական կենտրոնի բացումը, որտեղ շահառուները կստանան նեղ մասնագիտական ծառայություններ, ինչպես նաև ֆիզիոթերապիա և լող: *Հարցվողները նշում են «Գնահատման չափանիշներն այնքան բարձր են դրված, որ խնդիրներ ունեցող երեխաները գնահատումից հետո չեն կարողանում օգտվել ծառայությունից:»*
- համայնքում ունենալ ճամբարային ծառայություն, տարվա բոլոր եղանակների համար:
- Սիսիանի ԲԿ-ն ունենա նաև սոցիալական աշխատողի հաստիք, ճիշտ ուղղորդումների ու հիվանդների շահերի պաշտպանության համար:
- Տարեցներն առաջարկում են, որ համայնքապետարանը բյուջեում տոն օրերին նվերների և Սյունիքի տեսարժան վայրեր էքսկուրսիայի համար տրանսպորտի գումար հատկացնի, ավելի քան 30 տարի նմանատիպ ծառայություն չեն ստացել:
- Ծառայությունների որակի բարձրացումը: Քանի որ այսօր ծառայությունները որակյալ չեն մատուցվում, դա նաև շահառուների խնդիրն է, չեն բողոքում, իրենց իրավունքները չեն պաշտպանում:
- Զբաղվածության կենտրոն, որտեղ դպրոցը ավարտած երեխաները հնարավորություն կունենային ինչ-որ մասնագիտություններ սովորելու, օրինակ կար ու ձև կսովորեն, դիզայն:

# ՏԱԹԵՎ

*ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 6,107 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 1,267 |
| **Երեխաների թիվ** | 1,361 |
| **Գործազուրկներ** | N/A |
| **«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ** | 195 |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Yes |
| **ՀԿ-ների թիվը** | 2 |
| **Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ** | 32<br>(Տարիք 18-65՝ 24, 65+ ՝ 8 մասնակից) |

## Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Տաթև համայնքի բոլոր դպրոցներում երեխաների համար բացակայում են արտադասարանական խմբակներն ու առարկայական պարապմունքները՝ հատկապես լեզուների:
- Մեծահասակները չունեն զբաղմունքի համար հարմարավետ պայմաններ: Տարվա բոլոր եղանակներին հավաքվում են բացօթյա տաղավարում և խաղում տանից բերված սեղանային խաղերով:
- Շինուհայր բնակավայրի ամենախոցելի տեղը մշակույթի տան և մշակութային կյանքի բացակայությունն է:
- Շինուհայրում և հարակից գյուղերում կարիք կա սպորտային /կարատե, բոքս/ , մշակութային խմբակների:
- Համայնքը չունի անվտանգ խաղահրապարակ:
- Համայնքում տարեցները, հաշմանդամները ստանում են իրենց թոշակները, նպաստները, ԱԱՊԿ-ից իրենց դեղորայքը, սակայն զուրկ են մնում մշակութային միջոցառումներից:
- Սոցիալական խնդիրներից գերակշռողը աշխատատեղերի բացակայությունն է: Հիմնականում աշխատանք փնտրողները կանայք են: Աշխատանք փնտրողներ են համարվում նաև երիտասարդները, ովքեր ավարտել են ԲՈՒՀ –երը և իրենց մասնագիտություններով աշխատանք չեն գտնում: Գործազրկությունը խիստ արտահայտվում է հաշմանդամություն ունեցող անձանց վրա, քանի որ, նախկինում լինելով մասնագետներ, այժմ չեն կարողանում իրենց ծառայությունները ողջ ծավալով մատուցել բնակչությանը: Գործազրկության տեսանկյունից խոցելի խումբ են երեխաներ /ներառյալ հաշմանդամ երեխա/ ունեցող ծնողները:

## Առաջարկներ

- Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է վերապատրաստվեն, օրենքներին լավ տիրապետեն, քանի որ անընդհատ օրենքներում փոփոխություններ են լինում:
- Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է անընդհատ ինքնակրթվեն, անցնեն վերապատրաստման դասընթացներ, նոր հմտություններ ձեռք բերեն:

Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է լինեն համայնքաբնակների նկատմամբ հանդուրժող, բարի: Գիտակցեն, որ մարդիկ իրենց կողմից մատուցված որակյալ ծառայության են սպասում:

ՖԽ քննարկման մասնակից

- Մշակույթի տան կառուցում, որը հնարավորություն կտա երիտասարդներին զարգացնելու իրենց կարողությունները:
- Զբոսայգու կառուցում երեխաների համար:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

- **Առաջնային կարիքներ** –խոցելի խմբերի կենսական նշանակության գլխավոր կարիքներն են՝ կացարան, սնունդ, հագուստ, հիմնարար ծառայություններ
- **Գնահատողական հետազոտություն** – որակական հետազոտություն է, որը միտված է թիրախ համայնքներում խոցելի խմբերի կարիքների բացահայտման և գնահատմանը:
- **Լրացուցիչ, հատուկ ծառայություններ** – Խոցելի խմբերին ուղղված համակարգված վաղ միջամտության և աջակցության ծառայություններն են:
- **Խոցելի խումբ** - հասարակության ցանկացած խումբ կամ մաս, որի համար ավելի մեծ է խտրական գործելակերպերի, բռնության, բնական կամ բնապահպանական աղետների ենթարկվելու, կամ տնտեսական բարդությունների բախվելու վտանգը, քան պետության սահմաններում հասարակության այլ խմբերի համար: Սույն հետազոտության շրջանակներում խոցելի խումբ են հանդիսանում սոցիալապես անապահով ընտանիքները, աղքատության ընտանեկան նպաստ ստացողները, հաշմանդամները, տարեցները, հաշմանդամ երեխա ունեցող անձինք:
- **Ծառայությունների ծածկույթ** – մատուցվող ծառայությունների՝ տարածքային ծածկողականությունը:
- **Ծառայությունների համապատասխանելիություն** – մատուցվող ծառայությունների՝ բնակչության կարիքների համապատասխանելիությունը:
- **Ծառայությունների հասանելիություն** – մատուցվող ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակչության համար:
- **Ծրագրային թիրախ համայնքներ** – ծրագրի շրջանակում նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա ընտրված համայնքներ: Սույն հետազոտության ծրագրային թիրախ համայնքներն են՝ Մեծամոր, Արմավիր, Մրգաշատ (Արմավիրի մարզ),Գյումրի, Մարմաշեն (Շիրակի մարզ), Գորիս, Սիսիան, Տաթև (Սյունիքի մարզ), Իջևան, Նոյեմբերյան (Տավուշի մարզ):
- **Կորպորատիվ պատասխանատվություն** –տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումների հայտանբերումը, որը շահավետ է և՛ համայնքի, և՛ պետության համար: Սույն հետազոտություն շրջանակում փորձ է արվել բացայատելու նման պրակտիկայի առկայությունը թիրախ համայնքներում:
- **Համայնքային նախաձեռնողական խմբեր** – դրանք այն խմբերն են, որոնք սովորաբար ձևավորվում են համայնքի խնդիրների, հետագա զարգացման և այլ հարցերի նկատմամբ ոչ անտարբեր և ակտիվ բնակիչների կողմից: Սույն հետազոտության շրջանակում փորձ է արվել բացահայտել յուրաքանչյուր թիրախ համայնքի ակտիվ բնակչությանը՝ ներգրավելով թե՛ կարիքների գնահատման գործընթացին, թե՛ ծրագրի միջոլորտային, միջգերատեսչական խմբերի կազմում:
- **Համընդհանուր ծառայություն** - կանխարգելիչ բնույթ ունեցող ծառայություն, որը նախատեսված է բոլորի համար և նպատակ ունի ապահովելու կյանքի ցանկալի որակ և պայման:
- **Պետական պատվերների ծառայություն** – պետության կողմից բնակչության համար մատուցվող աջակցությունը:
- **Սոցիալական ծառայություն** - Սոցիալական ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են՝

ուղղված՝ 1) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի բավարարմանը և (կամ); 2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) բնականոն կենսագործունեության ապահովմանը և (կամ); 3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն:

- **Սոցիալական ծառայությունների մատչելիություն** – մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը բնակիչների՝ հատկապես խոցելի խմբերի համար: Մատչելիությունը գնահատվում է երկու կատեգորիայով՝ ծառայության ֆիզիկական մատչելիություն և ծառայության առաջարկվող արժեքը որքանով է մատչելի համայնքի բնակչության համար:
- **Սոցիալական կարիք** - կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի)՝ իր սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայություն կամ ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար հիմքերի առկայություն.
- **Տարածքային սոցիալական ծրագիր** – մշակվում է պետական, տեղական ինքնակառավարման, մասնավոր և քաղաքացիական հասարակության հատվածների հնարավոր լայն համագործակցությամբ, որին կարող են մասնակից դառնալ տվյալ մարզում (տարածաշրջանում) գործող առողջապահական, կրթական և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները:
- **Տեղական սոցիալական պլան** - ՏՍՊ-ում արտացոլված են համայնքի սոցիալական ոլորտների խնդիրներն ու կարիքները, և դրանք մեղմելու հնարավոր ուղղությունները՝ թիրախ ունենալով երեխաներին, կանանց, սոցիալապես անապահով և հատուկ կարիքներով խավերին:

# ԲԱԺԻՆ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## 1.1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտության նպատակը Ծրագրի թիրախային համայնքներում խոցելի խմբերի կարիքների գնահատումն է և առկա սոցիալական ծառայությունների՝ այդ կարիքների համապատասխանության պարզաբանումը:

Կարիքների գնահատման ուսումնասիրությունը թույլ կտա մշակել այնպիսի սոցիալական ծրագրեր, որոնք համապատասխան կլինեն համայնքի իրական սոցիալական կարիքներին՝ թիրախավորելով խոցելիության բազմաշերտ խնդիրները:

Կարիքների գնահատման և առկա ծառայությունների քարտեզագրման արդյունքում ստացված տվյալները մի կողմից կօգտագործվեն որպես հետագա տեղական սոցիալական պլանների և բյուջեների մշակման հիմք, մյուս կողմից՝ յուրաքանչյուր թիրախային տարածաշրջանի համար կստեղծվի գործող ծառայությունների վերաբերյալ ընդհանուր և մատչելի թվայնացված քարտեզ:

## 1.2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կարիքների գնահատումը անդրադառնում է հետևյալ հիմնական հարցերին.

1.Հետազոտվող թիրախային համայնքներում որո՞նք են բնակչության խոցելի խմբերի սոցիալական հիմնական կարիքները և առաջնահերթությունները:

2.Որքանո՞վ են գոյություն ունեցող ծառայությունները թիրախավորում այդ կարիքներին:

3.Ինչպիսի՞ նպատակային ծառայությունների կարիք կա:

## 1.3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կարիքների գնահատումը իրականացվել է 1) **փաստաթղթերի ավանդական վերլուծության, 2) փորձագիտական հարցումների, ինչպես նաև 3) ծառայություններից օգտվողների հետ ֆոկուս խմբային քննարկումների** միջոցով:

**Փաստաթղթերի ավանդական վերլուծություն**

Հայաստանում տեղական սոցիալական պլանի մշակման գործընթացներին նպաստող կամ խոչընդոտող հիմնական օրենսդրական և միջավայրային գործոնները պարզելու նպատակով իրականացվել է համապատասխան իրավական փաստաթղթերի, այս բնագավառում առկա ուսումնասիրությունների, հետազոտությունների հաշվետվությունների և այլ փաստաթղթերի երկրորդային վերլուծություն: Այն ի մի է բերված որպես առանձին զեկույց և որպես հավելված այս փաստաթղթին:

**Ֆոկուս խմբային քննարկումներ համայնքի թիրախ խմբերի ներկայացուցիչների հետ**

Ֆոկուս խմբերի քննարկման ձևաչափը կիրառվել է, որպեսզի հնարավոր լինի հասկանալ, թե որքանով են թիրախ համայնքների բնակչության տարբեր խոցելի խմբերի սոցիալական կարիքները բավարարվում:

Ֆոկուս խմբերի քննարկումները, մասնավորապես, ներառել են հետևյալ թեմաները. ինչպիսի՞ սոցիալական կարիքներ ունեն խոցելի խմբերը, ինչպե՞ս են խոցելի խմբերի սոցիալական կարիքները բավարարվում պետական/ոչ պետական դերակատարների կողմից տեղական,

մարզային և ազգային մակարդակներում, ինչպիսի՞ն են ֆոկուս խմբի մասնակիցների ընկալումները առկա սոցիալական ծառայությունների վերաբերյալ և որքանո՞վ են բավարարված. խոցելի խմբերի համար սոցիալական ինչպիսի՞ ծառայություններ են անհրաժեշտ՝ իրենց առաջնային սոցիալական կարիքները բավարարելու համար՝ առաջնահերթություններին համապատասխան:
Ֆոկուս խմբի յուրաքանչյուր քննարկման ընթացքում ներգրավել է շուրջ 8-12 մասնակից, իսկ յուրաքանչյուր հանդիպում տևել 1.5--2 ժամ: Յուրաքանչյուր թիրախային համայնքում իրականացնել է ընդհանուր առմամբ 4-ական ֆոկուս խումբ քննարկում, ընդհանուր առմամբ՝ **40** ֆոկուս խումբ քննարկում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով **379 շահառու:**
Ֆոկուս խմբերի հիմնական թիրախ մասնակիցները եղել են հետևյալ խոցելի խմբերի ներկայացուցիչները.

1. Ծնողներ, ովքեր ունեն հաշմանդամություն ունեցող երեխա
2. Երեխաներ ունեցող խոցելի ընտանիքներ
3. «Աղքատության ընտանեկան նպաստ» համակարգում ընդգրկված ընտանիքներ
4. «Աղքատության ընտանեկան նպաստ» համակարգից դուրս մնացած ընտանիքներ
5. Հաշմանդամություն ունեցող անձինք
6. Տարեցներ և թոշակառուներ
7. Արցախյան պատերազմից տուժած խոցելի ընտանիքներ

Ֆոկուս խմբային քննարկման գործիքը տե՛ս Հավելվածում 1-ում :

**Փորձագիտական հարցում**

Սույն հետազոտության համար կիրառվել է նաև **փորձագիտական հարցման** գործիքը (տե՛ս Հավելված 2):
Իրականացվել է **51 փորձագիտական հարցում** առանցքային մասնագետների հետ թիրախային մարզերի համապատասխան համայնքներում (տե՛ս փորձագետների ցանկը Հավելված 3-ում):
Հարցազրույցները անցկացվել են տեղական և մարզային մակարդակներում պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև թիրախ համայնքներում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ:
Հարցազրույցների համար առավել նպատակահարմար թեկնածուների և կազմակերպությունների ցուցակը նախօրոք մշակվել է տեղական գործընկերների հետ սերտ համագործակցության արդյունքում՝ կիրառելով նաև Ձնակույտի մեթոդը:

## 1.4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Սույն հետազոտությունը իրականացվել է «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի թիրախ մարզերում՝ Արմավիրի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ ընդհանուր թվով 10 համայնքներում.

| | |
|---|---|
| **Տավուշի մարզ** | 1.Իջևան<br>2.Նոյեմբերյան |
| **Արմավիրի մարզ** | 3.Մեծամոր<br>4.Արմավիր<br>5.Մրգաշատ |
| **Շիրակի մարզ** | 6.Գյումրի<br>7.Մարմաշեն |

| | |
|---|---|
| **Սյունիքի մարզ** | 8.Գորիս<br>9.Սիսիան<br>10.Տաթև |

# ԲԱԺԻՆ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

## 2.1. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

### 2.1.1. ՄԵԾԱՄՈՐ

*Ընդհանուր տվյալներ*

| | |
|---|---|
| Բնակչության թիվ | 12,165 |
| Տնային տնտեսությունների թիվ | 3,014 |
| Երեխաների թիվ | 4,120 |
| Նպաստառու տնային տնտեսությունների թիվ | 109 |
| Տեղական սոցիալական պլանի առկայություն | ոչ |
| Համայնքային սոցիալական աշխատող | Այո |
| Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ | 2 |
| Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը | 37<br>(18-65 տարեկան՝ 29, 65+ տարեկան՝ 8) |
| Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| Խորին հարցազրույցներ | 4 (և ևս 8-ը՝ Մեծամորի շրջական համայնքներից, որոնք մտնելու են Մեծամորի՝ որպես խոշորացված համայնքի մեջ) |

*Համայնքի մասին*

Համայնքը հիմնադրվել է 1969 թվականին որպես ՀԱԷԿ-ը կառուցողների ժամանակավոր ավան, սակայն ներկա դրությամբ քաղաքի հանդեպ ՀԱԷԿ-ը կորպորոտիվ պարտավորություն չունի, քանի որ տարածքը մտնում է Մեծամորին հարակից համայնքի վարչական տարածքի մեջ, ինչպես նաև համայնքից ներգրավված աշխատակիցները շատ փոքր թիվ են կազմում:
1972-ին Մեծամորն ստացել է քաղաքային բնակավայրի կարգավիճակ, իսկ 1995-ից որպես քաղաք:

*Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները*

Համայնքում գործում է երկու դպրոց և երեք մանկապարտեզ՝ սփռված քաղաքի տարբեր հատվածներում (բացառությամբ քաղաքի 4-րդ թաղամասի, որը համայնքից «կտրված» առանձին թաղամաս կարծես լինի), երաժշտական դպրոց, մշակույթի տուն, մարզական

համալիր, պոլիկլինիկա, հիվանդանոց՝ «Մեծամոր ԲԿ-ն», փոստային բաժանմունք, 2001թ-ից էլ գործում է «Սուրբ Ղազար» եկեղեցին:
Համայնքի մանկապարտեզները ամեն տարի դեկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը փակվում են ջեռուցում չունենալու պատճառով: Այս խնդիրն ունեն նաև Մեծամոր խոշորացված համայնքի այլ վարչական տարածքներում՝ Այգեշատ, Ջանֆիդա, Բամբակաշատ և այլն: Կան նաև այլ վարչական տարածքներ, որտեղ ընդհանրապես չկան մանկապարտեզներ՝ Տանձուտ, Վարդանաշեն, Փշատավան, Արգավանդ: Սա լուրջ խնդիր է աշխատող ծնողների համար, քանի որ ծնողը կանգնում է երկընտրանքի առաջ՝ դուրս գալ աշխատանքից կամ դայակ վարձել, որը ֆինանսապես ձեռնտու չի ցածր աշխատավարձերի պատճառով:
Չնայած որ համայնքն ունի երաժշտական դպրոց և մշակութային տուն, համայնքում գործող մշակութային խմբակները վճարովի են և անապահով ընտանիքների երեխաները չեն կարողանում հաճախել պարապմունքներին՝ զրկվելով մշակութային կրթություն ստանալու հնարավորությունից:
Որոշ վարչական տարածքներում մշակույթի տները կամ հիմնանորոգման կարիք ունեն, կամ գործում են մասամբ, չունենալով ոչ մի մշակութային խմբակ՝ Փշատավան, Ջանֆիդա, Այգեշատ, Վարդանաշեն, Բամբակաշատ և այլն: Հարկ է նշել, որ «Ընտանիք և համայնք» ԲՀԿ-ն և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ն երեխաների համար մատուցում են անվճար ծառայություններ
Բնակիչները նշում են նաև, որ համայնքում չկան խաղահրապարակներ, ինչպես նաև ժամանցի վայրեր ո՛չ երեխաների, ո՛չ տարեցների համար: Շենքերի բակերը վերածվել են ավտակայանատեղիների, խաղահրապարակների տեղում հիմնականում կառուցվել են ավտոտնակներ, այդ իսկ պատճառով երեխաները ստիպված են խաղալ փողոցում: Միաժամանակ, Մեծամորը համեմատելով հարակից համայնքների հետ, հարցվողները նշում են, որ, օրինակ, ի տարբերություն Մեծամորի, Մրգաշատ գյուղում մշակույթի տան խմբակներն անվճար են: Անտեսված չեն նաև տարեցները. տարվա ընթացքում համայնքի տարեցների համար գյուղապետը կազմակերպում է ուղևորություն դեպի Սևան և Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր:

## ***Զբաղմունքը/ աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները***

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներով, մասնավորապես՝ դաշտում քաղհան անելով, բերք քաղելով, սածիլ տնկելով, բերքը արկղերում դասավորելով, ջերմոցում աշխատելով և այլն: Գյուղատնտեսական աշխատանքները սկսվում են ապրիլից և տևում՝ մինչև նոյեմբեր: Արդյունքում, այն ամիսներին, որոնց ընթացքում նշված աշխատանքները չեն կատարվում, բնակիչները ստիպված են սննդապահովումը և մնացած կենցաղային հարցերը հոգալ խանութներում պարտքեր կուտակելով, ինչպես նաև վարկեր և ապառիկներ վերցնելով: Վարկեր են վերցնում նաև բուժման համար: Նույնիսկ անվճար ուղեգիր ունենալու դեպքում պետք է վճարեն դեղորայքի համար: Գյուղատնտեսական վերոնշյալ աշխատանքներում հիմնականում ներգրավվում են կանայք, իսկ տղամարդիկ զբաղվում են արտագնա աշխատանքներով: Դաշտային աշխատանքներում մասնակցում են նույնիսկ 13 և ավելի տարեկան երեխաներ: Սեզոնային աշխատանքների արդյունքում բնակիչները չեն կարողանում վճարել կոմունալ ծառայությունների և այլ առաջնային կարիքները հոգալու համար:

Համայնքում գործում է մանր ու միջին բիզնեսը՝ հացաթխման փռեր, խանութներ, ղեղատներ, ռեստորոնային համալիրներ, որոնք սակայն շատ քիչ աշխատատեղեր են ապահովում

Վերջին տարիների ընթացքում համայնքում սկսել է **զարգանալ մանր ու միջին բիզնեսը**, սակայն մարդկանց սոցիալական վիճակում փոփոխություն չի նկատվում, քանի որ թանկացել են առաջին սպառման ապրանքները, աշխատանքի դիմաց վարձատրությունն էլ ցածր է:

*Ինչպես հարցվողներից մեկը նշեց, «Այնպես է ստացվում, որ աշխատում ենք, որ վարկ փակենք: Ուրիշ ոչ մի բանի համար փողը չի հերիքում»:*

## ***Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը***

Խոցելի խմբերի կարիքների բավարարմանն ուղղված տարբեր ծրագրեր և ծառայություններ են գործում, սակայն վերջիններիս աշխատանքում բազմաթիվ բացեր կան:

Սոցիալական խնդիրներին աջակցելու նպատակով Մեծամոր համայնքի ֆինանսական միջոցները սահմանափակ են: Համայնքի բյուջեի 1.4% է հատկացվում սոցիալական ոլորտին (առողջապահություն, կրթություն, սոցիալական)/ :

Այդ միջոցներից տրվում է նյութական աջակցություն գումարի տեսքով անապահով ընտանիքներին, իսկ առողջապահական ծրագրեր չեն իրականացնում:

Արմավիրի մարզպետարանի առողջապահության բաժինը նախարարության հետ համագործակցելով պետպատվերի շրջանակներում՝ ուղղորդում է հիվանդներին անվճար բուժման, կամ մասնակի վճարումներով բուժման

Տարեցների կարիքների բավարարմանն ուղղված ծառայություններ համայնքում չկան: Միայն երբեմն եկեղեցական տոների, պետական տոների առթիվ «Ընտանիք և համայնք» ՀԿ-ում կազմակերպվել է հյուրասիրություն և համերգային ծրագիր տարեցների համար:

*Մեջբերում. «Համայնքապետարանի, մարզպետարանի կողմից ոչ մի օգնություն չենք ստացել և չենք էլ ցանկանում դիմել այդ կառույցներին օգնության նպատակով: Նրանք մեր մասին շատ լավ տեղեկացված են, առանց դիմելու թող օգնեն»:*

Օգնել է «Հույսի Մեծամոր» ՀԿ-ն ՝տրամադրելով տետրեր, գրենական պիտույքներ: Օգնել են ավազանու անդամներից մի քանիսը իրենց ընկերների հետ:

Բացակայում է քաղաքի տնակային հատվածը և 4-րդ թաղամասը քաղաքին կապող հանրային տրանսպորտը: Մեծամոր քաղաքի ծայրամասում (դեպի Ակնալիճ գյուղ տանող ճանապարհին) գտնվում է տնակային թաղամասը, որը բավականին կտրված է քաղաքից, չի աշխատում որևէ տրանսպորտ, չկան մանկապարտեզներ, խանութներ: Բնակիչները մեծ դժվարությամբ են կարողանում կազմակերպել երեխաներին ամեն օր մանկապարտեզ և դպրոց տանելու հարցերը: Տրանսպորտային միջոցի աշխատելու պարագայում բավականին կմեղմվեր այս խնդիրը:

Մեծամորը Արմավիր մարզկենտրոնին կապող տրանսպորտային միջոցը քաղաքի միջով չի անցնում:

## ***Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը***

Համայնքում գործում են երկու հասարակական կազմակերպություններ «Հույսի Մեծամոր» ՀԿ-ն և «Ընտանիք և Համայնք» բարեգործական Հկ-ի Մեծամորի համայնքային զարգացման կենտրոնը

- «Հույսի Մեծամոր» ՀԿ-ն զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով՝ նպաստելով շահառուների կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը։

  ՀԿ-ն 2020թ. հաշմանդամների համար ունեցել է պատվիրակված ծառայություն ՀՀ ԱՍՀՆ կողմից 1 տարվա կտրվածքով: Իսկ 2021թ-ին ծրագիրը հավանության չի արժանացել և բաց է մնացել: Սակայն ունեն քաղաքապետարանի աջակցությունը, որը նվազագույն ծառայություն տրամադրելու հնարավորություն է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց: Քաղաքապետարանը ֆինանսավորում է ՀԿ-ի 2 աշխատակցի աշխատավարձը: Սակայն դա բավարար չէ հաշմանդամ երեխաների խնդիրները լուծելու համար:Ներկա դրությամբ «Հույսի Մեծամոր»-ը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավորություն չունի մատուցել հոգեբանի, լոգոպեդի ծառայություն, ինչպես նաև կազմակերպել ամենօրյա խնամքի ծառայություն, որի կարիքն ունեն հաշմանդամները:

- «Ընտանիք և Համայնք» բարեգործական Հկ-ն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, խոցելի ընտանիքներին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ երեխաների ցերեկային խնամքի կազմակերպում, սոցիալ հոգեբանական աջակցություն, կրթա-մշակութային ծառայություն:

  Հկ-ն ֆինանսավորվում է Թուֆենկյան բարեգարծական հիմնադրամի կողմից: «Ընտանիք և Համայնք» Բարեգործական Հկ-ն ՀՀ ԱՍՀՆ կողմից 2020թ ևս ունեցել է պատվիրակված ծառայություն կազմակերպելու ԿԴԻՀ երեխաների ցերեկային խնամքը՝ մատուցելով սոցիալ-հոգեբանական աջակցություն, կրթա-մշակութային ծառայություն, որը շարունակվում է նաև 2021թ-ին:

*Ծրագրերի իրականացման հետ կապված փորձագետները նշում են* ֆինանսական միջոցների սղությունը կամ բացակայությունը, ինչպես նաև մասնագետների պակասը:
Համայնքում գործող ՀԿ-ների մասին բնակչությունը հնարավորություն ունի տեղեկանալու տարբեր աղբյուրներից՝ ՍԱՏԲ-ից, դպրոցից, իրենց երեխաների համադասարանցիներից, հարևաններից, Մեծամորի ոստիկանության ԱԳ բաժնից

## *Սոցիալական հիմնական խնդիրները՝ ըստ հարցվողների*

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Գործազրկության *տեսանկյունից* խոցելի են.

- 40-ից բարձր տարիք ունեցողները, հատկապես կանայք, քանի որ գործատուները հիմնականում ցանկանում են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ աշխատողների:

- հաշմանդամություն ունեցող անձինք, քանի որ գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, նույնիսկ աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանով:

- հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները: Համայնքում չկա այնպիսի ծառայություն, որ իրականացնի հաշմանդամություն ունեցող անձի խնամքը մինչև ընտանիքի անդամը աշխատանքից վերադառնա:
- Սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք նպաստ չեն ստանում, ինչպես նաև նրանք, ովքեր թոշակ կամ նպաստ չեն ստանում և տեղեկացված էլ չեն միանվագ և պարբերաբար տրամադրվող դրամական օգնություն ստանալու կարգի մասին:
- երիտասարդները – Համայնքում առկա աշխատատեղերի սղության և սահմանափակ հնարավորությունների պատճառով երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևան քաղաքում:
- Հարցվողները նշում են, որ համայնքում չկան մասնագիտական ուսուցման ծրագրեր հաշմանդամ երեխաների համար, որոնք հնարավորություն կտան հաշմանդամությանը համապատասխան որևէ հմտություն ձեռք բերել՝ հետագայում աշխատանք ունենալու նպատակով:

*Մեջբերում ծնողի խոսքից. «Մամա, դու մեծանալու ես, էլ չես լինելու: Մի բան կարո՞ղ ես ստեղծել, թեկուզ ավտոլվացման կետ: Ապերը ինձ կօգնի, ինքը փրփուրը կլցնի, ես՝ ջուրը, գոնե կոպեկներով հաց կառնեմ»:*

- Տարեցները ցանկություն ունեն աշխատելու, եկամուտ ստեղծելու, հասարակության լիարժեք անդամ զգալու և ինքնադրսևորվելու: Նրանք նշում են, որ օրինակ, եթե կարի մեքենաներ լինեն, սիրով կար կանեն:

*Տարեցները պատրաստ են նաև իրենց փորձով կիսվելու մյուսների հետ. «Ես Չեռնոբիլի աղետի վերականգնման աշխատանքների մասնակից եմ, պատերազմի վետերան, մշակում եմ խաղողի այգի, իմ փորձը պատրաստ եմ փոխանցել նրանց, ովքեր դրա անհրաժեշտությունն ունեն»:*

Այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ տարեցների թոշակը չի բավականացնում ինչպես առաջնային կարիքների բավարարմանը, այնպես էլ դեղերի ձեռքբերման և հիվանդությունների բուժման՝ ուղղված առողջության պահպանմանը և նրանց կյանքի որակի բարելավմանը:
Որոշ վարչական տարածքների ղեկավարներ նշում են, որ տարեցներին հատկացրել են առանձին սենյակ, որտեղ հատկապես ձմռան ամիսներին հավաքվում են տարեցները, սակայն խոսքը միայն տղամարդկանց մասին է, տարեց կանայք չունեն հավաքվելու և որևէ բանով զբաղվելու վայր:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Առողջապահական ոլորտը զարգացած չէ բնակիչների սպասարկման համար: Պատճառը «Մեծամոր» ԲԿ-ի սարքավորումներով թերզինվածությունն է, և պոլիկլինիկայում մասնագետների պակասը, որը լրացուցիչ դժվարություն է ստեղծում հիվանդի հետազոտման համար:
- Բնակիչների մոտ խնդիր է առաջացնում պոլիկլինիկայի՝ քաղաքից հեռու գտնվելը, հատկապես երբ անձը ունի տեղաշարժման խնդիր և պետք է հատի մայրուղին՝ պոլիկլինիկա հասնելու համար: Ավտոմեքենաները բարձր արագությամբ Արմավիր-

Երևան մայրուղիով վարում են, և նույնիսկ հետիոտնային գծի առկայությունը թույլ չի տալիս, որ կանգնեն և զիջեն ճանապարհը հետիոտնին: Հարցը նույնիսկ ավագանիի նիստին է քննարկվել, մի քանիսն առաջարկել են վերգետնյա անցում կառուցել, սակայն դեռևս ոչինչ չի արվել հարցի լուծման առնչությամբ:

***Առաջարկներ***

Հարցվողները կարևորում են համայնքում ակտիվ մարդկանցից կազմված խմբի ձևավորումը: Խմբի հիմնական նպատակը պետք է լինի համայնքի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումների կազմակերպումը և ներդրումների ներգրավումը:

*Համայնքի խոցելի խմբերի կարիքների բավարարման ուղղությամբ հարցվողներն առաջարկել են հետևյալ ծրագրերը.*

- Հաշմանդամների և մեծերի, և երեխաների ցերեկային կենտրոնի ստեղծում, որը կապահովի հաշմանդամի զբաղվածությունը, հնարավորություն կտա խնամողին աշխատելու: Այս դեպքում խնամողը ոչ մեկից գումար չի պահանջի:
- Տարեցների համար ժամանցի ու զբաղվածություն ցերեկային կենտրոնի ստեղծում:
- Միայնակ ծերերի համար տնային խնամքի ծառայության
- Սպորտային համալիրի վերանորոգումն ու շահագործումը:
- Երիտասարդների համար արհեստների ուսուցման ծառայության ստեղծում:
- Մանկական ժամանցի և զարգացման կենտրոնների ստեղծում:
- Երեխաների համար խաղահրապարակի կառուցում:
- Կանանց ձեռքի աշխատանքների կենտրոնի հիմնադրում, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

## 2.1.2. ԱՐՄԱՎԻՐ

| | |
|---|---|
| Բնակչության թիվ | 37,053 |
| Տնային տնտեսությունների թիվ | 10,046 |
| Երեխաների թիվ | 8,919 |
| Նպաստառու տնային տնտեսությունների թիվ | 699 |
| Տեղական սոցիալական պլանի առկայություն | Ոչ |
| Համայնքային սոցիալական աշխատող | Այո |
| Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ | 4 |
| Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը | 49<br>(18-65 տարեկան՝ 35, 65+ տարեկան՝ 14) |

| | |
|---|---|
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 6 |

***Համայնքի մասին***

Արմավիրը քաղաքային համայնք է Արմավիրի մարզում: Արմավիրը Հայաստանի առավել երիտասարդ քաղաքներից է, նախկինում եղել է Հոկտեմբերյանի շրջանի կենտրոնը, ապա 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո հանդիսանում է Արմավիրի մարզկենտրոնը: Նախկինում ունեցել է Սարդարաբատ, Սարդարապատ, Հոկտեմբերյան անվանումները: Սարդարապատը Հոկտեմբերյան է վերանվանվել 1935 թ-ին ի պատիվ Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության, իսկ 1990 թ-ից վերանվանվել է Արմավիր: Այստեղ Երևանի խաները կառուցել են մի բերդ և այն կոչել Սարդարապատ, վերջինս հանդիսացել է Երևանի խանության Սարդարապատի մահալի գլխավոր ամրոցը և կենտրոնը: Սա եղել է խանության կենտրոն Երևանից հետո երկրորդ ամուր բերդը: 1828-1829 թթ այստեղ վերաբնակեցվել են Արևմտյան Հայաստանից և Պարսկահայաստանից գաղթած բնակիչներով: Քաղաքն ունեցել է զարգացած արդյունաբերություն: Արդյունաբերության մեջ հատկապես մեծ տեսակարար կշիռ են ունեցել ագրոարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները: Գործել են մի շարք պահածոների, գինու, կոնյակի գործարաններ: Ունեցել է խորդենու վերամշակման գործարան, միակը ամբողջ Հայաստանում: 1966 թ-ից գործել է կոնյակի գործարանը: Արտադրվել են նաև Վերմուտ տեսակի գինիներ: Ունեցել է նաև կարի արտադրամաս: Ծանր արդյունաբերությունից զարգացած է եղել շինանյութերի արտադրությունը: Հողային ֆոնդի մոտ 75% օգտագործվում է որպես բնակավայրի հողեր, որի կեսը տնամերձ հողերն են: Դրանք հանդիսանում են բանջարանոցներ և պտղատու, խաղողի այգիներ: Զբաղվել են տեխնիկական մշակաբույս հանդիսացող խորդենու վերամշակմամբ, որից ստանում են եթերայուղեր:

***Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները***

Արմավիր համայնքը հանդիսանում է տրանսպորտային հանգույց: Երևան քաղաքից գտնվում է 47-48 կմ հեռավորության վրա: Արմավիր համայնքը Արմավիրի մարզկենտրոնն է, որտեղ տեղակայված են պետական հիմնական կառույցները՝ մարզպետարան, կադաստր, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, նոտարական գրասենյակներ, սոցիալական տարածքային գործակալություն, միջին մասնագիտական կրթական հաստատություններ, համայնքապետարան, էլեկտրացանց, Հայփոստ ՓԲԸ-ն, ինչպես նաև ոչ պետական կառույցներ, ինչպիսիք են «Հայռուսգազարդ»-ը, «Վիոլա Ջուր» ընկերությունը: Այս կառույցներն ապահովում են որոշակի ֆինանսական մուտքեր համայնքի բյուջե: Համայնքը խիստ կապակցված է հարակից գյուղական համայնքների հետ: Համայնքը զարգացման առումով մարզում առաջատար է, զիջում է միայն Էջմիածին համայնքին, որտեղ զբոսաշրջության, հոգևոր կենտրոն լինելու, մայրաքաղաքին ավելի մոտ լինելու հաշվին հնարավոր է լինում իրականացնել ավելի շատ սոցիալական և զարգացման ծրագրեր: Արմավիրում գործում է Ս.Գրիգոր Նարեկացի եկեղեցին, ինչպես նաև այլ կրոնական կազմակերպություններ: Համայնքն ունի չորս պետական քոլեջ, երեք արվեստի դպրոց, մեկ

երաժշտական դպրոց, 7 հիմնական և 2 ավագ դպրոց, 11 մանկապարտեզ, չորս գրադարան, շախմատի դպրոց, երեք մարզադպրոց, չորս ակտիվ հկ, Արմավիրում է գտնվում Հայաստանում մեծությամբ երկրորդ կենդանաբուսաբանական այգին։

Համայնքը մինչ 44-օրյա պատերազմը հավակնում էր դառնալ տարվա երիտասարդական մայրաքաղաք։

## *Զբաղմունքը/ աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները*

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են սեզոնային աշխատանքներով, գյուղատնտեսությամբ, որը սկսվում է գարնան սկզբից և ձգվում մինչև դեկտեմբեր։

Համայնքում գործում են մի քանի մեծ և փոքր չրանոցներ, հացաբուլկեղենի արտադրամասեր, կաթնամթերքի փոքրիկ արտադրամաս, հարսանյաց և սգո սրահներ, մանկական զարգացման և ժամանցի կենտրոններ, մեծ և փոքր խանութներ, շինարարական արտադրամասեր։ Տասնամյակներ առաջ՝ Խորհրդային շրջանում, քաղաքում գործել են տարբեր գործարաններ և արտադրամասեր՝ կոնյակի, ապակու, կաթի, մոլիբդենի, ռելեի և այլն։ Քաղաքում մինչ այսօր գործում է «Արարատ» գինու և կոնյակի գործարանը, որն այսօր ավելի շուտ ոչ թե գործարան է, այլ պահեստարան։ Աշխատակազմն այնտեղ թվով սահմանափակ է, նոր աշխատատեղեր առայժմ չեն բացվում։ Արմավիրում գործում է «Նուկ» հակասրճարանը, որը գործում է հասարակական հիմունքներով և, որի հասույթն ուղղվում է համայնքի երիտասարդական ծրագրերի իրականացմանը։ Արմավիրում գործում է «Մարտիրոսյան» կավագործության արվեստանոցը, որն առանձնահատուկ վայր է թե՛ արմավիրցիների, թե՛ զբոսաշրջիկների համար և որն ապահովում է որոշակի աշխատատեղեր։

## *Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը*

Արմավիրի համայնքապետարանը և մարզպետարանը իր հնգամյա պլանում ներառում է նաև սոցիալական խնդիրները, օրինակ՝ համայնքապետը այս տարվա կտրվածքով նախատեսել է 5մլն դրամ, իսկ ավագանին՝ 3մլն դրամ՝ սոցիալական խնդիրների համար, բացի դրանից 6 ամիսը մեկ անգամ գումարի տրամադրման համար նպաստառու կամ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են դիմել մարզպետարան միանվագ գումարային աջակցության համար։ Դա կախված է խնդրի խորությունից։ Իհարկե, առաջին սոցիալական շտապօգնությունը բնակիչներին գալիս է տարածքային միասնական սոցիալական ծառայությունից, որն իրականացնում է աղքատության նվազեցմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր։ Կառույցի կողմից իրականացվում է խորքային գնահատում և հնարավոր ռեսուրսների ներդնում, բայց ցավալիորեն պետք է նշել, որ այդ ռեսուրսները սուղ են։ Կառույցը նպատակ ունի ներդնել կամավորական դպրոցի գաղափարը, որը կօգնի ոլորտի սկսնակ մասնագետներին փորձ ձեռք բերել և դրանով իսկ աջակցել համայնքին։
Եվ նաև տարբեր ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվում է սնունդ, հիգիենիկ պարագաներ, հագուստ։ Կազմակերպությունները հիմնականում ցուցակների համար դիմում են համայնքապետարան, բայց մեծ իմաստով աշխատանքը ճիշտ համակարգելը բարդ է, քանի որ չկա ընդհանուր բազա, որտեղ կերևա, թե որ շահառուն որ կազմակերպությունից ինչ և քանի անգամ է ստացել։ Արդյունքում ստացվում է, որ ավելի ակտիվ շահառուներն ավելի շատ են օգտվում ծառայություններից, իսկ պասիվները,

հաճախ նույնիսկ չեն էլ իմանում, որ նման բան կա: Ծրագրեր իրականացրել են ՀԿ-ներից՝ «Արմավիրի զարգացման կենտրոնը», «Երիտասարդ ավանգարդը», «Առաքելություն Հայաստանը», «Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ը, «Ընտանիք և համայնք» հկ-ն: Վերջին շրջանում (մոտ հինգ տարի) սոցիալական աջակցության դիմումներն ավելի են շատացել, բայց դժվար է ասել, որ դա պայմանավորված է աղքատության ավելացումով: Դա ավելի շատ կապված է մարդկանց իրազեկվածության բարձրացմամբ, ավելի շատ են դիմում, պահանջատեր են, երբեմն դիմում են այնպիսի մարդիկ, ովքեր այնքան էլ սուր խնդիրներ չունեն և կարող են ինչ-որ կերպ լուծել իրենց խնդիրները: Ծառայություններ տրամադրվում է բնակիչներին, բայց բյուջեն սուղ է, երբեմն կառույցի աշխատակիցներն իրենց անձնական կապերով են փորձում լուծել բնակիչների խնդիրները: Եթե ամփոփելով ասենք, կնշենք, որ մատուցվող ծառայություններ կան կոնկրետ առողջապահության ոլորտում, բայց պետության կողմից իջեցված պետպատվերը ոչ բոլորին է հասու, քանի որ կան կոնկրետ չափորոշիչներ, թե ում համար է նախատեսված և ինչ քանակով:
Համայնքում տարեցների խնամքի հետ կապված շատ խնդիրներ կան: Այս պահին ԱՋԿ հկ-ն իրականացնում է ծրագիր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ, դա տարեցների խնամքի ծրագիր է: Առաջնային գնահատումով համայնքում հայտնաբերվել է 150 միայնակ տարեց, կազմվել է աշխատանքային խումբ, որի կազմում են սոցիալական աշխատող, հոգեբան, բուժքույր: Իհարկե, այդ թիվը մի մասն է, տարեցները համայնքում ավելի շատ են: Ընդհանուր առմամբ, տարեցների տնտեսական վիճակը անբավարար է, ունեն զբաղվածության խնդիր, հիմնականում տանը ներփակված են, լավագույն դեպքում հարևաններն են փորձում որոշակի աջակցություն ցույց տալ:
Հայտնաբերված տարեցներին առաջարկվում է ծառայությունների փաթեթ, որի մեջ մտնում է բժշկական օգնություն, կենցաղային սպասարկում, հոգեբանական խորհրդատվություն: Ցերեկային կենտրոնների առկայության դեպքում շատ խնդիրներ կլուծվեն:
Համայնքը համագործակցում է հկ-ների հետ, երիտասարդական նախաձեռնությունների հետ: Համայնքապետը նախապես հայտարարել է, որ ունեն հատուկ ֆոնդ՝ լավ ծրագրերի իրականացման համար: Այդ փոքրիկ ֆոնդը նախկինում տրամադրվում էր կոնկրետ մեկ հկ-ի, իսկ հիմա դա արվում է մրցութային կարգով: Կոնկրետ նախորդ տարի բոլոր գործող հկ-ները միացան իրար, ծրագիր ներկայացրեցին և ստացան ֆինանսավորում իրականացնելու իրենց գաղափարը: Դիմում են նաև երիտասարդական խմբեր, նախաձեռնություններ, ստանում են 100 000դ ֆոնդով գումար և ինչ-որ հետաքրքիր գաղափար կյանքի կոչում: Դա էլ կա համայնքում, որ պետք է գրագետ կազմակերպել, լինել իրազեկված, այդ առումով շատ ակտիվ է «Արմավիրի զարգացման կենտրոն» հկ-ն, «Միտք» հկ-ն, «Ընտանիք և համայնք»-ը և «Երիտասարդական ավանգարդը»: Համագործակցություն կա հարակից գյուղական համայնքների հետ: Դա վերաբերվում է ճանապարհների հիմնանորոգմանը, մանկապարտեզների կառուցմանը, կահավորմանը և այլ ծրագրային համագործակցություններ: Կա նաև «Դիակոնիա» նախաձեռնությունը, որի ֆինանսավորումը գալիս է Շվեցարիայից, իրականացնում են պարենային ծրագրեր, տնային կենդանիների՝ մասնավորապես կովերի տրամադրման ծրագրեր: Վերջին շրջանում այդ առումով բնակիչներից մեզ բողոք հասավ այն առումով, որ ինչու իրենց բոլորին օգնության փաթեթները չի հասնում հավասարաչափ: Քանի որ համայնքի բնակիչները միմյանց ծանոթ են կամ ծանոթների ծանոթներն են, ցանկացած նորություն արագ է տարածվում: Բայց իրենք տեղյակ չեն լինում, որ գոյություն ունեն տարբեր ֆոնդեր, տարբեր կազմակերպություններ, տարբեր փաթեթներ տրամադրողներ, որոնք ունենում են

քանակային սահմանափակումներ: Այս հանգամանքը երբեմն խառնաշփոթ է ստեղծում և բարդացնում համայնքապետարանի աշխատանքը:

## *Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը*

Արմավիրում ակտիվ են «Արմավիրի զարգացման կենտրոն» հկ-ն, «Միտք» հկ-ն, «Ընտանիք և համայնք»-ԲՀԿ-ն, «Երիտասարդական ավանգարդը» հկ-ն, Հայկական Կարկիր Խաչը: Ակտիվ աշխատում է նաև «Դիակոնիա» նախաձեռնությունը, որի ֆինանսավորումը գալիս է Շվեցարիայից, իրականացնում են պարենային ծրագրեր, տնային կենդանիների՝ մասնավորապես կովերի տրամադրման ծրագրեր: Այս կառույցներն հիմնականում ֆինանսավորվում են արտաքին՝ միջազգային աղբյուրներից, սակայն երկու հասարակական կազմակերպություններ («Արմավիրի զարգացման կենտրոն» հկ, «Երիտասարդական ավանգարդը» հկ) իրենց ծրագրերն իրականացնում են պետական համաֆինանսավորմամ

## *Սոցիալական հիմնական խնդիրները՝ ըստ հարցվողների*

Համայնքի խնդիրները բազմաթիվ են: Սոցիալական խնդիրները հիմնականում կապված են գործազրկության, իրազեկվածության պակասի, մտածողության խնդիրների, կենսամակարդակի հետ: Խնդիրների շարքում են ընտանեկան բռնությունը, կանանց հիմնախնդիրները, տարեցների խնդիրները, հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները, երիտասարդների զբաղվածության խնդիրը:

Ինչպես արդեն նշվել էր, համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են սեզոնային աշխատանքներով, գյուղատնտեսությամբ, որը սկսվում է գարնան սկզբից և ձգվում մինչև դեկտեմբեր: Սոցիալական խնդիրներից ելնելով ծանր աշխատանքների մեջ ներգրավվում են տարեցներ, հղի կանայք, երեխաներ, լուրջ առողջական խնդիր ունեցողներ: Համայնքը իր բյուջեում նախատեսում է միջոցներ տրամադրել սոցիալական աջակցության համար: Հիմնականում դիմում են ծայրահեղ աղքատության մեջ գտնվողները, առողջության լուրջ խնդիր ունեցող բնակիչները: Սահմանված են հստակ չափանիշներ, որ աջակցությունից կարող են օգտվել ընտանեկան նպաստ ստացող կամ հաշմանդամության թոշակ ստացող անձինք: Սակայն դա համակարգված լուծումների չի բերում, քանի որ միջգերատեսչական կապերը այնքան էլ  զարգացած չեն, դեռևս համանքում մնում են տարբեր սոցիալական ծառայություններից դուրս մնացած բնակիչները, ում խնդիրները հայտնաբերված չեն: Խնդիր է նաև երեխաների կրթությունից դուրս մնալը, հաճախ ծայրահեղ աղքատության մեջ գտնվող ընտանիքներն իրենց անչափահաս երեխաներին ուղարկում են գյուղատնտեսական աշխատանքների:

Խոսելով համայնքի կարիքների մասին, հարցվողներն առանձնացրին մի քանիսը՝

**Տարեցների խնամքի և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի կենտրոնների բացակայությունը** – հարցվողները նշում են, որ համայնքում խոցելի են միայնակ տարեցներն ու հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներն ու իրենց ընտանիքները: Պետական մակարդակով էլ չկա հոգածություն տարեցների նկատմամբ. *«Չէ՞ որ տարեց մարդու համար շատ կարևոր է մարդկային շփումը, ժամանակին դեղեր ընդունելը, խնամքը»*,- նշում է հարցվողներից մեկը: Իրենք լսել են, որ Կարմիր Խաչը արել է ծրագրեր տարեցների համար վերջին

տարիներին: Իսկ հաշմանդամություն ունեցող երեխաները դեռևս շարունակում են պիտակավորվել, արժանանալ խտրական վերաբերմունքի:
**Մասնագիտական առողջապահական ռեսուրսի, որակի պակասը** – Հարցվողների խոսքով, եթե անհրաժեշտություն կա՝ կազմակերպելու բուժօգնությունը, պետք է ստիպված ծախսեր կատարել և հասնել Երևանի համապատասխան բուժհաստատություն: Հատկապես նշվեց աչքի, ողնաշարի խնդիրների դեպքերը: Տեղում չկա որակյալ ծառայություն, եթե կա էլ, բավականին թանկ արժե: Համայնքում չկա մանկական հոգեբույժ, նյարդաբան:
**Ուղղորդման** և **մասնագիտական աջակցության խնդիրը** – Մասնակիցները նշում են, որ տեղեկացված չեն, թե որ խնդրի դեպքում ի՞նչ կառույցի է պետք դիմել, սկսած ընտանեկան բռնությունից, ամուսնալուծությունից, կրթական և այլևայլ խնդիրներից մինչև սոցիալական խնդիրներ: Պետք է լինեն ծառայություններ, որոնք մարդուն ուղղորդում են դեպի ճիշտ մասնագետներ կամ կենտրոններ: Հարցվողներից մեկը նշում է, որ իր ընտանիքը զրկվել է նպաստից, քանի որ հայտնաբերել են իրենց անունով գրանցված մեքենա, որն իրականում հին է և ոչ պիտանի:
*Միևնույն ժամանակ նշում են. «Կան մարդիկ, ովքեր շատ ճարպիկ են, ամեն ինչ ունեն, բայց իրենց անունով չի և նրանք նպաստ են ստանում: Որքանո՞վ է դա արդար: Եվ դրան զուգահեռ էլ կա այն խնդիրը, որ սոցիալական աշխատողը նպաստ նշանակելու համար տնայց է անում, տեսնելով տան մեջ «լավ ապրանքներ», ասում է, որ դու նպաստի կարիք չունես, բայց կան դեպքեր, որ այդ ապրանքները նվերներ են և ներկա պահին մարդը գտնվում է ծանր վիճակում»:*
Շահառուները շատ դեպքերում չեն տիրապետում նոր ծրագրերի մասին ինֆորմացիային, տարբեր տեղերից լսում են, բայց ամաչում են հաճախ զանգել սոցիալական ծառայություններ և տեղեկանալ:
**Երեխաների զարգացման կենտրոնների, խաղահրապարակների բացակայությունը** – Արմավիր քաղաքը մեծ է և ունի ընդամենը մեկ ոչ շատ մեծ խաղահրապարակ, մեկ հին կառուսել և նորաբաց մասնավոր կարուսելներ: Կանաչ գոտին բավարար չէ ամբողջ քաղաքի համար: Շենքերի բակերում մեքենաներ են տեղակայված, խաղալու տեղեր չկան: Չկան բավարար զարգացման, մշակութային, կրթական կենտրոններ: Այն, ինչ կա, բավականին թանկ է և ոչ բոլորի համար է հասանելի: Բակերում ավելի շատ մեքենաների համար կառուցված տնակներն են, քան խաղահրապարակները:
Մասնակիցները նշում են, որ մատուցվող սոցիալական ծառայությունները բավարար չեն համայնքի սոցիալական կարիքների բավարարման համար: Բացակայում են կամ հասանելի չեն հենաշարժողական, ակնաբուժական և այլ բուժօգնության ծառայություններ: Որոշ չափ հասանելի և բավարար է սոցիալական ապահովության ծառայության կազմակերպած ճամբարները, անվճար բուժպասարկումը, բայց նշում են, որ այդտեղ էլ, այնուամենայնիվ, գոյություն ունի խնամի-ծանոթ-բարեկամ տարբերակը:

## ***<u>Առաջարկներ</u>***

Քննարկման արդյունքում մասնակիցներն առաջարկեցին հետևյալը.
- Բացել տարեցների ժամանցի և խնամքի կենտրոն,
- Բացել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ,

- Բացել մասնագիտական ուղղվածության, ստեղծագործական կենտրոններ՝ կավագործություն, ասեղնագործություն, քանդակագործություն, թատրոն, երաժշտություն և այլն:
- Բացել կանանց ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները,
- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ծառայություն, խնամքի կենտրոն, որպեսզի ծնողները կարողանան աշխատել:
- Համայնքում գործող պետական և ոչ պետական կառույցների և բնակչության միջև անվստահության մթնոլորտը փոխելու համար հաճախ կազմակերպել հանդիպումներ ոլորտի մասնագետների և հիմնական շահառուների միջև, խրախուսել ձեռներեցությունը, նոր գաղափարները, աշխատասիրությունը:
- Համայնքի ծայրամասային թաղամասերում ուշադրություն դարձնել վաղ դեռահասության փուլում գտնվող երեխաների վրա: Նրանց արտադպրոցային կրթությունն ու ժամանցը կազմակերպելու համար ստեղծել կենտրոններ, որտեղ կուսուցանվեն կյանքի հմտություններ, կար ու ձև, ինքնապաշտպանությունը խրախուսող սպորտաձևեր, փայտագործություն:
- Համայնքում հիմնադրել ընտանեկան կենտրոն, որտեղ հոգեբանական ծառայություն կստանան ոչ միայն կանայք, այլ նաև տղամարդիկ, զույգերը, որից կշահեն երեխաները:
- Բարձրացնել իրազեկվածությունը համայնքային իրադարձությունների վերաբերյալ, ապահովել համայնքի բնակիչների տեղեկացվածությունը:

## 2.1.3. ՄՐԳԱՇԱՏ

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 5,500 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 1,404 |
| **Երեխաների թիվ** | 1,060 |
| **Նպաստառու տնային տնտեսությունների թիվ** | 80 |
| **Տեղական սոցիալական պլանի առկայություն** | Ոչ |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ** | 0 |
| **Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը** | 38<br>(18-65 տարեկան՝ 32, 65+ տարեկան՝ 6) |
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 5 |

***Համայնքի մասին***

Համայնքը գտնվում է մայրաքաղաքից 42 կմ հեռավորության վրա և անմիջապես սահմանակից է միջպետական նշանակության ավտոճանապարհին:
Համայնքն առանձնանում է իր ակտիվ մշակութային կյանքով և մտավորականությամբ: Բնակիչների նկարագրությամբ, համայնքը մաքուր է, գեղեցիկ, սակայն ծայրամասային փողոցներում կա լուսավորության և փողոցների բարեկարգման խնդիր, որը անձրևային եղանակներին դժվարացնում է երեխաներին մանկապարտեզ և դպրոց հասցնելուն:

## ***<u>Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները</u>***

Համայնքն ունի երկու միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, երաժշտական դպրոց, բուժամբուլատորիա, հայփոստի բաժանմունք, հանրապետությունում ճանաչված ֆուտբոլային թիմ, մեծ գրադարան, որից ակտիվորեն օգտվում են համայնքի անդամները, մշակույթի տանը գործում են 4 անվճար խմբակներ՝ պարի, ասեղնագործության, նկարչության և կար ու ձևի, այս խմբակների ուսուցիչներին վճարում է համայնքապետարանը: Համայնքն ունի նաև գործող եկեղեցի:
Մանկապարտեզի շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման և ընդլայման, որի պատճառով համայնքի ոչ բոլոր երեխաներն են կարողանում օգտվել մանկապարտեզի ծառայություններից:
Հիմնանորոգման կարիք ունի երաժշտական դպրոցի շենքը: Խիստ անհրաժեշտություն է համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերանորոգումը, որը դրական անդրադարձ կունենա բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

## ***<u>Զբաղմունքը/աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները</u>***

Համայնքի տնտեսվարման հիմնական ոլորտները գյուղատնտեսությունը, անասնապահությունն ու ջերմոցային տնտեսություններն են: Այլ համայնքների հետ համեմատելիս բնակիչները նշում են, որ համայնքն ավելի կազմակերպված է, ավելի մաքուր, բայց տնտեսության առումով ունեն մի շարք դժվարություններ՝ հողերի մի մասը աղուտային է, մի մասը անբերրի, ոռոգման ջրի սակավության պայմաններում հաճախ գյուղատնտեսութունը դառնում է անարդյունավետ, որն էլ պատճառ է հանդիսանում, որ ընդհանուր տնտեսական վիճակը, ինչպես նաև բնակչության սոցիալական վիճակը զնալով անկում է ապրում:, որն էլ անմիջականորեն ազդում է հատկապես երեխաների սոցիալական կեցության վրա:

## ***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելությունը</u>***

Համայնքապետարանը անխտիր՝ բոլոր ընտանիքներին 60 հազարական դրամ օգնություն է տալիս ննջեցյալի հուղարկավորման ծախսերը հոգալու համար, դրամական աջակցություն է ցուցաբերում կարքավոր ընտանիքներին առողջական խնդիրների դեպքում:
Տարին մեկ անգամ գյուղի բոլոր տարեցների համար կազմակերպվում է էքսկուրսիա և հյուրասիրություն, առաջին դասարան գնացող երեխաներին նվիրում են պայուսակ և գրենական պիտույքներ, կազմակերպվում են զանազան տոնակատարություններ և

համայնքային միջոցառումներ, խիստ կարիքների դեպքում տրամադրվում է նաև դրամական միջոցներ, յուրաքանչյուր նորածնի համար ընտանիքին նվիրում է 50000 դրամ:

## *Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթ ֆինանսավորումը/համաֆինանսավորումը*

Համայնքում պարենային ծրագրեր են իրականացրել USAID, Հայաստանի մանուկներ հիմնադրամ, «Մարդը կարիքի մեջ» , «Դիակոնիա», Վոլդ Վիժն, Մանկական զարգացման հիմնադրամ, «Նոր Գարուն» կազմակերպությունները: Համայնքում մշտական գործող ՀԿ-ներ չկան, բայց կարճաժամկետ ծրագրերով համագործակցում են տարբեր ՀԿ-ների հետ: Համայնքը մշտապես տրամադրում է աշխատանքային տարածք, անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան գույք, միշտ բաց և պատրաստակամ են համագործակցության համար:

Համագործակցություն կա նաև համայնքի ներսում. Օրինակ զանազան միջոցառումներ կազմակերպելիս հաճախ իրենց թե ֆիզիկական, թե նյութական ներդրումն են ունենում համայնքի կարող անդամներն ու բիզնես ոլորտի ներկայացուցիչները:

Վերը նշված կազմակերպությունների հետ աշխատելիս երբևէ խնդիրներ չեն առաջացել, համայնքապետարանը մշտապես աջակցում է գործող կազմակերպություններին:

## *Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների*

Համայնքի առաջնային կարիքների հարցում բնակիչներն առաջին հերթին նշում են զբաղվածության խնդիրը՝ համարելով, որ վերջին տարիներին հատկապես իրենց համայնքում գյուղատնտեսությունը դարձել է անարդյունավետ: Ոմանք նշում են, որ առաջնային են համարում երեխաների զբաղվածության և ժամանցի խնդիրը,երեխաների համար չկա որևէ վայր, որտեղ կարող է անցկացնել ազատ ժամանակը, դպրոցական առարկաներից զատ ստանա այլ գիտելիքներ,զարգանալ: իսկ ոմանք՝ հատկապես տարեցների և երիտասարդների զբաղվածությունը:

Խնդիրներ կան հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների հետ

Դժգոհություններ կան ՄՍԾ-ի ծառայություններից, նշելով, որ նպաստի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերից բացի այլ շփումներ տեսուչի հետ չեն ունենում, իսկ եթե հենց իրենք են դիմում ՄՍԾ, ապա սկսվում է քաշքշուկների շարանը: Բնակիչների խոսքով, եթե չլինի համայնքային սոցիալական աշխատողը, ապա սոցիալական մի շարք հարցեր կդժվարանան լուծել:

*Հաշմանդամություն ունեցող երեխայի մի ծնող նշեց «….երեխային տրամադրվելիք քայլակի համար այնքան եմ գնացել-եկել, մինչև հոգնած ու հուսահատված առաջին իսկ նպաստի գումարով ես եմ գնել քայլակը՝քաշքշուկից ազատվելու համար»:*

Հարցվողները, բացի խոցելի խմբերի վերը նշված սոցիալական խնդիրներից, համայնքի համար դժվար լուծելի խնդիների շարքում հիմնականում նշում են ոռոգման ջրի, լուսավորության խնդիրները: Բնակչության սոցիալական վիճակով պայմանավորված՝ ավելանում են նաև հիմնախնդիրները, որտեղ առաջնային են համարվում առողջապահական խնդիրները, քանի որ ցածր եկամուտների պատճառով շատերը դժվարանում են օգտվել առողջապահական ոլորտի ծառայություններից, որից առավելապես տուժում են երեխաներն ու տարեցները

Համայնքի առաջնային խնդիրներից են նաև.

- Երեխաների և երիտասարդների համար ժամանցի վայրերի բացակայությունը՝ սրճարան, խաղահրապարակ:
- Տարեցների խնամքի կենտրոնների բացակայությունը
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ցերեկային կենտրոնի բացակայությունը

*__Առաջարկներ__*

- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ցերեկային ծառայություն:
- Համայնքում բացել տարեցների ժամանցի կենտրոն:
- Հիմնել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ:
- Ստեղծել կանանց, ինչու չէ նաև տարեցների ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

# 2.2. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## 2.2.1. ԻՋԵՎԱՆ

| | |
|---|---|
| **Բնակչության թիվ** | 19,356 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 5,100 |
| **Երեխաների թիվ** | 4,544 |
| **Նպաստառու տնային տնտեսությունների թիվ** | 621 |
| **Տեղական սոցիալական պլանի առկայություն** | Ոչ |
| **Համայնքային սոցիալական աշխատող** | Այո |
| **Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ** | 8 |
| **Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը** | 37<br>(18-65 տարեկան՝ 28, 65+ տարեկան՝ 9) |
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 6 |

*__Համայնքի մասին__*

Իջևան համայնքը գտնվում է անտառային գոտում: Անհիշելի ժամանակներից /չկա պատմական ստույգ տվյալ/ Հայաստանի մայրաքաղաք Դվինից-Թիֆլիս ձգվող քարավանային ճանապարհի վրա կառուցվել են քարավանների հանգստավայրեր

/քարավանատներ/: Դրանցից մի քանիսն գտնվել են ներկայիս Իջևանի տեղում, Աղստևի աջ ու ձախ մասերում:

Բնակչության թիվը սկսել է աճել հատկապես 19-րդ դարի 2-րդ կեսից հետո, երբ այժմյան Տավուշի մարզի Իջևանի /Քարվանսարայի/ հարակից տարածքներում սկսել են զբաղվել արհեստագործությամբ /գորգագործություն, փայտագործություն/ և աճեցնել կարտոֆիլ, այնուհետև՝ ծխախոտ: 1858թ. Քարվանսարայում բացվել է ծխական դպրոց, իսկ քիչ անց կառուցվել է Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Իջևանի շրջակայքում 7-9-րդ. կառուցվել են նաև սբ. Աստվածածին և սբ. Հովհաննես եկեղեցիները:

Իջևանը սկսել է բուռն զարգացում ապրել հատկապես անցած դարի 30-ական թվականներից սկսած, երբ շահագործման են հանձնվել մի շարք արդյունաբերական, շինարարական, սննդի և այլ ձեռնարկություններ:

Իջևանցիները ժամանակին զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ և արհեստագործությամբ /գորգագործություն, փայտի մշակություն, պատշարություն և այլն/, իսկ հարակից տարածքների բնակչությունը զբաղվել արհեստագործությամբ /գորգագործություն, փայտագործություն/ և աճեցնել կարտոֆիլ, այնուհետև՝ ծխախոտ:[2]

## ***<u>Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները</u>***

Ներկայումս քաղաքում գործում են 300 տեղանոց մշակույթի տունը, կերպարվեստի և երաժշտական դպրոցները, 5 հանրակրթական դպրոցներ՝ 3550 ընդհանուր աշակերտաքանակով, 1 վարժարան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, որտեղ սովորում են 1000-ից ավելի ուսանողներ, «Մխիթար Գոշ» համալսարանի մասնաճյուղը, 2 քոլեջներ, մանկապարտեզներ, հիվանդանոց, պոլիկլինիկա և այլն:
Քաղաքն ունի 91 բազմաբնակարան շենքեր և 2350 առանձնատներ3: Համայնքը գազաֆիկացված է, իսկ խմելու ու ոռոգման ջրով ապահովված է մասնակի, քանի որ կան համայնքներ որտեղ այն խնդիր է հանդիսանում:
Միջհամայնքային, ներհամայնքային, բակային ճանապարհները ունեն բարեկարգման կարիք: Միջհամայնքային հանրային տրանսպորտային ցանցը չի գործում, համայնքային բնակչությունը ստիպված օգտվում է անհատական տաքսի ծառայություններից, որոնց արժեքը հասանելի չէ պարբերաբար օգտագործման համար:
Մի շարք համայնքներում բացակայում է կոյուղու համակարգը, բնակիչները խնդիրը լուծում են իրենց բակերում փոսեր փորելու միջոցով:

## ***<u>Զբաղմունքը/ աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները</u>***

Համայնքում կան փայտամշակման, գյուղատնտեսական ապրանքների վերամշակման, տեքստիլի, քարի վերամշակման, առևտրային ձեռնարկություններ, ինչպես նաև շատ հյուրատներ և հանգստյան վայրեր: Ժամանակին եղել են գորգագործական և մետաղագործական հիմնարկներ:
Համայնքում զարգացած է մանր և միջին առևտրային բիզնեսը, որն ունի իր խնդիրները՝ ցածր սպառողականություն, վարկային ծանր բեռ: Հիմնականում առավել արդյունավետ գործում են պարենային ապրանքների թվով 6 սուպերմարկետները, որոնք ավելի շատ

[2] ՀՀ Տավուշի մարզպետարանի կայքէջ՝ http://tavush.mtad.am/about-communities/695/, 11 նոյեմբեր, 2021
[3] ՀՀ Տավուշի մարզպետարանի կայքէջ՝ http://tavush.mtad.am/about-communities/695/, 11 նոյեմբեր, 2021

ճնշում են փոքր բիզնեսների գործունեությունը: Զարգանում է ռեստորանային, սրճարանային բիզնեսը:
2018 թ-ին անտառահատումների արգելման պատճառով կտրուկ մեծացել է զբաղվածություն չունեցող զանգվածի թիվը, աճել է գործազրկությունը և արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: 2019-ի մարտից կորոնավիրուսի պայմաններում մեծ եղավ մարդկանց թիվը, ովքեր չկարողացան գնալ արտագնա աշխատանքի, ինչը առաջացրեց սոցիալական լարում և խորացրեց սոցիալապես անապահով և ծանր վիճակը:

Տարածաշրջանում այժմ զարգանում է զբոսաշրջությունը, որի մասին նշում են նաև ֆոկուս խմբի մասնակիցները: Հարցվողներից մեկի խոսքերով.

*«Իջևանը հռչակվել է տուրիզմի զարգացման կենտրոն, բայց ցավոք սրտի բավարար ծրագրեր չեն իրականացվում դրա զարգացման և չափորոշիչներին համապատասխանելու ուղղությամբ: Իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև համաճարակը և պատերազմը: Հույս ունեմ, որ խոշորացումից հետո ավելի լուրջ ազդակներ կունենանք զբոսաշրջության զարգացման համար: Իջևանը զբոսաշրջիկներին գրավում է իր չքնաղ բնությամբ, քանդակների այգով, Դենդրոպարկով, որտեղ կան աշխարհի բոլոր անկյուններից բերված բուսատեսակներ»:*

## ***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը</u>***

Ծառայություններ իհարկե կան, բայց բավարար չեն: Բնակիչները ժամանակ առ ժամանակ դիմում են պետական կառույցներին օգնության համար, հիմնականում երբ արդեն ծայրահեղ և անելանելի վիճակում են գտվում: Երբեմն ստանում են դրական պատասխան: Նրանցից շատերը ամաչում և խուսափում են դիմել կառույցներին աջակցության համար՝ մտածելով, որ հաստատ կոպիտ պատասխան կստանան:

Երիտասարդների զբաղվածության ապահովման հարցով ծրագրեր է իրականացվում զբաղվածության կենտրոնի կողմից: Որոշ ծրագրեր իրականացնում են «Ռեստարտ» Իջևան կազմակերպության կողմից: Ծրագրեր է իրականացնում նաև համալսարանը՝ ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների հաղորդակցման, գործնական գիտելիքների և հմտությունների ձեռք բերման ուղղությամբ:

Ուսանողների հետ հարցումները ցույց են տալիս, որ ըստ նրանց, համայնքում քիչ են հնարավորությունները մասնագիտական և անձնային որակների զարգացման: Սակայն մասնագետները պնդում են, որ իրականում համայնքում գործող կազմակերպոթյունները շահագրգռված են երիտասարդների համար տարաբնույթ ծրագրերի իրականացմամբ, սակայն ծագող խնդիրները կապված են երիտասարդների պասիվության հետ, շատ դժվար են մասնակցում ոչ ֆորմալ կրթական ծրագրերին, ունեն հետաքրքրվածության ցածր աստիճան:

Հաշմանդամների խնդիրներով հիմնականում զբաղվում են մարզպետարանի առողջապահության և սոցիալական հարցերի բաժինը: Երբեմն ֆինանսական աջակցություն է տրամադրվում երեխաների տեղափոխման ճանապարհածախսը հոգալու, անհրաժեշտ սարքավորումները ձեռք բերելու համար:

Հաշմանդամ երեխաների և հաշմանդամ անձանց կարիքները (զբաղվածություն, կրթություն, առողջապահություն) մնում են թերի և չբավարարված: Լուրջ պետական ծրագրեր են պետք հաշմանդամների կարիքների բավարարման ուղղությամբ: Բոլոր կառույցները պետք է ծրագրեր և աշխատատեղեր ունենան հաշմանդամ անձանց և երեխաների համար:

Ըստ մասնագետի՝ հաշմանդամների կարիքները չբավարարված են առկա բոլոր ոլորտներում՝ կրթություն, առողջապահություն, օրենսդրություն, մարդու իրավունքներ և այլն:

Համայնքում կարիք կա որակյալ մասնագետների: Լուրջ կարիք կա հատուկ մասնագետների վերապատրաստման:

Մասնագետները նշում են, որ նաև տեղեկատվական ընդհանուր հարթակի ստեղծման կարիք կա: Շահառուները իրենց խնդիրներով չգիտեն ում պետք է դիմեն, տեղեկացված չեն համայնքում ինչ ծառայություններ կան, ինչ արտոնություններ, իրավունքներ ունեն սոցիալական տարբեր խմբերը:

Նույն համայնքում գործող կազմակերպությունները նույնիսկ տեղեկացված չեն դաշտում գործող այլ կազմակերպությունների գործունեությանը, ծրագրերին, թիրախ խմբերին: Իհարկե, ՏԻՄ կառույցների կողմից որոշակի քայլեր արվում են միջոլորտային կապերի ստեղծման ուղղությամբ, սակայն դրանք ժամանակավոր են, և կարծես զուտ հաշվետվողականության համար:

Տարեցները իրենց համարում են բացարձակ ոչ իրազեկված: Չգիտեն թե որ ծառայություններից կարող են օգտվել անվճար, ինչ արտոնություններ ունեն կամ, առհասարակ, ի՞նչ ծառայություններ են գործում համայնքում: Իրենց զգում են անօգնական և անպաշտպան: Գիտեն միայն, թե որտեղի՞ց և ինչպե՞ս ստանալ թոշակը:

*Մեջբերում: «Բացի թոշակից չենք օգտվում ոչ մի սոցիալական աջակցության ծրագրից, և տեղյակ չենք՝ արդյո՞ք համայնքում կան ծառայություններ տարեցների համար»:*

## ***<u>Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը</u>***

Տարեցների կարիքների բավարարմանն ուղղված ծրագրեր համայնքում իրականացնում է «Հայկական կարմիր խաչ» կազմակերպությունը: Միայնակ տարեցներին (թվով 70 տարեց Իջևան խոշորացված համայնքում) ամեն ամիս տրամադրվում է պարենային փաթեթ: Տարեցները ունեն կազմակերպության երիտասարդ կամավորների հեռախոսահամարները և անհրաժեշտության դեպքում դիմում են նրանց աջակցության համար (անհրաժեշտ սննդամթերքի գնում, երբեմն օգնություն տան կենցաղային հարցերում)

Հաշմանդամ երեխաներին հատուկ մասնագիտական աջակցության ծառայություններ է մատուցում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը:

Որոշակի ֆիզիոթերապևտիկ և հատուկ մասնագիտական ծառայություններ են մատուցվում Իջևանում Արաբկիր բժշկական վերականգնողական կենտրոնի կողմից(ծառայությունները անվճար են մինչև 3 տարեկան երեխաների համար):

Համայնքում գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք սոցիալկրթական, տնտեսական զարգացման ծրագրեր են իրականացնում համայնքում: Համայնքում ակտիվ գործունեություն են ծավալում ՍՕՍ մանկական գյուղը Իջևանում, Վորլդ Վիժն Իջևանի մասնաճյուղը, Տավուշի թեմը, «Հայկական կարմիր խաչը», «Ինֆոտուն» Իջևան կազմակերպությունը, «Ռեսթարտ» Իջևան կազմակերպությունը: Բնակչության տարբեր խմբեր պարբերաբար ֆինանսական աջակցություն են ստանում նաև մարզպետարանի և համայնքապետարանի կողմից:

Հաշմանդամության խնդիրներով անձինք հիմնականում տեղեկացված են համայնքում գործող ծրագրերի և տրամադրվող ծառայությունների մասին: Տեղեկանում են մարզպետարաններից, համայնքապետարաններից, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի աշխատակիցներից, վերականգնողական կենտրոնի աշխատակիցներից:

Նպաստառու ընտանիքները համայնքում գործող ծրագրերի և տրամադրվող ծառայությունների մասին տեղեկանում են տարբեր աղբյուրներից՝ ՍԱՏԲ-ից, դպրոցից, հարևաններից, համացանցից: Համայնքում սոցիալական ոլորտի ծրագրեր իրականացնող կազմակերպությունները հասանելի են բնակչությանը և իրենց կողմից ևս տրամադրում են իրազեկում համայնքում տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

Երիտասարդները հիմնականում նշում են, որ առավել շատ իրազեկվում են համացանցի օգնությամբ, ընկերների, քաղաքապետարանի և մարզպետարանի կայքէջերից, համալսարանից և այլ լրացուցիչ հրապարակումների շնորհիվ:

Մասնակիցները տեղեկացված են նաև Տավուշի մարզում բոլոր համայնքների համար նույն ձևաչափով գործող կայքերի մասին, բայց հիմնականում մեծ համայնքների կայքերն են հաճախ թարմացվում, իսկ փոքր համայնքներինը բավականին ուշ:

Ըստ հարցվողների, ՏԻՄ-հասարակական կազմակերպություններ համագործակցային կապեր կան, իհարկե ոչ այդքան լիարժեք: Ըստ հարցվողների որոշ մասի՝ կազմակերպությունների միջև համագործակցությունը ավելի միջանձնային է, այսինքն՝ կազմակերպությունների ղեկավարների միջև եթե համակրանք, փոխվստահություն և փոխօգնության հարաբերություններ են, կա նաև կազմակերպությունների համագործակցություն:

Մասնագետները նշում են, որ միջոլորտային աշխատանքային ցանցերի գործունեությունը շատ կարևոր և արդյունավետ կարող է լինել: Համայնքում եղել է նման փորձառություն համաճարակի տարածման առաջին ամիսներին (ձևավորվել էր մարզպետարանին կից միջոլորտային աշխատանքային խումբ, կազմակերպվում էին քննարկումներ, աշխատանքի բաշխում, ստեղծվել էր ահառուների ընդհամուր աշխատանքային բազա):

## ***Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների***

Բնակիչները որպես համայնքի առաջնային կարիք համարում են սահմանապահ գյուղերի ուժեղացմանն ու ապահովությանն ուղղված ծրագրերը։

*- Մենք այժմ մեր բոլոր ուժերն ու հնարավորությունները պետք է ուղղենք սահմանապահ գյուղերի հզորացմանը։ Պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որ սահմանապահ գյուղերի բնակիչները չլքեն իրենց գյուղերն ու տները, այլ հակառակը, ծաղկեցնեն համայնքները։ Կրթական, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր պետք է իրականացնել գյուղական համայնքներում։*

Ըստ հարցվողների, նշված խոցելի խմբերի ընդգրկվածությունը հանրային քննարկումներին և միջոցառումներին շատ ցածր է։ Ըստ նրանց, պասիվության պատճառը այն է, որ արդյունք չեն ակնկալում և չեն վստահում։

Համայնքի առաջնային կարիքներից բնակիչներն առանձնացնում են մի քանիսը։ Այսպես.

**Ճանապարհների բարեկարգման խնդիր –** Իջևան համայնքում, հատկապես՝ շենքերի բակերը գտնվում են անմխիթար վիճակում, կարիք ունեն ասֆալտապատման։ Հատկապես անձրևների շրջանում բնակիչները մեծ դժվարությամբ են տեղաշարժվում։ Շենքերի բակերում բացակայում են խաղահրապարակներ երեխաների համար։ Երեխաները խաղում են փոշոտ և կեղտոտ ճանապարհներին՝ վտանգելով նաև իրենց կյանքը բակերով երթևեկող մեքենաների առկայության պատճառով։

**Թափառող շների և առանց հովիվ անասունների առկայության խնդիրը համայնքում –** համայնքում մեծ խնդիր է թափառող շների ոհմակների առկայությունը, բնակիչները վախենում են ազատ քայլել քաղաքում, երեխաները վախով են հաճախում դպրոց և ուսումնական հաստատություններ։ Բացակայում են թափառող շների հարցերով զբաղվող կառույցներն ու ծառայությունները։ Անտառներում ազատ արձակված կովերն ու ձիերը հաճախ շրջում են քաղաքում անհարմարություն պատճառելով բնակիչներին, երթևեկությանը ինչպես նաև աղտոտում են քաղաքը։

**Կոյուղու բացակայություն –** համայնքի մի շարք թաղամասեր չունեն կոյուղու համակարգ։ Խնդիրը լուծում են իրենց բակերում փոսեր փորելու միջոցով, որը մեծ անհարմարություն է՝ հատկապես ամառվա շոգ ամիսներին։

*Մեջբերում. «Ես ինձ համարում եմ իրազեկված և պահանջատեր քաղաքացի։ Կոյուղու խնդիրը ինձ համար մեծ անհարմարություն է։ Այս հարցով դիմել եմ մարզպետարան, ուղղորդում եմ ստացել համայնքապետարան, այնտեղից՝ «Վեոլա ջուր» ընկերություն, որտեղ ինձ կոպիտ պատասխանեցին, որ նման խնդիրների լուծմամբ չեն զբաղվում։ Համայնքապետարանը առաջարկեց միջոցներ տրամադրել բակում փոս փորելու համար, սակայն դա խնդրի ժամանակավոր լուծում է և անհարմարություն իմ և հարևաններիս համար։ Շարունակելու եմ խնդրովս դիմել համապատասխան կառույցներին, ամիսներ առաջ ակտիվ զբաղվել եմ մեր թաղամասում լուսավորության ապահովման հարցով բարեբախտաբար թաղամասը արդեն լուսավորված է»։*

**Զբաղվածություն տարեցների համար-** Տարեցների մեծ մասը նշում են, որ կարիք ունեն զբաղվածության։ Չեն ուզում անգործ տանը նստել։ Այնքան հարցերում կարող են օգտակար լինել, պատրաստ են աշխատել և օգնել իրենց զավակներին։

**Ժամանցի, շփման կարիք-** Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտություններն ի օգուտ ծառայեցնելու: Այդ պատճառով կարիք են տեսնում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, զրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին:

**Ծառայություններ միայնակ ծերերի համար-** Միայնակ ծերերը անպաշտպան և անօգնական են համայնքում: Նրանք կարիք ունեն որպեսզի ինչ-որ մեկը պարբերաբար այցելի իրենց, զրուցի, հարցնի որպիսությունը: Շատ հաճախ դժվարանում են դուրս գալ խանութ հաց գնելու: Մեծ խնդիր է նաև տարեց մարդու տան մաքրության կազակերպումը:

**Հաշմանդամ երեխաների ծնողները կարիք ունեն աշխատանքի** – Հաշմանդամ երեխաների ծնողները զրկված են աշխատանքի հնարավորությունից: Կարիք կա ծրագրերի, որոնք կօգնեն նման ծնողներին աշխատել տանից՝ միաժամանակ խնամք տանելով իրենց երեխաներին:

**Ցերեկային կենտրոններ հաշմանդամ երեխաների համար –** Մեծ կարիք կա ցերեկային խնամքի կենտրոնների, որտեղ կկազմակերպվի հաշմանդամ երեխաների խնամքը, հատուկ մասնագիտական աշխատանքը, կրթությունը, ֆիզիոթերապետիկ աջակցությունը:

**Պետության կողմից տրամադրող օրթեզները անորակ են և ծնողը ինքն է հոգում կարիքը սեփական ուժերով-:** *«Պետության կողմից տրամադրված օրթեզներով երեխաները չեն կարողանում քայլել: Ստիպված ենք լինում ամեն անգամ 25 000 դր տրամադրել օրթեզներ գնելու համար, արդեն նեղություն պատճառելով մեր մյուս երեխաներին:»*

**Լուրջ պետական սոցիալական ծրագրերի ներդրման կարիք –** Կարիք կա լուրջ պետական ծրագրերի, որոնք կբարելավեն հաշմանդամներին մատուցվող ծառայությունների որակը, նրանց ապագա կյանքը: Պայմաններ և հնարավորություններ կստեղծեն հաշմանդամների և նրանց խնամակալ ծնողների համար աշխատանքի, զբաղվածության և ապրուստի:

**Տրանսպորտային խնդրի առկայությունը** – շատ համայնքների երիտասարդներ զուրկ են մնում մի շարք միջոցառումների և ծրագրերի մասնակից լինելուց, քանի որ չեն կարողանում հասնել Իջևան մշտական տրանսպորտային ծառայություն չունենալու պատճառով, իսկ աշխատող տրանսպորտային միջոցներն էլ անհատական տաքսիներն են, որոնք բավականին թանկ են ամենօրյա չեն:

**Ժամանցի վայրերի բացակայությունը** – համայնքներում բացակայում են երիտասարդների զարգացման կենտրոններ: Երիտասարդները չունեն հնարավորություններ մի տեղ նստելու՝ ծրագրեր մշակելու և լրացուցիչ հնարավորություններ ստեղծելու համար: Երիտասարդներին հենց իրենց համայնքներում զարգացման կենտրոններ են պետք,

որպեսզի նախ ակտիվանա համայնքային կյանքը, ներքին ռեսուրսները օգտագործվեն հենց իրենց համայնքը զարգացնելու համար, գումար չծախսեն Իջևան հասնելու համար:

**Սպասարկման ոլորտում առկա խնդիրները** – քաղաքում գործող սրճարաններում մատուցվող ծառայությունների մակարդակը ցածր է, իսկ երաժշտությունը անլսելի: Իջևանում չի գործում մի այնպիսի սրճարան, որ ընտանիքով կամ մտերիմներով հնարավոր լինի գնալ և վայելել:

**Քաղաքի մաքրության պահպանումը** – քաղաքի մաքրությունը պահպանված չէ և զբոսաշրջիկները այցելելով Իջևան՝ անմիջապես նկատում են աղտոտված Աղստև գետը, աղբամանների մոտ թափված աղբը: Այդ բոլորը տեսնելով՝ զբոսաշրջիկները չեն ցանկանում անգամ նստել որևէ սրճարանում, որքան էլ այն գեղեցիկ լինի և հարմարավետ:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ստեղծել մի վայր, որտեղ տարեցները կարող են ազատ շփվել, մասնակցեն միջոցառումների, գիտելիքներ և հմտություններ փոխանցեն երիտասարդներին, կատարեն որոշ չափով զոնե վարձատրվող աշխատանք:
- Ստեղծել ծառայություններ միայնակ ծերերի համար
- Համայնքում իրականացնել կրթական ծրագրեր հատուկ կարիքներով անձանց և նրանց ծնողների համար, որի արդյունքում ծնողը և երեխան ձեռք կբերեն հմտություններ և կկարողանան գումար վաստակել
- Ստեղծել հաշմանդամների համար վերականգնողական կենտրոններ մարզերում
- Ստեղծել ցերեկային խնամքի կենտրոններ հաշմանդամ երեխաների համար
- Համայնքում իրականացնել լրացուցիչ կրթության դասընթացներ, որի շնորհիվ աշխատանքի կարիք ունեցող բնակիչները կկարողանան ձեռք բերել համակարգչային և այլ լրացուցիչ հմտություններ՝ աշխատանքի անցնելուց առաջ,
- Ստեղծել սոցիալական լայն հարթակ, որի միջոցով բնակիչները կկարողանան իրազեկվել գործող սոցիալական ծրագրերի և ծառայությունների մասին:
- Համայնքում բացել կենտրոն, որտեղ կկարողանան այցելել հաշմանդամություն ունեցող անձինք՝ ոչ միայն մտավոր այլ նաև ֆիզիկական խնդիր ունեցողները:
- Մասնագիտական կողմնորոշման կենտրոններ ստեղծել:
- Ուսանողների համար ստեղծել դասապատրաստման կենտրոններ, որի միջոցով ուսանողները կկարողանան գումար վաստակել,
- Կազմակերպել միջոցառումներ և մշակել ծրագրեր երիտասարդներին ակտիվացնելու նպատակով:

## 2.2.2. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

| | |
|---|---|
| Բնակչության թիվ | 16,623 |
| Տնային տնտեսությունների թիվ | 4,821 |
| Երեխաների թիվ | 3,215 |
| Նպաստառու տնային տնտեսությունների թիվ | 552 |
| Տեղական սոցիալական պլանի առկայություն | Ոչ |
| Համայնքային սոցիալական աշխատող | Այո |
| Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ | 16 |
| Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը | 41<br>(18-65 տարեկան՝ 30, 65+ տարեկան՝ 11) |
| Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| Խորին հարցազրույցներ | 5 |

*Համայնքի մասին*

Նոյեմբերյան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, ընդգրկում է ՀՀ Տավուշի մարզի հյուսիս-արևելյան հատվածը և մի փոքր շերտով զբաղեցնում է մարզի տարածքի կենտրոնական հատվածը: Նոյեմբերյանի (հին անունը՝ Բարանա) տարածքը մտել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի, 10րդ դարի և 12րդ դարի սկզբին՝ Տաշիր Ձորագետի (Կյուրիկյան) թագավորության կազմի մեջ: 11-րդ դարի վերջում և 12րդ դարի սկզբին Կյուրիկյան թագավորությունը նվաճել են սելջուկները, և Նոյեմբերյանի տարածքը միացվել է Գանձակի ամիրայությանը: 1118 - 1124 թվականներին վրաց Դավիթ Շինարար թագավորը տարածքն ազատագրել է սելջուկներից և միացրել Վիրքին: 1236 թվականից նվաճվել է մոնղոլների կողմից: 1801 թվականից Նոյեմբերյանի տարածքը միացել է Ռուսաստանին: 19-րդ դարում այն մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Ղազախ գավառի մեջ,1920-29 թվականին՝ Լոռի-Փամբակի գավառի մեջ:

Ստույգ տվյալներ չկան այս տարածքում հնագույն բնակավայրերի վերաբերյալ, սակայն նրա անմիջական հարևանությամբ գտնվող 13րդ դարում կառուցված Մշկավանքն ու Սուրբ Սարգիս եկեղեցին, Ղալինջաքար ամրոցը հուշում են, որ այս Տարածքը հնում ևս բնակեցված է եղել: Հնագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ Նոյեմբերյանի տարածքում մարդը բնակվել է հին քարե դարից:

*Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները*

1997թ. Նոյեմբերյանի երկրաշարժը և 1992-94թթ. հրետակոծությունները լուրջ ավերածություններ են հասցրել բնակելի, վարչական ու կենցաղային շենքերին: Վթարված մասնավոր տների թիվը գերազանցում է 300-ը:

Համայնքում գործում  է երկու դպրոց, երկու մանկապարտեզ, մեկ մասնավոր վարժարան: Համայնքում երկու թաղամաս կա, որոնք շատ հեռու են գտնվում դպրոցներից և

մանկապարտեզներից: Այն ընտանիքները, ովքեր չունեն մեքենա, դժվարությամբ են կազմակերպում երեխաների ամենօրյա հաճախումը դեպի դպրոց և մանկապարտեզ:

Համայնքում կա երաժշտական դպրոց, մշակույթի տուն, որտեղ գործող խմբակները վճարովի են: Աղքատ, անապահով ընտանիքների երեխաները անվճարունակության պատճառով չեն կարողանում հաճախել վճարովի խմբակների պարապմունքներին՝ զրկվելով մշակութային կրթություն ստանալու հնարավորությունից: Միակ վայրը, ուր երեխաներին մատուցվում է անվճար ծառայություն, ինչպես նշում են ֆոկուս խմբի անդամները, «Ընտանիք և համայնք» Բհկ-ի «Պապոնց տուն» սոցիալ-կրթական կենտրոնն է:

*«Համայնքում կան շատ շնորհալի երեխաներ, որոնք այդպես էլ հնարավորություն չեն ունենում ստանալ համապատասխան որակի կրթություն ...ափսոս են, կորչում են»:*

Համայնքում առկա է խմելու և ոռոգման ջրի խնդիր: Համայնքի բնակավայրերը գազաֆիկացված են: Համայնքային ճանապարհները բարեկարգման կարիք ունեն, ինչպես նաև հանրային տրասպորտի ցանցը զարգացած չէ:

### ***Զբաղմունքը/ աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները***

Համայնքի մասին խոսելիս բոլոր հարցվածները նշում են, որ տնտեսվարման հիմնական ոլորտները գյուղատնտեսությունն, անասնապահությունն ու արտագնա աշխատանքն է:

Բնակիչները իրենց հողատարածքում զբաղվում են բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ, սակայն համայնքի խնդիրներից մեկն այն է, որ համայնքը ոռոգման ջուր չունի և ոռոգման նպատակով օգտագործում են խմելու ջուրը, որն էլ թանկ է արժենում բնակչության վրա: Անասնապահությունն ունի իր դժվարությունները, որովհետև թանկացումների պատճառով շատ դժվար է անասնակեր ձեռք բերելը: Ի լրումն սրա, նաև շատ դժվարությամբ է իրացվում արտադրանքը (կաթնամթերքը):

Համայնքում նաև խնդիր է անասնապահությունը. անասնապահին վճարելը ձեռնտու չէ, և ընտանիքները ստիպված իրենք են կազմակերպում անասունների արածացնելու հարցը: Արդյունքում բաց են թողնում անասուններին, որոնք վնասում են հարևանների այգիների բերքը: Անասնապահության հետ կապված մեկ այլ խնդիր է այն, որ անասունները անցնում են Ադրբեջանի տարածք և այլևս հնարավոր չի լինում կազմակերպել կենդանու վերադարձը:

Համայնքի խնդիրներից է նաև այն, որ երիտասարդները առաջին իսկ հնարավորության դեպքում տեղափոխվում են մայրաքաղաք ՝աշխատելու և ապրելու: Համայնքում բնակիչները, որոնց հարազատները մեկնել են արտագնա աշխատանքի իրենց առօրյա հոգսերը հոգում են վարկերի միջոցով:

Պատերազմի և կորոնավիրուսի համավարակի հետևանքով նաև համայնքում ավելացել է արտագաղթը, ընդ որում՝ ամբողջական ընտանիքներով: Մինչ համավարակը բնակչությունը ակտիվ առևտրի մեջ էր Վրաստանի հետ, բայց համավարակի պատճառով ինտենսիվ առևտուրը դադարել է, իսկ Նոյեմբերյան համայնքում համեմատած հարևան համայնքների և՛ սննդամթերքը և՛ կենցաղային ապրանքները բավականին թանկ են:

Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ մեծ աշխատանք է տանում «Հույսի Կամուրջ» ՀԿ-ն, կատարում է ծնողների համար դասընթացներ, որպեսզի գրագետ մոտեցում ցուցաբերեն իրենց հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ: Նաև գործում է չափահաս հաշմանդամություն ունեցողների խմբակ, որտեղ չափահաս հաշմանդամություն ունեցող

անձինք զբաղվում են ձեռքի աշխատանքներով, տիկնիկագործությամբ, որպեսզի այդ պատրաստած աշխատանքները հետագայում հանվեն ցուցահանդես-վաճառքի:

***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը</u>***

Համայնքապետարանը անխտիր, բոլոր ընտանիքներին 15000 հազարական դրամ օգնություն է տալիս ննջեցյալի հուղարկավորման ծախսերը հոգալու համար, դրամական աջակցություն է ցուցաբերում կարքավոր ընտանիքներին առողջական խնդիրների դեպքում:

Հիվանդանոցի ծախսերի համար համայնքապետարանը տարեկան տրամադրում է մեկ միլիոն դրամ, քանի որ դիահերձարանը գտնվել է վատթար վիճակում: Բայց վերջերս գտնվել է անհատ բարերար, ով հինգ միլիոն դրամ է տրամադրել դիահերձարանի վերանորոգման համար: Համայնքապետարանը նաև հոգում է «Հույսի կամուրջ» ՀԿ- ի կոմունալ ծախսերը:

Նաև աջակցում են մշակույթի կենտրոնին, կազմակերպում են համայնքային միջոցառումներ և այս տարի վերջապես մշակույթի տան պարի խմբակի սաները համայնքապետարանի միջոցներով ունեցան միանման բեմական հագուստներ: Համայնքապետարանի միջոցներով ըստ անհրաժեշտության իրականացվում են զանազան նախաձեռնություններ՝ վերանորոգվել են միջհամայնքային որոշ ճանապարհներ, խիստ կարիքների դեպքում տրամադրվում է նաև դրամական միջոցներ, յուրաքանչյուր նորածնի համար ընտանիքին նվիրում է 15000 դրամ: Համայնքապետարանի ջանքերով վերանորոգվել են որոշ շենքերի տանիքներ:

***<u>Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը</u>***

Նոյեմբերյանում գործում են «Հույսի կամուրջ» ՀԿ Նոյեմբերյանի մ/ճ-ը, «Պապոնց տուն» սոցիալ կրթական կենտրոն, «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպությունը, «Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպություն /CCD NGO/, Կարմիր խաչը: Վոլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպության ծրագրերն ուղղված են այնպիսի հրատապ խնդիրների լուծմանը, ինչպիսիք են երեխաների վաղ մանկության հասակում լիարժեք աճն ու զարգացումը, բժշկական ծառայությունների բարելավումը, երեխաների պաշտպանությունը, կայուն եկամուտների ստեղծումը, երիտասարդների կենսունակության բարձրացումն ու հոգևոր արժեքների տարածումը: Նոյեմբերյանում նաև գործում է ցերեկային կենտրոն:

«Հույսի կամուրջ»-ը հասարակական կազմակերպություն է, որը զբաղվում է հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանությամբ: Նրանց գործունեությունն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նպաստել սոցիալական ներառմանը Նոյեմբերյան համայնքում: Այս ներառմանն աջակցում են կրթություն ստանալու, համայնքային ծառայությունների և ինքնուրույն ապրելու հավասար հնարավորությունների գաղափարների քարոզումը:

«Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ-ն կրթական, խորհրդատվական, հետազոտական, տեղեկատվական և կարողությունների զարգացման ծառայություններով և ծրագրերով իր օժանդակությունն է առաջարկում

համայնքին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացների և խորհրդատվությունների միջոցով:

Կազմակերպության ուշադրության կենտրոնում է նաև՝ Համայնքային ենթակառուցվածքների բարելավում, ջրագծերի անցկացում, ճանապարհների բարեկարգում, համայնքային կրթօջախներին գույք, սարքավորումներ և այլ հումանիտար օգնության տրամադրում, ինչպես նաև առողջապահական հաստատությունների կարողությունների զարգացում՝ շահառու խմբերին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված նոր ծառայությունների մատուցման, սարքավորումների տրամադրման միջոցով:

**Հայկական Կարմիր Խաչը աջակցում է** միայնակ առավել խոցելի տարեցներին, երեխաներին ու երիտասարդներին, խոցելի բնակչությանը՝ անապահով ընտանիքներին, տուբերկուլյոզով հիվանդներին (Սննդի աջակցություն միայնակ տարեցներին, սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին անհայտ կորածների ընտանիքներին):
«Պապոնց տուն» սոցիալ կրթական կենտրոնը աշխատում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, խոցելի ընտանիքների և բոլոր նրանց, ովքեր կարիք ունեն աջակցության, մատուցելով հետևյալ ծառայությունները՝ երեխաների ցերեկային խնամքի կազմակերպում, սոցիալ հոգեբանական աջակցություն, կրթա-մշակութային ծառայություն: Աշխատում է նաև Արցախից տեղահանված ընտանիքների հետ, պատերազմում վիրավորում ունեցող, զոհված և անհետ կորած ընտանիքների հետ՝ տրամադրելով սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Համայնքում պարենային ծրագրեր են իրականացրել (և որոշները՝ շարունակում իրականացնել) նաև Հայ օգնության ֆոնդ, Դիակոնիա, Կլոր սեղան, Ընտանիք և համայնք, Կարմիր խաչ, Տավուշի թեմ կազմակերպությունները: Վերը նշված կազմակերպությունների հետ աշխատելիս երբևէ խնդիրներ չեն առաջացել:

Հարցվողները բացի խոցելի խմբերի վերը նշված սոցիալական խնդիրներից համայնքի համար դժվար լուծելի խնդիների շարքում հիմնականում նշում են ոռոգման ջրի խնդիրը և համայնքների ճանապարհների սարսափելի վիճակը:

Հարցվողների խոսքով, կարծես ծառայությունների վերածածկ կա, որի արդյունքում միևնույն շահառուն ծառայություններ է ստանում մի քանի կազմակերպությունից, իսկ դրա կարիքն ունեցող այլ բազմաթիվ շահառուներ պարզապես դուրս են մնում ծառայություն ստանալու հնարավորությունից:

## ***<u>Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների</u>***

Համայնքի առաջնային կարիքներից մասնակիցներն առանձնացրեցին մի քանիսը: Այսպես.

- Երեխաների համար ժամանցի վայրերի՝ մանկական սրճարանի, խաղահրապարակների ընտրության հնարավորություն չկա:
- Չկա երիտասարդների համար ժամանցի կենտրոններ:
- Համայնքում չկա ոռոգման ջուր, որպեսզի մարդիկ զբաղվեն գյուղատնտեսական աշխատանքներով և ունենան բավարար արդյունք:

- Որպեսզի համայնքն ունենա աշխատատեղեր միջին տարիքի մարդկանց համար, չկա որևէ տեքստիլ արտադրամաս՝ զբաղվածություն ապահովելու համար:
- Ցանկալի կլինի տարեց կանանց զբաղվածության կենտրոն ունենալ, որտեղ տարեց կանայք կզբաղվեն ձեռագործ աշխատանքներով:
- Լավ կլինի ունենալ պահածոների գործարան, որպեսզի մարդիկ անտառից հավաքած բերք ու բարիքները կարողանան իրացնել:
- Համայնքում չկա հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական կենտրոն և համապատասխան մասնագետներ:
- Համայնքն ունի նաև բժշկական ոլորտի մասնագետների կարիք:
- Համայնքում նաև շատ են խալխուլ վիճակում գտնվող շինությունների տանիքներ, մի մասը համայնքապետարանի միջոցներով վերանորոգվել են, մյուս մասը գտնվում են ոչ բարվոք վիճակում:
- Համայնքը գտնվում է սահմանամերձ գոտում, բայց չունի նորմալ վիճակում գտնվող, ապահով ապաստարան արտակարգ իրավիճակներում պատսպարվելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձինք իրազեկված չեն իրենց իրավունքներից, ուստի նախընտրելի է ունենալ նմանատիպ իրազեկման կենտրոն:

***<u>Առաջարկներ</u>***

- Համայնքում բացել տարեցների ժամանցի կենտրոն,
- Բացել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ,
- Բացել կանանց ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները,
- Ստեղծել աշխատատեղերի վերաբերյա ինֆորմացիոն դաշտ,
- Չափահաս հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծել համապատասխան աշխատատեղեր
- Վերանորոգել միջհամայնքային ճանապարհները:
- Քաղաքում բացել տեքստիլ որևէ գործարան:

## 2.3. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## 2.3.1. ԳՅՈՒՄՐԻ

| | |
|---|---|
| Բնակչության թիվ | 157,332 |
| Տնային տնտեսությունների թիվ | 43,300 |
| Երեխաների թիվ | 26,876 |
| Նպաստառու տնային տնտեսությունների թիվ | 11,439 |
| Տեղական սոցիալական պլանի առկայությունը | Առկա է |
| Սոցիալական աշխատողի առկայություն | Առկա է |
| Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ | 110 |
| Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը | 43<br>(18-65 տարեկան՝ 35, 65+ տարեկան՝ 8) |
| Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| Խորին հարցազրույցներ | 7 |

***Համայնքի մասին***

Գյումրի քաղաքն ունի բազմադարյա պատմություն: Խորհրդային իշխանության տարիներին քաղաքում զարկ տրվեց ծանր և թեթև արդյունաբերությանը:

1988 թ. աղետալի երկրաշարժի և Արցախյան ազատամարտի բոլոր դժվարությունների արդյունքում դադարեցվեցին գազամատակարարումը, էներգամատակարարումը, քաղաքը զրկվեց կենսապահովման միջոցներից: Վառելանյութի բացակայության պատճառով կանգ առավ հասարակական տրանսպորտը:

Քաղաքի վերականգնման գործում առաջին դրական տեղաշարժերը կատարվեցին 1999-2002 թթ., երբ ՀՀ կառավարությունն ընդունեց «Աղետի գոտու վերականգնման և զարգացման հայեցակարգը», ապա գործողության մեջ մտավ «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը»: Իսկ արդեն 2008 թ. կեսերից ուժի մեջ մտավ «Աղետի գոտու բնակարանաշինության» հույժ կարևոր ծրագիրը, որի շնորհիվ շուրջ 3000 ընտանիք անօթևան գյումրեցիներ ապահովվեցին բնակարաններով:

***Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները***

Գյումրին Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Երևանից 126 կիլոմետր հեռավորության վրա՝ Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում: Ըստ հարցվածների՝ այսօր Գյումրին արդեն նկատելի արդյունաբերական և բանկային ներուժի քաղաք է, ուր գործում են 12 բանկային մասնաճյուղեր, 20-ից ավելի խոշոր ընկերություններ, 500-ից ավելի տնտեսվարող սուբյեկտներ:

Սակայն, ինչպես նկատում են հարցվողներից ոմանք, նախկին խոշոր արդյունաբերական քաղաք Գյումրին այսօր վերածվել է մանր ու միջին բիզնեսով զբաղվող, ընդամենը մի քանի գործող արտադրամասեր և սպասարկման ծառայություններ ունեցող քաղաքի:

Ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ, հարցվողների կողմից առանձնացվել են հիմնականում հետևյալ խոցելի խմբերը՝

- Հաշմանդամություն ունեցող անձինք,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ,
- Միայնակ ծնողները,
- Բազմազավակ ընտանիքներ,
- Վատ ծնողական խնամքի տակ գտնվող երեխաները (հոգեբանական, ֆիզիկական, աշխատանքային չարաշահման/շահագործման ենթարկված),
- Առանց խնամքի մնացած անձինք՝ ծերերը, թոշակառուները, ովքեր կենսաթոշակից զատ այլ եկամուտ չունեն,
- Երիտասարդ, նոր ավարտած մասնագետներ
- Իրենց մասնագիտությամբ աշխատանք փնտրող, բայց երկար ժամանակ գործազուրկ մնացած անձինք,
- Պատերազմի ժամանակ զոհվածների ընտանիքներ,
- Պատերազմից տուժած անձինք,
- Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք և նրանց ընտանիքների անդամները: Վերջին տարիներին զգալի աճել է այս խնդրով մարդկանց թիվը, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող երեխաների թիվը, սակայն, մարզում չկան մասնագիտական լուրջ աջակցության մեխանիզմներ ու հնարավորություններ:

Քննարկումների մասնակիցները, համայնքի առաջնահերթ կարգավորում պահանջող հարցերի շարքում առանձնացրել են՝

- Առողջապահական ծառայությունների բարելավումը: Առողջապահական ոլորտի մասնագետների հոսք կա դեպի մայրաքաղաք: կայացած, լավ մասնագետները չեն մնում Գյումրիում, իսկ երիտասարդները չեն ցանկանում գալ այստեղ աշխատել :
- Կրթության որակի բարելավումը: Գյումիում մասնագիտական կրթության որակը ցածր է և համեմատաբար լավ կրթություն ստանալու համար երիտասարդները ստիպված են գնալ մայրաքաղաք: Իսկ եթե ծնողները չեն կարող այդ հոգսը հոգալ, ապա այդ երիտասարդները զրկվում են որակյալ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունից:
- Սոցիալական աջակցություն ցուցաբերող կառույցներում աշխատող պաշտոնյաների մասնագիտական որակի բարձրացումը: Սոցիալական աջակցություն տրամադրող կառույցների աշխատակիցները կարիք ունեն համապատասխան գիտելիքների ինչի շնորհիվ կկարողանան առավել արդյունավետ բաշխել սոցիալական ծառայություններն ու այդ նպատակով հատկացված ֆինանսները:
- Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներից ոմանք էլ արպես առաջնահերթ լուծում պահանջող ոլորտներ առանձնացրել են հետևյալները՝
- Երեխաների ցերեկային ծառայությունների հասանելիության ապահովում,

- ➢Տարեցների՝ հատկապես միայնակ, անժառանգ ծերերի համար խնամողների, ցերեկային կենտրոնների ստեղծում,
- ➢հաշմանդամների և նրանց ընտանիքի անդամների կարիքի գնահատում և համապատասխան սոցիալական աջակցության փաթեթների տրամադրում,
- ➢պատերազմի ժամանակ զոհվածների ընտանիքների և նրանց երեխաների կարիքի գնահատում և համապատասխան սոցիալական աջակցության փաթեթների տրամադրում,
- ➢խոցելի խմբերի՝ նեղ մասնագիտական ծառայություններ՝ բուժում, վերականգնողական ծառայություններ, խնամք, ցերեկային զբաղվածության ապահովում, ժամանցի, հանգստի, առողջարանային ծառայությունների կազմակերպում և այլն:

***Զբաղմունք/աշխատանքը եկամտի հիմնական ոլորտները***

*«Գյումրին և՛ հարուստ, և՛ աղքատ քաղաք է»:*

Ըստ հարցվողների՝ Գյումրիում կան հնուց պահպանված, ավանդաբար եկած արժեքներ, կան խելացի երիտասարդներ: Միևնույն ժամանակ, համայնքում ապրող սոցիալապես անապահով խավը հնարավորություն չունի զարգացնելու իր հմտությունները: Այս խնդիրը Գյումրիում առաջ եկավ հետերկրաշարժյան տարիներին և առավել սրվեց COVID-19 համավարակի պատճառով: Համավարակի հետևանքով նվազել է ինչպես արտագնա աշխատանքի մեկնողների թիվը՝ արդյունքում կրճատվել են ընտանիքների դրամական հոսքերի ծավալները, այնպես էլ համայնքում բիզնես ակտիվությունը:

*Ըստ համայնքապետարանի ներկայացուցչի, աղքատ բնակչության թիվը,վստահաբար չի նվազել, նույնիսկ ավելացել է: Հետևաբար պետական աջակցության ծրագրերին դիմողների թվի նվազում չի գրանցվել:*

*«Չնայած փողոցներ են ասֆալտապատվել, քաղաքի տեսքը բարելավվել է, բայց դա Գյումրիի տնտեսվարողների շնորհիվ չէ, այսինքն տեղական բյուջեի միջոցներով չէ, այլ պետական միջոցների: Եթե չեն ստեղծվել զգալի թվով աշխատատեղեր, հատկապես մեծ բիզնեսներ, արտադրություն, ապա տնտեսական վիճակի աշխուժացման մասին խոսք լինել չի կարող: Մի փոքր տուրիզմի ոլորտում աշխուժացում կա և դա հեռանկարային է թվում»:*

Խոսելով գործազրկության մակարդակի մասին, հարցվողները նշել են, որ թեև այս տարի Գյումրիի ցուցանիշը աշխատանքի տեղավորման հարցում բավականին բարձր է եղել, սակայն գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ: Հատկապես խնդրահարույց է աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի միջև անհամապատասխանությունը: Մանկավարժներ, իրավաբաններ, ինժեներներ ֆինանսական ոլորտի շատ մասնագետներ կան, ովքեր ավարտելուց հետո չեն գտնում մասնագիտական աշխատանք, փոխարենը IT ոլորտում աշխատատեղեր շատ կան:

*«Կան շատ թափուր աշխատատեղեր և շատ գործազրկության հարցով դիմողներ: Բայց զբաղվածության ծառայության առաջարկած գործազուրկներին գործատուները աշխատանքի չեն վերցնում»:*

Հարցվողները բարձրաձայնում են նաև միջին տարիքի՝ 40 տարեկանից բարձր, կանանց, նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց համար աշխատանք գտնելու խնդիրը:

*«Ունենք հաշմանդամություն ունեցող անձանց համար պետության միջոցներով աշխատատեղերի հարմարեցման ծրագիր, բայց խնդիրը միայն հարմարեցման մեջ չէ, այլև հաշմանդամություն ունեցող անձի պատրաստվածության, նրա ներգրավվածության և հասարակության վերաբերմունքի մեջ է: Նաև ցավալի է, որ շատ հաճախ էլ գործազուրկներին*

*աշխատանքի առաջարկ է արվում, բայց չեն համաձայնում՝ գտնելով, որ իրենց այդ աշխատանքը հարմար չէ, կամ վարձատրությունն է ցածր»,-նշում է մարզպետարանի ներկայացուցիչը:*

Հարցվողներն արդիական են համարում կրթության որակի, դասագրքերի բովանդակության, դպրոցների, կրթական հաստատությունների տեխնիկական հագեցվածության, շենքային, գույքային և կոմունալ հարմարությունների խնդիրները: Ինչպես նկատում են, մասնագետների որակի բարձրացման ուղղությամբ որոշ հասարակական և պետական կառույցներ աշխատանքներ են տանում, սակայն, հատկապես գյուղական համայնքներում առկա է մասնագետների պակաս: Հատկապես խնդրահարույց են համավում բնական գիտությունների մասնագետների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, ինֆորմատիկայի, քիմիայի ուսուցիչների պակասի հարցը: Այս խնդիրը որոշ չափով հնարավոր է մեղմել՝ ներգրավելով մասնագետներ հարևան համայնքներից, սակայն, նախ պետք է կարգավորել ինչպես միջհամայնքային տրանսպորտի հարցը, այլնպես էլ մասնագետների համապատասխան վարձատրության հարցը:

*«...Գործազրկությանը զուգահեռ կա շատ մասնագիտությունների գծով լուրջ մասնագետների/որակյալ/ կարիք, օրինակ՝ մանկավարժներ զոդողներ, շինարարներ, նեղ մասնագիտությամբ բժիշկներ և այլն»,-նշել է մեկ այլ հարցվող:*

Հարցվողների կողմից բարձրաձայնվել է նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց համար առողջարանային ծառայությունների անհրաժեշտության հարցը: Շատ ծնողներ բողոքում են, որ իրենց երեխաների /հաշմանդամություն ունեցող/ մերսումների, վերականգնողական ծառայությունների համար գնում են Երևան, որովհետև Գյումրիում չկան կամ հերթերը շատ են, իրենց հերթը շատ ուշ է հասնում: Համայնքում չկան մանկական հոգեբույժի բավարար ծավալի ծառայություններ՝ ընդհամենը մեկ մանկական հոգեբույժ կա համայնքում, որը բավարար չէ համայանքի սպասարկման համար:

*«Մարդիկ հարմարվեցին գիշերային խնամքի հաստատությունների փակման հետ, բայց իրական ազդեցությունը հետագայում կերևա, որովհետև մարդիկ չգիտեն, թե այդ երեխաների այժմյան խնամքը ինչպես է կազմակերպում ծնողը»:*

Որոշ հարցվողներ նկատում են, որ Գյումրի համայնքի խնդիրները պայմանավորված են նաև տնակային տնտեսությունների հսկայական քանակով:

*«Տնակային թաղամասերում ապրում են մեծ թվով, մոտ 4000 ընտանիք, որոնց կենցաղային պայմանները շատ վատ են, և, բնականաբար, եթե դուրս չեն գալիս, ուրեմն նաև սոցիալական վիճակներն են շատ վատ: Մեր մարզում լավ վիճակում գտնվող համայնք չեմ կարող նշել»:*

Սակայն, ինչպես նկատում են մասնակիցներից ոմանք, բնակչության ամենամեծ խնդիրը ոչ թե սոցիալ-տնտեսական է, այլ հոգեբանական, որն ավելի սրվեց 2020թ. պատերազմի հետևանքով:

## *Հանրային ծառայություններ, տեսականին և մատչելիությունը*

Ըստ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2019 թվականի ծրագրում առկա տվյալների, աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակով Շիրակի մարզն Հայաստանում առաջատարն է 44,3 և 51,8%-ով:

Գյումրիում ծառայություններն անհավասարաչափ են բաշխված՝ ըստ թաղամասերի: Ի տարբերություն Անի/58/ թաղամասի, որտեղ բազմաթիվ պետական ու ոչ պետական կառույցներ, ծառայություններ են մատուցում երեխաների համար, Մուշ թաղամասում ընդամենը 60 երեխայի համար է մանկապարտեզ գործում, այն պարագայում, երբ այդ թաղամասը տարեցտարի ընդլայնվում է նոր շենքերի կառուցման ու բնակեցման հաշվին: Թաղամասի դպրոցում մոտ 1000 աշակերտ է սովորում, իսկ խմբակներ, նեղ մասնագիտացված ծառայություններ ինչպիսիք են՝ ֆիզիոթերապիան, հոգեբանի, լոգոպեդի, էրգո և արտ-

թերապիայի մասնագետների ծառայությունները, ինչպես նաև մանկապարտեզային տարիքի երեխաների անվճար կրթության հնարավորությունները, բացակայում են: Թաղամասը չունի նաև արհեստի, արվեստի ուղղությամբ երեխաների զարգացման հնարավորություն: Նմանատիպ վատ վիճակում են գտնվում նաև քաղաքի հարավային թաղամասերը, մասնավորապես "Սեվերսկի" և "Կազաչի Պոստ" կոչվող թաղամասերը, որտեղ ընդհանրապես երեխաների համար ոչ մի զարգացման, խաղի ու ժամանցի հնարավորություն չկա: Հագեցած են հիմնականում քաղաքի կենտրոնական թաղամասերը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով բաց է մնում երեխաների և մանկավարժների հետ հոգեբանական ծառայություն մատուցելու կարիքը կամ աշխատող ծնողների համար երեխաների արտադպրոցական ժամերին խնամքի և զբաղվածության հարցը: Գյուղական համայնքների մեծամասնությունում չկան երեխաների համար զբաղվածության և այլընտրանքային զարգացման ծառայություններ՝ սպորտ, մշակույթ և այլն:

Քննարկումների մասնակիցներից ոմանք կարևորում են համայքնում սոցիալական ծրագրերը մշակելիս հաշվի առնել շահագրգիռ կառույցների կարծիքը ևս: Սա հնարավորություն կտա թիրախային առաջարկություններ ներկայացնել և ճիշտ առաջնահերթություններ սահմանել, հետևաբար առկա պետական և ոչ պետական ռեսուրսները ավելի թիրախավորված հատկացնել:

Յուրաքանչյուր տարի՝ կախված խնդիրներից և առկա բյուջեից, սոցիալական աջակցությունների համար տրամադրվող հատկացումները տարբեր են լինում:

*«Այս տարի, օրինակ, պատերազմի հետևանքով տուժած մեր հայրենակիցներին աջակցելու նպատակով համայնքի բյուջեից զգալի աջակցության ծրագրեր եղան, թեև նախապես չէր պլանավորված: Ամեն տարի կարիքավոր ընտանիքներին դրամական աջակցություն տրվում է, երեխաներին սեպտեմբերին գրենական պիտույքներ և պայուսակներ տրվում է, և այլ ծրագրեր, բայց կոնկրետ գումարի չափը այս պահին նշել չեմ կարող»,-նշել է հարցվողներից մեկը:*

Քննարկումների մասնակիցները նշում են, որ համայնքում առկա են ներքոնշյալ գրեթե բոլոր ռեսուրսները՝

- Պետական բյուջե,
- Միջազգային դոնորներ
- Հասարակական կազմակերպություններ
- Սփյուռքի աջակցություն
- Եկեղեցի
- Մասնավոր բիզնես/գործարարներ
- Արտերկրում գտնվող համագյուղացիներ/համաքաղաքացիների դրամական փոխանցումներ
- Կամավորներ
- Բարեկամների, հարազատների, հարևանների ներուժ

Քննարկումների մասնակիցներից ոմանք նկատում են, որ մարդիկ արդեն սովորել են իրենց կարիքների մասին բարձրաձայնել. բնակիչները իրազեկված են, թե ո՞ւմ կարելի է դիմել, ի՞նչ ծառայությունների կարիք ունեն: Բացի այդ, խոցելի խմբերի կարիքները վեր են հանվում իրավապաշտպանությամբ, սոցիալական աջակցությամբ զբաղվող ՀԿ-ների և այլ կառույցների կողմից: Պետությունը, իր հերթին իրեն հասանելի մեթոդներով փորձում է վեր հանել հասարակության խնդիրները:

Միաժամանակ, քննարկումների մասնակիցներից ոմանք նկատում են, որ չնայած հանրային քննարկումները բաց են, մուտքն ազատ է և նախապես հեռուստատեսությամբ հայտարարվում է դրանց մասին, այնուամենայնիվ, բնակչությունը, ինչպես նաև խոցելի խմբերի անդամներն ակտիվություն չեն ցուցաբերում այդ քննարկումներին մասնակցելու հարցում: Հիմնականում հանրային քննարկումներին մասնակցում են ՀԿ-ները և խոցելի խմբերի շահերը ներկայացնող կազմակերպությունները:

Ինչ վերաբերում է պետական և ոչ պետական ծառայությունների վերաբյալ բնակչության տեղեկացվածության մասին, հարցվողների պատասխաններից հնարավոր է ենթադրել, որ բնակչության մեծ մասն ունի տեղեկացվածության խնդիր: Մասնակիցների պատասխաններից պարզ է դառնում, որ բնակչությունը, պետական ծառայություններից, հիմնականում տեղյակ է միայն նպաստ համակարգի և ՏՊ-ների կողմից մատուցվող ծառայությունների մասին: Միաժամանակ, բնակիչները տեղեկացված չեն ՄԱԾ-ների գործունեության մասին: Անդրադառնալով ոչ պետական ծառայություններին՝ քննարկումների մասնակիցները նշում են, որ տեղյակ են այնքանով, որքանով ՀԿ-ների հետ առնչություն են ունեցել: Հարցվողներն առանձնացրել են քաղաքում գործող հետևյալ հասարակական կազմակերպությունները՝ «Ազաթ», «Փյունիկ», «ՎորլդՎիժն», «Կարիտաս»:

Հարցվողները նշում են, որ ծառայությունների սպասարկման որակը շատ վատ է: Նման կարծիքի համար հիմք են հանդիսացել մի շարք հանգամանքներ՝ նախ աշխատակիցները տեղյակ չեն ծառայություններից, բացի այդ, չկան համապատասխան պայմաններ և միջոցներ որակյալ ծառայությունների մատուցման համար:

Հատկապես շեշտադրվում է տարբեր օղակների աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի խնդիրը: Ըստ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների՝ իրենք վատ վերաբերմունքի են արժանացել ինչպես բժշկական ծառայություններից օգտվելու ժամանակ, այնպես էլ համայնքապետարան դիմելիս: Միաժամանակ, ծնողները գոհունակություն էին հայտնում վերականգնողական կենտրոնի աշխատակիցների վերաբերմունքից:

*«Երբ ինչ-որ հարցով դիմել ենշք ՍԱՏԳ-ի աշխատակցին տեղեկություններ ստանալու համար ոչ միայն պատասխան չենք ստացել, այլև շատ կոպիտ վերաբերմունքի ենք արժանացել»:*

Մասնակիցներից ոմանք նշում են, որ մատուցվող ծառայությունների որակը չի փոխվել ու չի էլ փոխվի, քանի դեռ մտածելակերպ չի փոխվել: Մարդիկ պիտի սրտացավ վերաբերեն իրենց ռեսուրսներին և հասցեական ծառայություն մատուցեն:

Միաժամանակ, մասնակիցներից ոմանք նշում են, որ գրանցվել են դեպքեր, երբ մարդիկ՝ առիթից օգտվելով մի քանի անգամ տարբեր ծառայություններից են օգտվել և այդ մասին չտեղեկացնելով այլ կառուցի, վերջինս ծառայություններից ևս օգտվել, իսկ շատերը այդպես էլ որևէ ծառայությունից չեն օգտվում՝ պարզապես չեն ուզում տեղից շարժվել:

*«Ներկայացրած խնդիրները հիմնականում լուծումներ չեն ստացել, եթե ստանային հիմա այդ խնդիրները չէին լինի: Բոլոր տեղերում գործում է «ծանոթ–բարեկամ» մոտեցումը: Դրա պատճառը ը և՛ բնակիչների, և՛ կառույցների ղեկավարների կողմից անհետևողականությունն է:*

Ծառայություններ մատուցող կազմակերպությունները հիմնականում կենտրոնում են տեղակայված, իսկ ծայրամասերում ապրող սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչները երբեմն անգամ տրանսպորտի գումար չունեն, որպեսզի ծառայություն ստանալու համար կազմակերպություններ հասնեն:

***Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը***

Գյումրիում ոչ պետական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցային դաշտը բավականին զարգացած է, ինչը հստակ դրսևորվեց հատկապես պատերազմից տուժած ընտանիքներին աջակցություն ցուցաբերելիս:

Սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ներից քննարկումների մասնակիցները առանձնացնում են «Հայկական Կարիտաս», «Վորլդ Վիժն», «Առաքելություն Հայաստան», «Կարմիր Խաչ» հասարակական և բարեգործական կազմակերպությունները, որոնք բազմաթիվ ծառայություններ են իրականացնում և՛ անհատների և՛ դպրոց-մանկապարտեզների, և՛ պոլիկլինիկաների համար: Այդ ծրագրերի շրջանակներում վերապատրաստում են մանկավարժներին, ստեղծում են խմբակներ երեխաների համար, հոգեբանի, լոգոպեդի ծառայություններ և այլն:

*«Եղել են ծրագրեր, որոնք իրականացվել են որևէ ՀԿ-ի և գյուղապետարանների համատեղ ֆինանսավորմամբ: ՀԿ-ները ևս կարևորում են այդ համաֆինանսավորումը և շատ հաճախ ծրագրերի իրականացման պարտադիր պայման է գոնե 10% համաֆինանսավորումը»:*
Մասնակիցները որպես ՀԿ-համայնք համագործակցության օրինակներ են նշում՝

- «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպությունը, համայնքապետարանի հետ համատեղ իրականացնում է սոցիալապես անապահով ընտանիքների էլեկտրաէներգիայի և գազի վճարների փոխհատուցման ծրագիր:

- Վորլդ Վիժնը Հայաստանը համայնքապետարանի հետ համագործակցությամբ ապահովեց սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար գրենական պարագաները:

- Մուշ-Զարգացման կենտրոն ՀԿ-ի և համայնքապետարանի հետ Մուշ թաղամասում նախադպրոցական կրթության ծրագիր է իրականացվում և այժմ համայնքապետարանը շենք է կառուցում, որտեղ տեղակայվելու է մանկապարտեզը:

## ***<u>Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների</u>***

Գյումրի քաղաքի հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրները կարելի է առանձնացնել

- Աղետի գոտու խնդիրները:
- Աշխատատեղերի պակասը:
- Բազմազավակ ընտանիքների արտոնությունների հարցը:
- Գյումրին՝ պետական հիմնական ծրագրերից դուրս մնալու խնդիրը:

Հարցվողների մեծամասնության կարծիքով Գյումրի քաղաքի թիվ մեկ խնդիրը գործազրկությունն է:

*«Մարդիկ աշխատանք չունեն, աշխատողների աշխատավարձն էլ այնքան քիչ է, որ հազիվ բավարարում է օրվա հացի համար, այլ ծախսերի մասին շատերը երազում են»:*
Ըստ ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների, համայքնում կարիքները շատ են, իսկ դրանց կարգավորմանն ուղղված միջոցները՝ քիչ: Հետկանշական է, որ քննարկման մասնակիցներից շատերը դժվարանում էին այս հարցին պատասխանել, քանի որ ըստ իրենց *«ամեն ինչն էլ խնդիր է»:* Սակայն հիմնական կարիքների շարքում առանձնացնում էին հետևյալները՝

- **Աշխատատեղերի կարիք կա**, որպեսզի մարդիկ դուրս գան սոցիալապես վատ վիճակից, անհրաժեշտ է ունենալ աշխատատեղեր:

- **Երեխաների զբաղվածության ապահովման անվճար կենտրոնների կարիք կա**: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները չունեն

զբաղմունք, զարգացման կենտրոններ հաճախելու հնարավորություն, քանի որ ֆինանսական միջոցներ չունեն:

- **Խաղահրապարակների, այգիների, ժամանցի կազմակերպման վայրերի ստեղծման անհարժեշտություն:** Ե՛վ հաշմանդամություն ունեցող երեխաների, և խնդիրներ չունեցող երեխաների համար ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելու հարցը դեռևս մնում է չլուծված:

- **Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական ծառայությունների հասանելիության և մատչելիության կարիք կա**: Երեխաները տարիներով մնում են հերթի մեջ՝ մեկ կամ երկու ամիս վերականգնողական կուրս անցնելու համար:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղաշարժման սահմանափակումների վերացման կարիք:** Գյումրի քաղաքում առկա է թեքահարթակների խնդիր. համայնքի ոչ բոլոր հատվածներում կան թեքահարթակներ, եղածներն են սխալ են կառուցված: Համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է նաև տրանսպորտի հանհասանելիության հարցը: Անձինք, ովքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, չեն կարողանում քաղաքի տարբեր հատվածներ հասնել, քանի որ չկա հարմարեցված հանրային տրանսպորտ:

- **Բնակչության՝ տրանսպորտի հասանելիության հարցը:** Հիմնականում երեկոյան 20:00-ից հետո հանրային տրանսպորտը չի աշխատում, հատկապես ծայրամասային թաղամասերում չի աշխատում :

- **Թափառող շների հարցի արդյունավետ լուծում**: Բնակիչները վախենում են երեկոյան ժամերին դուրս գալ տանից, չկա կառույց ԹԿՎԿ, որը կարողանա զբաղվել թափառող շների հարցով:

- Քաղաքի ծայրամասային հատվածներում **տնակներին կից առկա բաց էլեկտրական լարերի** հարցի կարգավորումը:

***<u>Առաջարկներ</u>***

- Աշխատատեղերի ստեղծում
- Համայնքային երկարօրյա դպրոցներ
- Տաղանդավոր երեխաների համար անվճար ակադեմիաներ
- Երեխաների համար համալիր ծառայությունների անվճար կենտրոն
- Մուշ թաղամասում ժամանցի և զարգացման համալիր կենտրոն
- Մուշ թաղամասում եկեղեցի
- Հաշմանդամություն ունեցող անձանց ձեռքի աշխատանքների իրացման հնարավորություն
- Անվճար իրավաբանական ծառայություն հատկապես հաշմանդամ անձանց համար
- Քիչ ժամաքանակով աշխատանքի հնարավորություն հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար
- Արհեստագործական խմբակներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ատամնաբուժարան
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար անվճար կենտրոն՝ դպրոցից հետո երեխաների զբաղվածության ապահովման համար
- Ծերերի զբաղվածության կենտրոն
- Տարեցների հանգստի փաթեթները
- Վերահսկող ծառայություն, որն ամեն ամիս կվերահսկի ծառայությունների որակը, սպասարկման մակարդակը, հասցեականությունը
- Կանանց տնտեսական զարգացմանն ուղղված ծառայություններ մատուցող կառույցի ստեղծում

- Հոգեբանական ծառայությունների մատուցման կենտրոն
- Ճիշտ թեքահարթակներ, գետնանցումներում շարժաասանդուղքներ կառուցելու անհրաժեշտություն

Ըստ մասնակիցների, որակյալ սոցիալական ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է՝

- Ապահովել համապատասխան ֆինանսավորում,
- Ապահովել որակյալ մասնագետներ,
- Վապահովել անհրաժեշտ վերահսկողություն,
- Հաշվի առնել բնակիչների կարծիքները,
- ծառայության մատուցման կենտրոնի ղեկավար լինի համայնքի խնդիրներին ծանոթ, սրտացավ մարդ,
- պետությունը պետք է ուշադրություն դարձնի նաև մանկապարտեզներին հոգեբանի, լոգոպեդի և այլ անհրաժեշտ մասնագետների հաստիքների տրամադրմանը,
- փոխել մարդկանց մտածելակերպը

## 2.3.2. ՄԱՐՄԱՇԵՆ

| | |
|---|---|
| **Խոշորացված համայնքում ներառված բնակավայրերի թիվը** | 18 գյուղական համայնք |
| **Բնակչության թիվ** | 10,952 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 3,309 |
| **Երեխաների թիվ** | 2,348 |
| **Նպաստառու տնային տնտեսությունների թիվ** | 372 |
| **Տեղական սոցիալական պլանի առկայությունը** | Առկա է |
| **Սոցիալական աշխատողի առկայություն** | Առկա է |
| **Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ** | 1 |
| **Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը** | 36<br>(18-65 տարեկան՝ 28, 65+ տարեկան՝ 8) |
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 2 |

***Համայնքի մասին***

Հարցվողները համայնքը նկարագրում են այսպես՝ Մարմաշենը խոշորացված գյուղական համայնք է, որի կազմում մտնում է 16 գյուղ: Նստավայրը՝ գյուղապետարանը, գտնվում է Մայիսյան գյուղում:

Մարմաշենը Գյումրի քաղաքից գտնվում է 7կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գանլըջա, Գալինջա, Գանըճա Վերին, Ղալանչա, Ղանլաչա, Ղանլիճա, Մարյամ Նիշին, Մերեմ Նիշին անվանումները: Մարմաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղի մոտով անցնում է Գյումրի-Աշոցք ավտոխճուղին և Շիրակի ջրանցքը: Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1620մ բարձրության վրա:

***Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները***

Գյուղի շրջակայքում է գտնվում Մարմաշենի վանքը և նրա շրջակա երեք եկեղեցիները: Գյուղի անվանումը կապված է վանքի անվան հետ: Ըստ Կիրակոս Գանձակեցու վանքը իր անվանումը ստացել է իբրև մարմարակերտ լինելու պատճառով: Այդ փաստը ժխտում է Ղևոնդ Ալիշանը և վանքի անվանումը կապում է Աբխազիայի Մարիամ թագուհու հետ: Վանքի գլխավոր կառույցը կաթողիկե ս. Ստեփանոս եկեղեցին է, որի պատերից մեկի վրա թողնված արձանագրությունը վկայում է, որ այն կառուցել է Վահրամ Պահլավունին՝ 988-1029թթ: Եկեղեցուն կից գերեզմանում հենց թաղված է Վահրամ Պահլավունին, նրա կինը՝ տիկին Սոփին: Միջնադարում այն եղել է կրոնական և մշակութային կենտրոն: Շրջակայքում կան հին բնակավայրի, քարայր-բնակավայրեր: Մարմաշենի մոտ 2կմ արևմուտք ժայռի վրա գտնվում է

ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրություններից մեկը: Մոտակայքում գտնվում են նաև Մարմաշենի բերդի ավերակները:

Համայնքն ունի միջնակարգ և երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 526հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 34 և 320 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Գյուղում զբաղվում են տուֆի արդյունահանմամբ:

## ***<u>Զբաղմունքը/աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները</u>***

Մարմաշենի կազմի մեջ մտնող բնակավայրերը հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Կան համայնքներ, որտեղ կան նաև մասնավոր մարդկանց պատկանող ֆերմերային տնտեսություններ: Գյուղերը հիմնականում իրարից իրենց տնտեսական վիճակով չեն տարբերվում, սակայն կան գյուղեր, որտեղ խնդիրները մի քիչ ավելի են. ջուր չունեն, ոռոգում չեն կարող իրականացնել, մյուսներում լուսավորության, ցանքատարածքների խնդիր կա և այլն: Մարդիկ ամեն տարի ավելի լավ են կողմնորոշվում, թե ինչ ցանեն, ինչից եկամուտ ստանան: Օրինակ Աշոցքը իր խոտհարկի տարածքները սկսել է օգտագործել որպես ցորենի ցանքատարածք: Մյուս համայնքներում արդեն յոթ տարի է, ինչ կարտոֆիլ, գարի և ցորեն են մշակում, ինչպես նաև եգիպտացորեն՝ անասնակերի համար:

Համայնքներում արտադրական ընկերություններ չկան:

Հարցվողների մի մասը գտնում է, որ համայնքի տնտեսական վիճակը վերջին տարիներին փոխվել է դեպի վատը՝ COVID19 համավարակ, պատերազմ, զնաճ, որոնք չեն կարող ազդեցություն չունենալ համայնքի և ընդհանուր երկրի տնտեսության վրա: Մի քանի տարի առաջ էլ գյուղացին իր հողի վրա աշխատում էր իր ընտանիքը պահելու, երեխաներին կերակրելու համար, հիմա էլ: Համայնքի բնակիչների հատկապես աշխատանք չունեցող մարդկաց վիճակը ծանր է:

*Հիմնական դժարությունը երեխաների դպրոցական ծախսերն են: Երեխային առաջին դասարան ուղարկելու համար նվազագույնը 80.000 ՀՀ դրամ է հարկավոր:*

Համայնքում կանանց մեծամասնությունը գործազուրկ է, հիմնական աշխատատեղը բնակավայրերի դպրոցներն են և համայնքապետարանները: Տղամարդիկ աշխատանք են փնտրում արտերկրում, իսկ համայնքում աշխատանք են փնտրում նույնիսկ աշխատանք ունեցողները և երիտասարդները: Գործազրկության տեսանկյունից **առավել խոցելի** են երիտասարդներն ու կանայք: Կանայք աշխատանք չունենալու պատճառով զբաղվում են միայն տնային տնտեսությամբ, իսկ երիտասարդները մասնագիտությամբ աշխատանք չգտնելու պատճառով կա՛մ գնում են համայնքից, կա՛մ ստիպված անցնում են գյուղատնտեսական օրավարձով կամ սեզոնային աշխատանքների: Համայնքներում աշխատուժը էժան է վարձատրվում, մարդիկ նախընտում են աշխատանք փնտրել արտերկրում:

*Հանրային ծառայություններ, տեսականին և մատչելիություն*

Մարմաշեն համայնքի և սուբվենցիաների շնորհիվ իրականացրել են հետևյալ ծրագրերը՝

- 2021 թվականին մանկապարտեզների գործարկում հինգ համայնքներում/ 333.344.408 դրամ, որից 133.337.763-ը՝ համայնքի ներդրում,
- 2020 թվականին Մանկապարտեզների գործարկում հինգ համայնքներում, Լենգեսում կտուրի վերանորոգում, Մայիսյանում՝ կայանատեղիի կառուցում, Փոքրաշենում՝ վարչական կենտրոնի կառուցում և ութ հատ հակակարկտային կայանի կառուցում -286.440.654 դրամ, որից 130.775.098-ը՝ համայնքի ներդրում,
- 2019 թվականին ձեռք է բերվել երեք խոշոր տեխնիկա, տեղադրվել է մեկ ֆոտովոլտային կայան, հինգ տեղ՝ հակակարկտային կայան և մեկ կտուրի վերանորոգում - 118.493.400 դրամ, որից 58.027.294-ը՝ համայնքի ներդրում և 60.466.106 դրամը՝ ՀՀ կառավարության ներդրում:

Հարցվողներից մի քանիսը նշել են, որ պետական աջակցությունների շրջանակներում հիմնական օգնությունը եռամսյակային աջակցությունների տեսքով են՝ կարիքավորներին: Նշել են, որ ոչ պետական կառույցներից միայն ՎՎՀ և Կարիտաս ՀԿ-ների կողմից են լինում տարբեր ծառայություններ, բայց դրանք հասցեական չեն լինում:

Հարցվողներից մեկը նշել է, որ վատ վարմունք և վատ փոխհարաբերություններ ունեցող ընտանիքների հետ աշխատում է միայն քահանան, իսկ աղքատ ընտանիքների հետ աշխատում են ՀԿ-ները և եկեղեցին իրենց միջոցներով: Ծառայություններ մատուցող կազմակերպություններից են Վորլդ Վիժնը, Հայկական Կարիտասը: Կազմակերպությունները հիմնականում աջակցում են հումանիտար աջակցություններ տրամադրելով՝ հագուստ, սնունդ, գույք, մասնագիտական կրթություն, բնակարանի վերանորոգում, անասունների տրամադրում:

Տևական ժամանակ լուծում չստացող խնդիրներից հարցվողները նշում են, որ աղքատության կրճատումը մնում է լուրջ խնդիր, եղած ծրագրերն ամբողջապես չեն լուծում խնդիրը:

*Մեջբերվում է մի օրինակ. «Վորլդ Վիժնը ընտանիքների կանանց մասնագիտանալու հնարավորություն է տվել, ապահովել է աշխատանքային գործիքներով, ինչի արդյունքում ընտանիքում եկամուտ է ավելանում: Բայց մի համայնքում միևնույն գործով զբաղվող մի քանի մատնահարդար կամ վարսահարդարներ կան, այդքան հաճախորդ չկա: Դրան զուգահեռ այլ մոտեցումներ էլ են հարկավոր: Աղքատության մեջ ապրող մարդիկ վատ են սնվում և առողջական խնդիրներ են ունենում և բուժման համար միջոցներ չեն ունենում: Առողջական խնդիրները թույլ չեն տալիս նաև գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել»:*

Հարցվողները նշել են, որ ծրագրերի իրականացման համար հիմնական խանգարող գործոնը ռեսուրսների անբավարարությունն է, ինչպես նաև աշխատողների ոչ բարեխիղճ վերաբերմունքը:

***Համայնքի սոցիալական կարիքները հոգալու նպատակով համայնքում առկա ռեսուրսներից հարցվողները առանձնացրել են՝***

- Պետական-տեղական բյուջե, սուբվենցիաներ
- Հասարակական կազմակերպություններ
- Եկեղեցի
- Մասնավոր բիզնես/գործարարներ
- Արտերկրում գտնվող համագյուղացիներ/համաքաղաքացիների տրասֆերտներ

***Տեղեկացվածություն***

Քննարկումների մասնակիցները նշում են, որ համայնքաբնակները տեղյակ են պետական սոցիալական ծառայություններից, ավելի հաճախ առնչվել են սոցիալական ծառայության և պոլիկլինիկաների հետ: Ոչ բոլոր համայնքներում է, որ աշխատում են հասարակական կազմակերպությունները: Երբեմն լինում են կարճատև միջամտություններ ՀԿ-ների կողմից՝ «Հայկական Կարիտաս», «ՄԱԿ», «Ընտանիք» կենտրոն: Հարցված երկու համայնքներում աշխատում է «Վորլդ Վիժն Հայաստան»-ը, համայնքներից մեկում ընդհանրապես որևէ մասնավոր կամ հասարակական կազմակերպություն չի գործում:

Համայնքներում տեղեկատվության հիմնական աղբյուրը համայնքպետարանն է և համայնքի ակտիվ բնակիչները:

Այն ծառայությունները, որոնք համայնքը չունի, կամ վճարովի է և այլ մարզում է գտնվում, հասանելի չէ աղքատ ընտանիքների համար:

Համայնքում կան մարդիկ, ովքեր կարիք ունեն, բայց  հաշվառված չեն ընտանեկան նպաստ համակարգում: Աշխատանք ունեցող մարդիկ ևս կարիք  են ունենում  տարբեր տեսակի սոցիալական աջակցությունների հատկապես գյուղատնտեսկան զարգացման ծրագրերի, սակայն աջակցությունների մեծ մասը բաժին է հասնում նպաստառուներին:

Համայնքում առկա սոցիալական ծրագրերի մասին համայքաբնակները հեշտությամբ են իմանում: Բայց համայնքից դուրս գործող ծառայությունների իրենց հասանելիք իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը ցածր է:

Համայնքաբնակները հիմնականում ավելի  երկար և տևական  օգտվել են պետական ՍԱՏԳ/ ՄՍԾ մատուցած ծառայություններից: Որակի փոփոխության շուրջ տարակարծություններ կան. մի մասը նկատում է դրական փոփոխություններ, մի մասը չի նկատում:

Հաշմանդամություն ունեցող երեխաները այլ համայնքներում են ստանում վերականգնողական ծառայություններ: Նեղ մասնագիտական աջակցություն՝ հոգեբանական, լոգոպեդական, երեխաները ստանում են դպրոցներում: Սակայն մասնագետների ունեցած հմտությունները չեն բավարարում և աշխատանքի որակը չի գոհացնում ծնողներին: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծնողները դիմում են այլ մասնագետների, կամ երեխային տանում են այլ  համայնքի դպրոց:

***Բավարարվածություն***

Մասնակիցները նշում են, որ որոշ համայնքաբնակներ օգտվել են ոչ պետական ծրագրերից՝ «Վորլդ Վիժն» և եկեղեցի  քահանայի միջամտությամբ:

Համայնքներից մեկում որևէ ծառայություն, որևէ խոցելի խմբի համար չկա: Երեխաները մանկապարտեզ կամ խմբակներ գնալու համար գնում են Գյումրի: Ինչն էլ ոչ բոլորին է հասանելի: Դպրոցի շենքն ու պայմանները բավարար չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ դպրոցը չունի թեքահարթակ, համապատասխան զույք: Սակայն կան երեխաներ, որոնց համար կազմակերպվում է տնային ուսուցում:

Համայնքներում կան խոցելի ընտանիքներ, ովքեր օգտվում են սոցիալական պետական և ոչ պետական ծառայություններից: Լինում են դեպքեր, երբ մարդիկ չգիտեն, ուր պիտի դիմեն: Լինում է նաև, որ չեն ուզում դիմել, իրենց կյանքում, կենցաղում փոփոխություններ չեն ուզում անել:

Մատուցվող ծառայությունների մեծ մասը Գյումրիում են և հասանելի ու մատչելի են միայն որոշ չափով ապահովված ընտանիքների համար, ովքեր մեքենա ունեն, կարողանում են տանել երեխաներին, ովքեր ի վիճակի են վարձավճարներ տալ:

Համայնքաբնակների մեծ մասը կարծում են, որ ծառայություններում սպասարկման որակը վատ է մարդկանց հստակ չի ներկայացվում, թե ինչ պատճառներ կան, որ իրենք այս կամ այն ծառայությունը չեն կարող ստանալ: Մարդիկ արժանացել են ծառայություն մատուցողների կողմից անհետևողական, անփույթ վերաբերմունքի:

Համայնքում անլուծելի են բնակարանային ապահովման խնդիրները: Լուծվել են հիմնականում այն խնդիրները, որոնց համար բնակիչները դիմել են համայնքի ղեկավարին և ստացել են նյութական աջակցություններ համայքնի բյուջեից: Լուծվել են նաև բնակիչների կողմից պետական սոցիալական և առողջապահական համակարգեր ներկայացված խնդիները:

Համայնքում պետական ծառայություններից բացի այլ ծառայություններ չեն մատուցվում: Համայնքի սոցիալական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքներ է տանում համայնքապետարանը, անհատական գումարային աջակցությունների տրամադրմամբ, անձնական կապերի օգտագործմամբ, ուղղորդմամբ:

Մատուցվող ծառայությունները փոքրաթիվ են և չեն բավարարում համայնքի սոցիալական կարիքները, քանի որ տարեցների, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ երեխաների և չափահաս անձանց համար ծառայություններ չկան:

## ***Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը***

Հարցվողներից մի քանիսը նշել են, որ համայնքում գործում են ՀԿ-ներ և համայքնը համագործակցում է «Վորլդ Վիժն»ի, «Սրբազան Հող», «Հայկական Կարիտաս» հասարակական կազմակերպությունների հետ: Նշում են, որ համագործակցում են նաև Գյումրիի «Ընտանիք» կենտրոնի հետ, որը նախարարությունից է ֆինանսավորվում, և որը Մարմաշեն գյուղում ունի երգի, պարի խմբակներ:

Համայնքի համաֆինանսավորմամբ ՀԿ-ների կողմից իրականացված ծրագրերի փորձ համայնքն ունեցել է: Օրինակ տարիներ առաջ Վորլդ Վիժնի հետ իրականացրել են սոցիալապես անապահով ընտանիքներին սերմացուի, վառելիքի և պարարտանյութի տրամադրման ծրագիր: Նաև Կարիտասի օգնությամբ և համայնքի համաֆինանսավորմամբ մասնակի ծրագրերի խնդիրներ են լուծվել: Վորլդ Վիժնը նաև որոշ համայնքներում խաղահրապարակներ է տեղադրել, մանկապարտեզների և դպրոցների մանկավարժներ է վերապատրաստել և նմանատիպ այլ ծրագրեր էլ են եղել: Համագործակցաբար նաև զոհվածների ընտանիքների աջակցությունն է կազմակերպվել:

Հարցվողները նշել են, որ համայնք-համայնք սոցիալական ծրագիր չի իրականացվել, բայց համայնք-հասարակական կազմակերպություն կամ համայնք-բիզնես/անհատ բարերար երբեմն եղել են:

## ***Սոցիալական հիմնական խնդիրները՝ ըստ հարցվողների***

Հարցվողները համայնքի ամենաարդիական խնդիրներից նշել են հետևյալները՝

**-դպրոցների և մանկապարտեզների շենքային և գույքային հագեցվածության խնդիրը,**

**-որոշ համայնքներում մանկապարտեզների և ակումբների հիմնումը, որտեղ երեխաներն ու երիտասարդները, ինչու չէ, նաև մեծահասակները զբաղմունք կունենան,**

**-գյուղատնտեսական տեխնիկա, հակակարկտային կայանների հիմնում,**

**-ոռոգման և խմելու ջրերի ջրագծերի կառուցում, ոռոգման խնդրի լուծում դարձյալ մի քանի համայնքներում:**

**-սոցիալապես անապահով խավին աջակցություն՝ սոցիալական ծրագրերի շրջանակներում, որպեսզի կարողանան հաղթահարել տարվա երաշտի հետևանքները կամ այլ խնդիրներ:**

Որոշ հարցվողներ համայնքի ամենաարդիական խնդիրը համարում են կրթական և սոցիալական խնդիրները: Նշում են, որ կան գյուղեր օրինակ՝ Հովունին, որտեղից երեխաները լավ, որակով կրթություն ստանալու համար գնում են քաղաք, հատկապես բարձր դասարաններից: Դպրոցներում աշակերտների թիվը կրճատվում է, զարգանալու այլընտրանքները քիչ են գյուղում, իսկ սոցիալական ծանր վիճակի հետ կապված աղքատ ընտանիքների երեխաները մնում են գյուղում, նրանց ծնողներն էլ միջոցներ չունեն երեխաներին ապահովել անհրաժեշտ պարագաներով, մարդիկ չեն կարողանում երեխաներին պատշաճ ձևով դպրոց ուղարկել: Անշուշտ, այդպիսի ընտանքիները սոցիալական աջակցության կարիք ունեն և օգնում են այդ ընտանիքներին հարազատ-բարեկամները, հասարակական կազմակերպությունները, անհատ բարերարներն ու համայնքապետարանը: Չեն թողնում, որ երեխան դուրս մնա կրթությունից, բայց միևնույնն է ընտանիքը մնում է սոցիալական ծանր վիճակում:

Հարցվողները նշում են, որ տղամարդկանց մեծ մասը աշխատանք է փնտրում արտերկրում, կանայք էլ հիմնականում, եթե տնամերձ հողատարածք չունեն, անասուններ չունեն տեղի ֆերմաներում որպես կթվորուհի կամ ջերմոցներում են աշխատանք փնտրում: Սակայն նշված վայրերում աշխատատեղերը շատ չեն մի կամ երկու տասնյակ ոչ ավել, մնացած մասը սեփական հողի վրա է աշխատում:

Հարցվողներից համայնքի առաջնային խնդիրներից է համարում տրանսպորտի բացակայությունը, որի հետևանքով առաջացնում են այլ ավելի լուրջ խնդիրներ: Օրինակ Մայիսյան գյուղում լոգոպեդական ծառայության կարիք ունեցող երեխան տրանսպորտի բացակայության պատճառով չի կարողանում գալ քաղաք, ծառայությունից օգտվելու և նրա խնդիրներն ավելի են խորանում: Հարցվողը նշում է, որ նման օրինակները շատ են: Նա հավելում է նաև, որ մեծագույն խնդիր է երեխաների զբաղվածության բացակայությունը: Երեխաները դպրոցից հետո զբաղվածություն չունեն:

Գործազրկության հարցի վերաբերյալ հարցվողները նշել են, որ աշխատատեղերը գյուղական համայնքներում շատ քիչ են, մարդիկ հիմնականում ինքնազբաղված են, մշակում են իրենց հողատարածքները և պահում անասուններ: Բայց երիտասարդ մասնագետների համար, բնականաբար աշխատատեղեր են անհրաժեշտ, իսկ գյուղերում սահմանափակ են՝ դպրոց, համայնքի վարչական մաս, որոշ տեղերում էլ՝ մանկապարտեզ: Նշել են, որ վերջին երկու տարում աշխատատեղեր են ստեղծվել՝ 6 հոգի տեխսպասարկման կենտրոնում են աշխատում, ևս 5-ը մինչև տարեվերջ կընդունվեն: Նոր բացվող նախակրթարաններից յուրաքանչյուրում 10-11 աշխատատեղ կլինի: Այժմ համայնքապետարանն ունի 84 աշխատող

Համայքնում խոցելի են՝ հաշմանդամություն ունեցող երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները, աշխատող առողջ մարդիկ, վատ կենցաղային պայմաններում, տնակներում ապրողները: Քանի որ այս խմբերի համար համայնքում ծառայություններ չկան:

Համայնքի առաջնային խնդիրներից են՝

✓գործազրկություն,

✓եկամուտ չապահովող գյուղատնտեսություն,

✓ցածր աշխատավարձ,
✓ հողագործությամբ, անասնապահությամբ զբաղվելու համար միջոցների բացակայություն,
✓համատարած վարկային պարտավորություններ,
✓ առողջապահական և կրթական ծախսերը հոգալու դժվարություն:

Ընդհանուր առմամբ՝ խոցելի խմբերի շատ ստվար մաս է մասնակցում հանրային քննարկումներին: Մարդիկ իրենք հետաքրքրություն չեն ցուցաբերում, թերահավատորեն են մոտենում և նմանատիպ միջոցառումներից արդյունքներ չեն սպասում:

*Կարիքների թիրախավորման մասին խոսելիս Մարմաշեն համայնքի ղեկավարը նշել է. «Մենք ամենօրյա շփման և հաղորդակցության մեջ ենք մեր բնակիչների հետ: Յուրաքանչյուր գյուղի վարչական պատասխանատու հստակ գիտի իր գյուղի կարիքները և բնակիչների հետ քննարկում է դրանց լուծման հնարավորությունները: Մենք էլ, որքան հնարավոր է, փորձում ենք լուծումներ գտնել»:*

Համայնքում անպաշտպան խմբերի վերաբերյալ հարցվողները տարբեր կարծիքներ ունեն, մի մասը կարծում է, որ անպաշտպան խմբեր չկան, պարզապես կան խնդիրներ, որոնք անհրաժեշտ են լուծել:

Հարցվողներից մի քանիսը գտնում են, որ խոցելի են այն ընտանիքները, որտեղ փոխհաբերություններում դժվարություններ կան, որտեղ բռնություններ և վատ վարմունք կա երեխաների և կանանց հանդեպ: Եվ առավել խոցելի են զոհված զինվորների ընտանիքները և պատերազմից վերադարձած զինվորները: Անպաշտպան են վիրավորում ստացած զինվորները, նրանց առողջական խնդիրները պետություն կողմից մասամբ են լուծված:

Հարցվողները նշում են, որ համայնքում տքնաջան աշխատանքով վաստակած գումարը չի բավարարում մարդկանց ընտանիքների կարիքներին, իսկ եթե վատ տարի է լինում և բերք չի լինում, օրինակ այս տարի չորային էր, խոտ նույնիսկ չկա անասունների համար, հետևաբար այդ գյուղերում ապրող բնակիչների մի տարվա ապրուստը կասկածի տակ է դրվում: Հատկապես դժվար է վարկային բեռ ունեցողների համար, թեև համայնքուիմ գրեթե մարդ չկա, որ վարկ չունենա: Բոլոր սոցիալական խնդիրները պայմանավորված են կայուն եկամուտների բացակայությամբ, ինչու չէ, նաև համայնքի ենթակառուցվածքների թերզարգացմամբ, ծառայությունների բացակայությամբ:

Հարցվողներից մի քանիսը նշում է, որ խնդիրները մասնակիորեն լուծվում են համայնքային միջոցների, մասամբ էլ տարբեր կազմակերպությունների ներդրումների հաշվին:

Հանրային քննարկումներին խոցելի խմբերի մասնակցության վերաբերյալ հարցվողների կարծիքները ատրբեր են. Մի մասը նշծում է, որ հանրային քննարկումների մասին համայնքի բնակիչները իրազեկվում են, մյուս մասը կարծում է, որ իրազեկում չի լինում, հետևաբար մասնակցություն ևս չի լինում:

«Ոչ միայն խոցելի խմբերը, այլ բնակիչնէչը առհասարակ չեն մասնակցում հանրային քննարկումներին, իսկ միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում, որ կարողանան մասնակցել»:

## ***Առաջարկներ***

Քննարկումների մասնակիցներն առաջակվում են հետևյալ ծառայությունները՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝

1.դպրոցում, մանկապարտեզում համապատասխան մասնագետներ ընդունել, հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար,

2. դպրոցի, մանկապարտեզի մասնգիտական և մանկավարժական թիմի վերապատրաստումներ հատուկ կարիք և հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար,
3. դպրոցում, մանկապարտեզում ստեղծել պայմաններ և միջավայր հաշմանդամություն ունեցող երեխաների համար,
4. հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունն ապահովելու համար ստեղծել խմբակներ՝ հեյյունագործություն, ուլուքագործություն, նկարչություն:

Երեխաների համար՝

1. համայնքում խաղահրապարակ, սպորտ հրապարակ, ֆուտբոլի դաշտ ստեղծել,
2. սպորտային խմբակներ, մարզական գույք տրամադրել,
3. մակապարտեզի գործարկման համար անհրաժեշտ գույք տրամադրել:

Տարեցների համար՝

1. տարեցների համար ակումբ, որտեղ տարեցները կզբաղվեն սեղանային խաղերով,
2. ողջ բնակչության համար դեղատուն ունենալ:

Համայնքի ընդհանուր զարգացման համար՝

- Այգեգործական դասընթացներ կազմակերպել գյուղացիների համար, ջերմոցներ աշխատեցնելու նրբությունները սովորեցնել, քանի որ ջերմոցային տնտեսությունները շատ արդիական են և եկամտաբեր:
- Ջրագծերի թարմացման և ոռոգման համակարգերի տեղադրման խնդիրները լուծել, որպեսզի գյուղացին բերք ստանա և մաքուր խմելու ջուր ունենա
- Յուրաքանչյուր գյուղում զբաղվածության կենտրոններ ստեղծել՝ երիտասարդների ժամանցի, զբաղվածության համար, իսկ երեխաներին՝ կրթվելու և զարգանալու համար:
- Ունենալ այնպիսի մի կենտրոն, որտեղից կկարողանան օգտվել բոլորը՝ անկախ տարիքից և սեռից, օգտվել: Որտեղ կմատուցվեն մասնագիտական աջակցություններ, երեխաները կկարողանան զարգացնել իրենց հմտությունները, կկարողանան ստանալ հոգեբանական, լոգոպեդական և այլ մասնագիտական աջակցություններ, որտեղ ծերերը կկարողանան զբաղմունք ունենալ, թեկուզ իրենց գիտելիքներով և կյանքի փորձով կկիսվեն երեխաների հետ, որտեղ կլինի գեղեցիկ խաղահրապարակ, երեխաները կկտրվեն հեռախոսներից և միմյանց հետ ավելի շատ ժամանակ կանցնեն:
- Միջհամայնքային տրանսպորտ ունենալ

Վերոնշյալ ծրագրերի իրականացումը հարցվողները պատկերացնում են համայնքապետարանի, ՀԿ-ների, տարբեր բարերարների և բիզնես սեկտորի համագործակցությամբ:

## 2.4. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

### 2.4.1. ԳՈՐԻՍ

| | |
|---|---|
| Խոշորացված համայնքում ներառված բնակավայրերի թիվը | 9 |
| Բնակչության թիվ | 29,509 |
| Տնային տնտեսությունների թիվ | 6,943 |
| Երեխաների թիվ | 5,254 |
| Նպաստառու տնային տնտեսությունների թիվ | 869 |
| Տեղական սոցիալական պլանի առկայություն | Առկա է |
| Համայնքային սոցիալական աշխատողի առկայություն | Առկա է |
| Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ | 35 |
| Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը | 33<br>(18-65 տարեկան՝ 24, 65+ տարեկան՝ 9) |
| Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| Խորին հարցազրույցներ | 4 (որից մեկը՝ Կապանում) |

*<u>Համայնքի մասին</u>*

Գորիս բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2016 թվականի սեպտեմբերին՝ համայնքների խոշորացման արդյունքում:
Գորիս խոշորացված համայնքի մեջ մտնում են 9 բնակավայրեր, որից Գորիս քաղաքային համայնքը կենտրոնն է:
Գորիսը Հայաստանի տուրիստական կենտրոններից մեկն է, այն Արցախը Հայաստանին կապող միակ քաղաքն է: Հարցվածները նշում են, որ Գորիսը Հայաստանի հարավային դարպասն է և՛ տնտեսական, և՛ մշակութաքաղաքական առումով, հանրապետությունում իր տեղն ու դիրքն ունեցող քաղաք է:
Գորիսի անզուգական բնությունը, արժեքավոր պատմա-ճարտարապետական հուշարձանների առկայությունը, որոնցից հատկապես արժեքավոր են բազմաթիվ բնական և արհեստական բնակելի քարայրներն ու տները, ինչպես նաև քաղաքի ինքնատիպ ճարտարապետական դեմքը՝ նպաստում են քաղաքի ներկայացմանը իբրև պատմամշակութային ուրույն ամբողջություն, որն իր հերթին նպաստում է տեղական ու օտարերկրյա զբոսաշրջության զարգացմանը:
Գորիս քաղաքը գտնվում է Գորիս (Վարարակ) գետի հովտում: Նախկին անվանումներն են՝ Գերյուսի, Գերուսի, Գորայք, Գորես, Գորիս, Հին Կյորես, Կյուրիս, Կորուս, Կորու, Կուրիս, Ջանզիզուր, Ջանկյազուր, Կյուրյուս:

## *Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները*

**Գորիսում գործում են արդյունաբերական ձեռնարկություններ:** Դրանցից են՝ «Գամմա», «Զանգեզուր», «Գորիսի միկրոշարժիչ» ԲԲԸ-ները, գործում են սննդարդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի մի շարք ձեռնարկություններ, կան քարամշակման արտադրամասեր: Քաղաքում հատկապես զարգացած է էներգետիկայի արտադրությունը, հանձինս «Որոտան ՀԷԿերի համակարգ» ՓԲԸ-ի:

**Գորիսը Սյունիքի մարզի խոշոր կրթական ու մշակութային կենտրոններից է:** Գորիսում գործում է երկու ավագ, չորս հանրակրթական և մեկ հատուկ դպրոց: Գործող բարձրագույն ուսումնական հաստատություններն են Գորիսի պետական համալսարանը, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը, «Սյունիք» ինստիտուտը և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ Գորիսի պետական քոլեջը և Գորիսի գյուղատնտեսական պետական քոլեջը:

**Գորիսում գործում են 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, 5 արտադպրոցական ուսումնական հաստատություններ՝** Ա. Սաթյանի և Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցներ, Գ. Արոնյանի անվան արվեստի դպրոց, Ա. Օրդյանի անվան շախմատի դպրոց, մանկապատանեկան մարզադպրոց:

**Մշակութային կառույցներն են՝** Գուսան Աշոտի անվան մշակութային կենտրոնը՝ իր ստորաբաժանումներով, Երկրագիտական թանգարանը, Քաղաքային պատկերասրահը, գրադարանների կենտրոնացված համակարգը, ֆիլմադարանը, Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Ա. Բակունցի տուն-թանգարանը, Երևանի գեղագիտական դաստիարակության կենտրոնի Գորիսի մասնաճյուղը:

**Գորիսի առողջապահական հաստատություններն են՝** «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոն, «Գորիսի Մ. Ամիրյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ, Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան, «Դիագնոստիկա» ԲԲԸ-ի մասնաճյուղ՝ վերանվանված «Սյունիք» բժշկական կենտրոն:

Գորիս քաղաքում գործում են 20-ից ավելի հասարակական-քաղաքական կազմակերպություններ:

## *Զբաղմունքը/աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները*

Գորիսում մարդիկ զբաղվում են հիմնականում գյուղատնտեսությամբ, առևտրով, հարակից գյուղերում էլ՝ անասնապահությամբ: 90-ական թվականների պատերազմը բերեց բազում դժվարություններ, արհավիրքներ, մարդկային կորուստներ, փակվեցին Գորիսի գրեթե բոլոր գործարանները, իսկ մինչ այդ գործում էին 10-ից ավելի գործարաններ, բնակչության մեծ մասը, հատկապես կանայք աշխատում էին, հոգում էին իրենց առօրյա հոգսերը, հիմա մարդկանց մեծ մասը գործազուրկ է: Որոշ մարդիկ զբաղվում են մասնավոր բիզնեսով և առևտրով:

Գորիսում խոշոր արտադրություններ և հանքարդյունաբերություն չկա, բոլոր ծրագրերն ուղղված են տուրիզմի զարգացմանը: Որոշ հարցվածներ նշել են, որ համայնքի տնտեսական աճը նկատվում է մասնավոր բիզնեսների զարգացմամբ, քաղաքում հանրախանութներ և հյուրանոցներ են բացվել, տուրիզմը եկամուտ է բերել քաղաքին: Վերջին 3-4 տարիներին քաղաքը վերածվել է շինհրապարակի, դա ինքնին խոսում է, որ ռեսուրսներ կան և ժողովուրդը վստահ է, որ քաղաքում պետք է ապրի և իր համար տուն է սարքում, բիզնես օբյեկտներ է սարքում:

*«Ով գալիս է Գորիս, առաջին բանը, որ նկատում է, այն է, որ ամբողջ քաղաքը շինարարության մեջ է, քաղաքը սարքվում է, շատ կարևոր է, որ անհատներն էլ են ներդրումներ անում, որովհետև շինթույլտվությունների գործընթացը բավականին հեշտացել է, կոռուպցիան զրոյացել: Եթե նախկինում շինթույլտվության համար փող պետք է փոխանցվեր «հատուկ հիմնադրամին», հիմա պետության տուրքերը վճարում ես սահմանված կարգով ու վերջ: Բայց, ցավոք պատերազմ եղավ, և այսօր մենք տեսնում ենք, որ բիզնեսները ընդհակառակը վաճառքի են դրվում, հիմա արդեն որոշ տեղեկություններ ունենք, որ խոշոր բիզնեսների գործերը հարկադիրում են ու փակման են գնում: Մարդիկ վարկեր են վերցրել, բայց պետությունը նույնիսկ տոկոսները չի կանգնեցնում»:*

Գորիսը վերջին մի քանի տարիներին և՛ Հայաստանում, և՛ նույնիսկ Հայաստանից դուրս դարձել է հետաքրքրություն ներկայացնող քաղաք:

*«6-10 տարի առաջ Գորիսում քիչ զբոսաշրջիկներ կային, հիմա ավելի շատ են գալիս. ճոպանուղին, ճոճվող կամուրջը, քաղաքի կոլորիտային տեսքի վերականգնումը՝ բոլորը բերում են հետաքրքրության մեծացման»:*

Կովիդի համավարակի և արցախյան երրորդ պատերազմի պատճառով հիմնարկ-ձեռնարկությունները այժմ նույն տեմպով չեն կարողանում աշխատել, ինչը բերել է գործազրկության աճի, որն էլ, բնականաբար, նպաստել է տնտեսության անկմանը:
Մասնակիցներն ընդգծում են, որ այժմ տարբեր ծրագրեր պետք է իրականացվեն Գորիսում: Գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ զբաղվող համայնքների համար շատ դժվար է: Հարցվածները նշել են, որ գյուղատնտեսության ոլորտը փոխվել է, պատերազմից հետո շատ մեծ ներդրումների կարիք կա: Բնակավայրեր կան, որ արդեն ոչ տարածք ունեն, ոչ արոտավայր ունեն, այսինքն՝ գյուղատնտեսության ամբողջ պրոֆիլը փոխվում է:
Գորիսն այժմ սահմանամերձ համայնքի է վերածվել և պետության կողմից պետք է լուրջ ուշադրություն դարձվի սահմանամերձ համայնքների առաջնային խնդիրների լուծմանը:

*«Համայնքում տեղական տնտեսության զարգացման պատասխանատուների ինստիտուտի ներդնումը շատ կարևոր քայլ էր: Տեղական տնտեսության զարգացման պատասխանատուի վրա դրվում է մշակել թեկուզ և վերացական թվացող ռազմավարություն, տնտեսության զարգացման ու տվյալ ռազմավարության իրականացման համար իրականացնել ծրագրեր, դրանք կարող են լինել սուբվենցիաներ և/կամ այլ միջոցների հաշվին: Սա շատ կարևոր մոտեցում է, իմ կարծիքով, եթե դու պատկերացնում ես քո համայնքը 5 տարի հետո և գործողություններն ես տեսնում, փողը միշտ համայնքը կարողանում է գտնել, կարևորը տեսլականն է, իսկ ինստիտուտի ստեղծումը այդ տեսլականի առումով լուրջ խնդիր է լուծում»:*

*ՏԻՄ ներկայացուցիչ*

## ***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը</u>***

Համայնքի կողմից իրականացված ծրագրերից խոսելիս, նշվում է, որ համայնքի կենսական նշանակության հարցերից համայնքապետարանին հաջողվել է մի քանիսը լուծել, դրանցից են՝ գիշերային լուսավորությունը, աղբահանությունը: Խմելու ջրի հարցը լուծվել է Խնձորեսկում, որտեղ տարիներ շարունակ ջուր չի եղել: Ջրի սակավության պայմաններում էլ համայնքը կարողանում է այնպես անել, որ բնակիչը 20 ժամ ջուր ունենա:

Համայնքի տնտեսական զարգացման առաջնահերթությունների մեջ Գորիսի համայնքապետարանը մտցրել է նաև առանձին բնակավայրերի բրենդների զարգացումը: Օրինակ՝ Վերիշեն բնակավայրում ստեղծվել է արվեստների կենտրոնը: Հաշվի առնելով, որ գյուղը վարպետների գյուղ է, օգտագործելով այդ մշակութային ժառանգության հնարավորությունը, փորձել են զարգացնել ձեռարվեստը: Նմանատիպ մոտեցում է պլանավորված Քարահունջ բնակավայրի համար, քանի որ գյուղը հայտնի է թթի օղիով, լոբիով, ստեղծել հնարավորություններ, օրինակ սառնարանային տնտեսության համար: Օդու հետ կապված՝ պլանավորել են օդու համտեսի սրճարան ունենալ, սակայն այդ ծրագրերը մնացին մի քիչ օդից կախված՝ պատերազմը մի կողմից, քովիդն էլ՝ մյուս: Նմանատիպ արձանագրված ռազմավարություն կա գրեթե բոլոր բնակավայրերի համար՝ Բարձրավանի, Խնձորեսկի:

*«Մենք համայնքային և սուբվենցիոն ծրագրերը բոլորն ուղղել ենք, որպեսզի ենթակառուցվածքները բարելավենք, փորձը ցույց է տվել, որ ներդրումները բերում են տնտեսության աշխուժացմանը, օրինակ, եթե մենք Գորիսում Դիտակետ կոչվող տարածքը ուժեղացրեցինք, ապա հարակից տարածքները դառնում են մրցունակ: Նոր ծրագիր ենք շահել, ուշադրությունից դուրս մնացած Շորին ձորի հատվածը բարեկարգելու, այնտեղ ներդրումներ կանենք, ջրվեժ կա, ջրվեժի տարածքը կբարեկարգենք: Որտեղ համայնքը տնտեսական ներդրումներ է անում, այդ տարածքը դառնում է մրցակցային, տնտեսվարողները տեսնում են, որ բիզնեսի ներդրման համար առողջ միջավայր է ձևավորվում»,- նշում է Գորիս համայնքի ՏԻՄ ներկայացուցիչներից:*

Հարցվողները նշում են, որ համայնքում իրականացված մի շարք ծրագրերի արդյունքում քաղաքն արդեն մաքուր է, բարեկարգված , աղբը աջ ու ձախ թափված չէ: Նրանք կարծում են, որ բնապահպանական ծրագրերը, ուսուցողական ծրագրեր պետք է շարունակական լինեն:

*Հարցվածներից Մաքուր Գորիս ՀԿ-ի ներկայացուցիչը նշում է. «Մեքենաները շատացել են և երթևեկության ու անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտություն է առաջանում: Արցախը կապված է Գորիսի հետ, Գորիսը գտնվում է Արցախ - Իրան հանգույցի մեջտեղում, իրավիճակը փոխվել է և պատերազմի առումով, և տնտեսության առումով: Առավոտյան յուրաքանչյուր տնից 3 մեքենա է դուրս գալիս, /դա չի նշանակում, որ սոցիալական վիճակը փոխվել է, դա միջին կամ միջինից բարձր խավն է/: Երթևեկությունը շատ ծանրաբեռնված է քաղաքում, դպրոցները գտնվում են ճանապարհներին, երեխաներին անվտանգ երթևեկության կանոններ սովորեցնելը անհրաժեշտություն է, գիտելիքներ տալը շատ կարևոր է»:*

Համայնքի ծառայությունների մասին խոսելիս՝ հարցվածները բազմիցս շեշտել են, որ համայնքի խոցելի խմբերի կարիքները բազմաթիվ են, օրինակ՝ մանկապարտեզների, մշակութային հաստատությունների շենքային պայմանների, գույքի ոչ բարեկարգ լինելը: Համայնքում չկան արվեստի դպրոցներ, որոնք կարող էին լինել ուղղակի մասնագիտությունների ուսուցման դարբնոցներ՝ կերամիկայից իրերի պատրաստում, փայտագործություն, խեցեգործություն: Հարցվողների կարծիքով արվեստի դարբնոցները կնպաստեին դրական դաստիարակության ձևավորմանը, նույն երեխան, որ փայտի հետ աշխատում է, կերամիկայի հետ աշխատում է, դրսում երբեք վատը չի կարող լինել:

*«Առաջիկա ծրագրերում որոշ պայմանավորվածություններ ունենք մի քանի կազմակերպությունների հետ, որ ներդրում անեն՝ ուղղված մշակութային կյանքի*

*բարելավմանը: Անհրաժեշտ է համայնքում ունենալ կրթական կենտրոններ, երեխաների զարգացման կենտրոններ, լոֆտային միջավայր, կանանց համար մասնագիտությունների, տարբեր քննարկումների կազմակերպման միջավայր: Անհրաժեշտ է միջոցներ տրամադրել հասարակության խոցելի խմբերի կարողությունների զարգացման համար ու նաև տրամադրել համապատասխան աշխատանքային գործիքներ: Օրինակ, եթե կանանց վարսահարդարում կամ մատնահարդարում ենք սովորեցնում, ապա պետք է տանք նաև համապատասխան գործիքները, որ կարողանան աշխատել»:*

*ՏԻՄ ներկայացուցիչ*

## ***Համայնքային ակտիվություն***

Հանրային քննարկումներին հանրության մասնակցությանը վերաբերող հարցին հարցվածները նշել են, որ իրենց վերաբերող հարցերի քննարկմանը մարդիկ մասնակցում են: Սա շատ անհատական է և կախված է շահառուի անհատականությունից, հետաքրքրվածությունից, ակտիվությունից: Օրենքը պահանջում է, այսպես թե այնպես համայնքը պետք է ապահովի հանրային մասնակցություն մի շարք կարևոր հարցեր քննարկելիս: Օրինակ, սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումների հայտարարությունը, որ տալիս են ոչ մեկ չի գալիս, բայց քննարկում ապահովելու համար էլ, զանգում-կանչում են: Հարցվողները նշում են, որ սա հարցի լուծում չէ, սրանով միայն ձևական կողմն են պահում, սա չաշխատող մեխանիզմ է:

*«Խոցելի խմբերի ներկայացուցիչները, ցավոք, ստամոքսի խնդիր են լուծում, նրանց զլոբալ հարցեր շատ քիչ են հետաքրքրում, ուր մնաց թե հանրային քննարկումներին մասնակցեն»,- նշում են հարցվածներից ոմանք:*

Մասնակիցները կարծում են, որ Գորիսում հանրային տարբեր քննարկումների ու միջոցառումների մասնակցությունը հիմնականում ազատ է, պարզապես խոցելի խմբերի ներկայացուցիչները պարփակված են ու տարբեր քննարկումների մասնակցելու նախաձեռնողականություն չեն ցուցաբերում: Եթե շահառուն հետաքրքրված է, փորձում է, հարցուփորձ է անում, դիմում է, ապա նրա մասնակցության համար խոչընդոտներ այժմ չկան Գորիսում:
Համայնքի կողմից հատուկ ներգրավածության ապահովման ծրագրեր չեն իրականացվում, սա անհատական մոտեցումների մակարդակում է մնում, կան շահառուներ, որ ակտիվ են, զբաղվում են իրենց խնդիրներով, դիմում են տարբեր հարցերով, իսկ պասիվները միշտ էլ անտեսված են մնում, նրանք մենակ են իրենց խնդիների հետ:

## ***Իրազեկվածություն***

Քննարկումների մասնակիցների կարծիքով համայնքում գործող սոցիալական ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը ցածր է: Նրանք, ովքեր անմիջական շահառու են որևէ սոցիալական ծառայության, այսպես թե այնպես տեղյակ են, քանի որ օգտվում են, օրինակ՝ փարոս համակարգից, կենսաթոշակներից, հաշմանդամության նպաստից և այլն: Բայց ընդհանուր առմամբ համայնքում սոցիալական ծառայությունների վերաբերյալ իրազեկում չի կատարվում ծառայություն մատուցողների կողմից:

Քննարկումների մասնակիցները պետական սոցիալական ծառայություններից հիմնականում ծանոթ են կենսաթոշակային, ընտանեկան նպաստի համակարգին և զբաղվածության տարածքային կենտրոնի գործունեությանը:
Մասնավոր ծառայություններից գիտեն միայն բարեգործական ճաշարանի մասին:

*Մասնակիցներից մեկը նշում է, որ ինքը գրանցված է զբաղվածության Գորիսի տարածքային կենտրոնում որպես աշխատանք փնտրող, լսել է, որ համակարգչային դասընթացներ են իրականացվում աշխատանք փնտրողների համար, գնացել է, որպեսզի ինքն էլ մասնակցի, կենտրոնի աշխատակիցն ասել է, որ իրեն հանել են համակարգից, քանի որ չի ներկայացել և չի գրել հերթական դիմումը, որի մասին շահառուն տեղյակ չի եղել: Կան ընթացակարգեր, որոնց մասին սոցիալական ծառայությունները չեն իրազեկում իրենց շահառուներին:*

Տեղեկատվության հիմնական միջոցներից մասնակիցները նշում են համացանցը, ծանոթ-բարեկամ, նաև հարևանական կապերը: Մասնավոր կենտրոնների մասին տեղեկանում են համացանցից՝ հիմնականում ֆեյսբուք սոցիալական ցանցից:
Մասնակիցները նշում են, որ թեև համացանցը հասանելի է գրեթե բոլորի համար, բայց իրենց շրջապատում դեռ կան մարդիկ, ովքեր լավ չեն տեղեկացված սոցիալական ծառայությունների մասին, կան մարդիկ, որոնք պետական սոցիալական ծառայությունների շահառուներ են, բայց չեն օգտվում ծառայություններից:
Մասնակիցներից մի քանիսն էլ նշում են, որ վերջին տարիներին մարդկանց իրավագիտակցության մակարդակը բարձրացել է և կարողանում են պաշտպանել իրենց իրավունքները:
Մասնակիցների մի մասի կարծիքով՝ սոցիալական ծառայություններից օգտվելու համակարգում խնդիրները շատ են: Կան մարդիկ, ովքեր իսկական շահառուներ են, բայց չիմացության, տեղեկատվության պակասի, պասիվության ու տարբեր պատճառներով դուրս են մնում համակարգից, փոխարենը շատ են այնպիսի քաղաքացիները, ովքեր իրենց կապերի ու ճկունության արդյունքում դառնում են սոցիալական տարբեր ծառայությունների շահառուներ ու օգտվում են տարբեր աջակցման ծրագրերից:
Մասնակիցները նշում են, որ ընտանեկան նպաստի համակարգն ամբողջությամբ անհրաժեշտ է փոխել: Մարդկանց մեծ մասը չի էլ ձգտում աշխատանք գտնել, նախընտրում է տանը նստել, ոչինչ չանել ու նպաստ ստանալ: Եթե նույնիսկ աշխատանքի առաջարկ են ստանում, չեն ուզում, քանի որ նպաստից զրկվում են: Սա դժվարություններ է առաջացնում նաև սպասարկման ոլորտի բիզնեսների համար, քանի որ չեն կարողանում աշխատողներին գրանցել, որպեսզի վերջիննեսս չզրկվեն իրենց նպաստից և խնդիրներ են ունենում հարկային օրենսդրության հետ:
Շատ խնդիրներ կան հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամության կարգի որոշման և թոշակավորման գործընթացում, շատ մարդիկ կան, ովքեր հաշմանդամություն ունեն, սակայն վարչարարության, քաշքշուկի ու կոռուպցիայի պատճառով չեն կարողանում կարգ ստանալ ու օգտվել համապատասխան հասանելիք աջակցություններից:
*Մասնակիցներից մեկը, միջինից բարձր տարիքի մի կին, ով ընկերների փաստմամբ առողջական բազմաթիվ խնդիրներ ունի և հաշմանդամության կարգ ստանալու իրավունք ունի, ոչ մի կերպ չի կարողանում այդ կարգը ստանալ: Գորիսի սոցիալական ծառայությունից նրան ասել են, որ պետք է գնա և Կապանի հոգեբուժարանում ամիսներ պառկի, որպեսզի կարողանան կարգ հատկացնել, բայց կինն ու նրա ընկերները հավաստիացնում են, որ նրա խնդիրները հոգեկանի հետ կապ չունեն, որ կինն ուրիշ առողջական խնդիրներ ունի:*

Ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած խմբերում կային վերոնշյալ սոցիալական ծառայություններից և՛ երկարաժամկետ, և՛ կարճաժամկետ օգտվողներ:
Ծառայությունների որակի վերաբերյալ մասնակիցները տարբեր կարծիքներ հայտնեցին՝ մեծ մասի կարծիքով ծառայությունների որակը շատ վատն է, մի մասն էլ նշում է, որ վերջին տարիներին փոքր դրական տեղաշարժեր կան:

## *Բավարարվածություն*

Մասնակիցների մեծ մասը 2-8 տարի է, որ օգտվում են ընտանեկան նպաստի համակարգից: Նրանք նշում են, որ վերջին շրջանում ծառայությունների որակի դրական տեղաշարժ է նկատվում, հատկապես մասնագետների վերաբերմունքի փոփոխության առումով: Սակայն համայնքում առկա սոցիալական ծառայությունները բավարար չեն բնակչության կարիքները հոգալու համար:
Մասնակիցների մեծ մասը նշում է, որ շուրջ 30 տարի է, որ օգտվում են Գորիսի բարեգործական ճաշարանի ծառայությունից ու շատ գոհ են մատուցվող ծառայությունների որակից, աշխատակիցների վերաբերմունքից:
Մասնակիցների մի մասը գրանցված է Զբաղվածության տարածքային կենտրոնում, մի մասն օգտվում է դայակների ծրագրից: Նրանք նշում են, որ հիմնականում հեշտ են կարգավորում իրենց խնդիրները ծառայության հետ, քանի որ տեղեկացված են օրենքներից: Մասնակիցները հիմնականում գոհ են Զբաղվածության Գորիսի տարածքային կենտրոնի աշխատակիցների վերաբերմունքից ու մոտեցումներից:
Գորիսում վերջերս սկսել են գործել երեխաների ժամանցի և զարգացման մասնավոր ցերեկային կենտրոններ, որոնք սակայն լուրջ մասնագիտական ծառայություններ չեն մատուցում, զբաղվում են հիմնականում երեխաների ժամանցի և ոչ ֆորմալ կրթության կազմակերպմամբ: Ծնողներն ընդհանուր առմամբ գոհ են այդ կենտրոնների գործունեությունից:

*Մասնակիցները նշում են հետևյալ կենտրոնների անունները՝ «Բարեկամ», «Այ մեղու», «Լիարժեք կյանք», «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ժամանցի կենտրոնը: Այդ կենտրոններում աշխատում են նաև հոգեբաններ, որը շատ ուրախալի է:*

Հարցվողների մեծ մասի կարծիքով, սոցիալական ծառայությունների որակը չի բարելավվում, անկախ նրանցից, որ բարելավվում են շենքային պայմանները: Շահառուների կյանքում դրական փոփոխություններ չեն նկատվում: Առկա ծառայությունների որակը բարելավելու համար անհրաժեշտ է պետության աջակցությունը, ինչպես նաև մասնագետներին վերապատրաստել:

*Մասնակիցներից մեկն իր անձնական օրինակն է ներկայացնում, թե ինչպես իր ընտանիքի անդամին բաժնից բաժին են ուղարկել, վերջինս օրենք չգիտեր, հետո թեժ գիծ են զանգարահել, պարզվել է, որ ինչքան սխալ ուղղորդումներ են արել սոցիալական ծառայությունում: Մասնակիցը նշում է, որ սոցիալական ծառայության աշխատակիցները հաճախ մեկը մյուսով են զգում, այսինքն՝ տեղեկատվություն չեն տալիս, կան նաև դեպքեր, երբ միտումնավոր թաքցնում են կամ խաբում են, երբ շահառուն խեղճ է ու բանից անտեղյակ:*

Համայնքում բացակայում են բռնության ենթարկված երեխաներին և կանանց աջակցության ծառայությունները: Մի քանի հասարակական կազմակերպություններ կան, որ զբաղվում են

նման խնդիրներով, բայց իրենց ներուժն ու ռեսուրսները փոքր են, ինչպես նաև ազդեցությունն է փոքր հոգեբանական ազդեցության առումով:
Հարցվողների մեծ մասը նշել է, որ ՄՄԾ-ն գործնականում կարևոր խնդիրներ չի լուծում, քանի որ համապատասխան գործիքներ չունի:

*Մասնակիցներից մեկը կիսվում է իր մտահոգություններով. «Ասենք թե բռնության ենթարկված կնոջ դեպք է, ով գնում է, դիմում է ոստիկանություն, այնտեղից զանգում են համայնքապետարան, ասում են ամուսինը չի ընդունում, այս կինը գիշերը որտեղ պետք է քնի: Ենթադրեք գնացել է սոցիալական ծառայություն, ոչ հաշմանդամ է, ոչ տարեց է, ՄՄԾ-ն ոչ մի բան չի կարողանում առաջարկել: Մեկ այլ օրինակ բերեմ՝ մարդը փաստացի ապրում է քարանձավում (21-րդ դարում, ապրում է քարանձավում՝ Հին Գորիսում) իր քարանձավի դիմաց մի հատ մետաղյա ջարդոն կա, որը մեքենա է համարվում ու գրանցված է իր անունով, որը ոչ կարող է ծախել, ոչ կարող է մաս – մաս վաճառել, այդ պատճառով չի կարողանում օգտվել ընտանեկան նպաստից»:*

Հարցվողների ամփոփ ձևակերպմամբ անհրաժեշտ է ոչ թե սոցիալական ծառայությունները տարբեր շենքերից հանել և տանել մի շենքում տեղակայել, այլ ծառայության որակը պետք է ամբողջովին փոխել: Պետք է ուղղորդման մեխանիզմներ գործեն: Ներկայիս մեր սոցիալական ծառայությունները մարդկանց կարիքները չեն բավարարում:

***<u>Ռեսուրսներ</u>***

Հարցվածները նշել են, որ համայնքի սոցիալական կարիքները հոգալու նպատակով միջոցներ են հատկացվում պետության և համայնքի բյուջեից, տրամադրվում է նաև միջոցներ եկեղեցու, հասարակական կազմակերպությունների, սփյուռքի ռեսուրսներից:
Համայնքի բյուջեի 3-5%-ը հատկացվում է սոցիալական ոլորտին:
Սոցիալական ոլորտին համայնքային բյուջեից հատկացվող տողի վերաբերյալ ՏԻՄ ներկայացուցիչը նշել է.
*«Մենք ունենք կարգ, ըստ որի հստակ չափորոշիչներ կան, որոնց պետք է մարդը համապատասխանի որևէ աջակցությունից օգտվելու համար, բայց հարցի բարոյական կողմն էլ կա: Մի օրինակ ասեմ. մարդու ընտանիքի անդամը զոհվել է, ինքը պետության կողմից աջակցություն չի ստանում, միայնակ կին է, գերեզման չի կարողանում սարքել, հիմա այդ մարդուն օգնում ենք, թե չենք օգնում, թե թողնում ենք անգերեզման: Դեպք ունենք, որ մայրը զոհվել է, տղան զոհվել է, տատիկը չի համարվում ժառանգորդ և պետությունը իրեն մի կոպեկ գումար չի տալիս, մենք տեր ենք կանգնում մեր հայրենիքի համար զոհված զինվորին, թե չէ»:*

Հարցվողները նշել են, որ համայնքում կան և՛ պետական, և՛ մասնավոր ծառայություններ: Քաղաքն իր ուսերին վերցրեց պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունների հոգսը: Գորիսի համայնքապետարանը, հասարակական կազմակերպությունները՝ ԳՈՒՄ ՀԿ-ն, Մամուլի ակումբը, Մարդը կարիքի մեջ, Սոսե կազմակերպությունները մեծ հաջողությամբ իրականացրեցին պատերազմի ժամանակ անապահովներին, տեղահանվածներին աջակցություն ցույցաբերելու կարևոր գործը: Այս պահին պատերամից հետո 4000 արցախցի դեռ Գորիսում է, համայնքը շարունակում է նրանց խնդիրները քիչ թե շատ լուծել:

***<u>Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը</u>***

Հարցվածներից մի քանիսը նշել են, որ տեղյակ են, որ համայնքապետարանը աշխատում է և՛ միջազգային կազմակերպությունների, և՛ տեղական ՀԿ-ների հետ: Տեղական ՀԿ-ներից համայնքապետարանը շատ լավ համագործակցում է ԳՈՒՄ ՀԿ-ի, ԳԵՆԿ-ի, Մաքուր Գորիս ՀԿ-ի, Գորիսի Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն հիմնադրամի, Գորիսի մամուլի ակումբ ՀԿ-ի և Սոսե ՀԿ-ի հետ:

Համայնք-ՀԿ-Բիզնես համագործակցության վերաբերյալ մասնակիցներից մի քանիսը նշել են, որ այդ առումով Գորիսն ամենալավ մոդելն ունի հանրապետությունում, որովհետև և՛ հասարակական կազմակերպություններին տարածքների հատկացման հարցում, և՛ ցանկացած հարցում համայնքն աջակցում է ՀԿ-ներին:

Համայնքի ՏԻՄ ներկայացուցիչներից նշել են, որ բացառված է, որ ՀԿ-ների կողմից առաջարկվող և համայնքի համար կարևոր որևէ համաներդրումային ծրագիր չպաշտպանվի, չխրախուսվի կամ խոչընդոտվի համայնքապետարանի կողմից: Իհարկե, կարող են լինել ինչ-որ իրավիճակներ, որ փոխհամաձայնության հարցեր լինեն, բայց դրանք քննարկվում են և համաձայնեցվում ի շահ համայնքի: Բիզնեսների հետ առավել ևս լավ հարաբերություններ կան ձևավորված, համայնքում ՀԿ-բիզնես-համայնք ձևավորված ցանցերի օրինակներ էլ կան:

*«Մեր օրինակով՝ «Մաքուր Գորիս» ՀԿ-ի պարագայում, մենք համագործակցության հուշագիր ենք կնքել 2 անգամ մեր ծրագրերը իրականացնելիս. համայնքում աղբամաններ տեղադրելու համար՝ պատերազմի ամենաթունդ պահին մենք 50 աղբամաններ ձեռք ենք բերել, մեկ միլիոն արժողությամբ, մենք տեղադրեցինք, և համայնքապետարանը մեզ աջակցեց տեղադրման և սպասարկման առումով»,-նշում է Մաքուր Գորիս ՀԿ-ի ներկայացուցիչը:*

## *<u>Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների</u>*

### **Գործազրկություն**

Ըստ հարցվածների Գորիսում բնակչության մոտ 60-70 տոկոսը գործազուրկ է:

Չնայած որ գյուղական բնակավայրում հիմնարկ-ձեռնարկություններ չկան, մարդիկ ինքնազբաղված են՝ հիմնականում իրենց հողն են մշակում, անասուն են պահում, իսկ քաղաքային բնակավայրերում գործազրկությունը արդիական խնդիր է:

Մասնակիցները նշել են, որ գործազրկության տեսանկյունից ավելի խոցելի են երիտասարդ ընտանիք կազմած զույգերը, միջինից բարձր (50 և ավելի բարձր) տարիքային խմբերի ներկայացուցիչները, կանայք, հաշմանդամություն ունեցողները, 3 տարուց ավել գործազուրկի կարգավիճակում գտնվող անձինք: Նշում են, որ գործազրկության խնդիրը առկա է առավելապես արական սեռի երիտասարդների շրջանում:

Հարցվողները նշում են, որ գործազրկության ոլորտում խնդիրները շատ են կրթություն և աշխատաշուկա կապի անհամապատասխանության պատճառով: Բոլորը ձգտում են բարձրագույն կրթություն ստանալ, նույնիսկ ոչ այնքան պահանջված մասնագիտությունների գծով, այնինչ միջին մասնագիտական կրթության ոլորտի շատ պահանջված մասնագիտություններ կան, բայց համապատասխան մասնագետներ չկան: Օրինակ՝ հյուրանոցներում աշխատողների կարիք կա՝ մատուցող, մաքրուհի և այլն, այս ոլորտում միշտ պահանջարկ կա, բայց մարդ չկա, աշխատող չկա:

*«Կրթական ոչ ճիշտ համակարգից է գալիս մարդկանց զբաղվածության խնդիրը:*
*Ազգային մտածողության հետ կապված խնդիրներ էլ կան այս ոլորտում. քաղաքը փոքր է, մարդիկ բոլորը միմյանց ճանաչում են և շատ հաճախ երիտասարդները, տղամարդիկ*

*ամաչում են որոշ աշխատանքներ կատարել, օրինակ կոմունալ ծառայությունը տարիներով աշխատակիցների կարիք ունի, թափուր տեղերը չեն համալրվում, բայց մարդիկ խուսափում են գնալ ու աշխատել, պատվաբեր չեն համարում: Այնինչ նույն աշխատանքները գնում և կատարում են արտերկրում»*

*«Մենք «Մաքուր Գորիս» ՀԿ-ի համար կանաչապատման մի մասնագետ ենք ուզում, չկա այդ մասնագետը, այն դեպքում, երբ մեկին մենք ուղարկել էինք Ֆրանսիա վերապատրաստման, եկել է, չի ուզում աշխատել»:*

*Մաքուր Գորիս ՀԿ-ի ներկայացուցիչը:*

Գործազրության կրճատման ուղղությամբ համայնքապետարանը շատ բան անել չի կարող կարծում են հարցվողները: Համայնքապետարանը համայնքի մաքրության, լուսավորության, սոցիալապես անապահովներին քիչ թե շատ օգնելու խնդիրներն է կարողանում լուծել:
Հարցվողների մի մասի կարծիքով, բացասական է այն հանգամանքը, որ խնամակալությունը չի դիտարկվում որպես աշխատանք ու աշխատանքային ստաժ չի ձևակերպվում: Շատ ծնողներ, ովքեր տարիներ շարունակ խնամում են իրենց երեխաներին, նաև չափահաս տարիքում, փաստացի հնարավորություն չեն ունենում աշխատելու, ստացվում է, որ ամբողջ կյանքում աշխատում են, բայց աշխատանքային ստաժ չունեն ու հետագայում էլ, ստաժի բացակայության պատճառով, ստանալու են շատ ցածր թոշակ: Սա, իսկապես լուրջ խնդիր է:

**Կրթություն**

Համայնքի գլոբալ խնդիրներից ամենաառաջնայինը կրթական և բուհական համակարգի խնդիրն է: Վատ կրթությունից են բխում բոլոր մնացած խնդիրները: Հարցվողները նշում են, որ կրթական գործընթացներն այնքան վատ են կազմակերպված, որ մարդիկ միայն հետընթաց ենք ապրում: Կրթության որակի փոփոխությունը պետք է սկսվի մանկապարտեզներից:

*«Օնլայն դասերը կրթության մեջքը ջարդեցին, հիմա այս եկող սերունդը բավականին անելիքներ ունի: Երեխաները կրթական գործընթացից բավականին հետ են մնացել, օնլայն կրթական համակարգն իրեն չարդարացրեց»*

**Առողջապահություն**

Համայնքի մյուս խնդիրներից է բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավումը, սոցիալական բոլոր խմբերի կյանքի համար հավասար պայմանների ապահովումը:
Հին հիվանդանոցները, պոլիկլինիկաները վերազինել է պետք, կահավորել և մասնագետներով համալրել: Բժշկական համալսարանում սովորող համայնքի ուսանողներին համայնքը հետագայում չի կարողանում ապահովել աշխատանքով, ինչի պատճառով էլ նրանք մնում են մայրաքաղաքում:

**Սոցիալական աշխատանք և խոցելի խմբեր**

Հարցվողները կարծում են, որ սոցիալապես ավելի անպաշտպան են երեխաները, հիվանդները, հաշմանդամները, առողջական խնդիրներ ունեցող մարդիկ, նաև կովիդից

տուժածները: Վերջիններս շարունակական խնամքի կարիք ունեն, հատկապես միայնակ տարեցները: Բնակչության ամենախոցելի խմբերից են նաև ցածր կրթական մակարդակ ունեցող մարդիկ, ինչպես նաև անպաշտպան են կանայք: Նրանք նշում են, որ ընտանիքներում 80 տոկոսով բեռը կանանց ուսերին է, թե գյուղատնտեսության, թե անասնապահության, թե կենցաղավարման մեջ:

Չնայած, որ համայնքում կա ՄՄԾ՝ մեկ պատուհանի սկզբունք, բայց ծառայությունները չեն համապատասխանում այդ սկզբունքին:

*«Սոցիալական ծառայության աշխատողները իրենց ոլորտում մասնագետներ են, բայց տվյալ աշխատանքի համար չունեն հմտություններ, եթե քաղաքացին պետք է բարձրանա երկրորդ, երրորդ հարկ և ոչ մի տեղ չստանա իր հարցի պատասխանը… այդպես չէ ձևը, անհրաժեշտ է, որ նա իր հարցերի պատասխանը ստանա հենց առաջին հարկում»*

Սոցիալական ոլորտն ընդհանուր բարեփոխումների կարիք ունի, ծառայությունների որակը շատ վատն է:

Մարդկանց սոցիալական վիճակի մասին խոսելիս հարցվածներից մեկը նշում է.

*«Որոշ ժամանակ առաջ «Բարի երթ» հասարակական կազմակերպությունը հումանիտար օգնություն էր ստանում տարբեր միջազգային կազմակերպություններից, և մենք բաժանում էինք սոցիալապես անապահով մարդկանց: Եղավ մի ժամանակ, որ այդ օգնությունները կրճատվեցին և մեզ ասացին, որ հանրապետության նախագահը վերին ատյաններում և արտասահմանյան միջազգային կազմակերպություններին ասել է, որ մենք այլևս աղքատ չենք, և այդ հումանիտար օգնությունները դադարեցվել են: Մի պահ ուրախացանք: Բայց վերջին պատերազմից և քովիդից հետո սոցիալական վիճակը վատացել է համայնքում, որովհետև գների աճ է կատարվել, ապրանքը թանկացել է, բնակչությունը բանկերից տուն չի գալիս, այն առումով, որ վարկեր ունի, վարկային պատմություններ ունի: Կարծում եմ՝ տնտեսապես շատ վատ վիճակում ենք այն առումով նաև, որ Գորիսն իր ուսերին տարավ արցախյան պատերազմի պատճառով մոտավոր 16 հազար բնակչի հյուրընկալելու և տեղավորելու դժվարությունները»:*

**Մասնագիտացված հատուկ ծառայություններ**

Մասնակիցները նշել են, որ Գորիսում կարիքները շատ են ու բազմազան: Եթե մասնավորեցնենք հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները, ապա մի կարճ ձևակերպմամբ պետք է նշենք, որ նման երեխաներն ու ծնողները լրիվ մենակ են իրենց խնդիրների հետ:

Ծրագրերի ու ծառայությունների մասին խոսելիս հարցվողների մի մասը նշել է, որ համայնքում ծառայություններ հիմնականում չկան: Օրինակ հաշմանդամություն ունեցող երեխաների կամ հոգեկան խնդիներ ունեցող մարդկանց համար ծառայություններ չկան:

*«Մենք Արցախից եկած 2 հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդ կին ունեինք, այնքան տարան Կապան բերեցին, ոչ հարազատ ունեն, ոչ բարեկամ, ոչ մեր համայնքի բնակիչ են, ամբողջ մարզում այդ ծառայությունը չի մատուցվում: Տարբեր կազմակերպություններ կան, որ ուզում են սոցապ նախարարություն միջոցով այս հարցերը լուծել, սակայն տարածքի խնդիր ունեն: Համայնքը չունի ազատ շենք- շինություններ, իրենք էլ չեն կարողանում վարձակալել, որովհետև շատ թանկ է ու հարմար չէ, պետք է վարձակալել, ներդրումներ անել: Առայժմ չի հաջողվում մեր համայնքում նման ծառայություններ ստեղծել»,- նշել է ՏԻՄ ներկայացուցիչներից մեկը:*

Համայնքում չկան նաև վերականգնողական կենտրոններ, չկան մասնագիտական ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և, առհասարակ, նաև մեծահասակների համար: Որոշ ծնողներ տարիներ շարունակ երեխաներին տանում են Երևան հատուկ մասնագետների մոտ, սակայն միայն այն եզակի դեպքերում, երբ ֆինանսական հնարավորություն են ունենում: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ ֆինանասական միջոցների բացակայության պատճառով ծնողները չեն կարողանում երեխաներին նույնիսկ Երևան տանել:
Այս առումով համայնքում խնդրահարույց է այլընտրանքային անվճար կրթական հաստատությունների, ցերեկային խնամքի կենտրոնների բացակայությունը:
Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար բացի մասնագիտական ծառայությունների բացակայությունից, բացակայում է նաև կրթական հաստատություններում ներառական միջավայրը: Նախակրթարաններում հիմնականում նման երեխաներին չեն ընդունում, դպրոցների ներառական թիմի աշխատակիցները հիմնականում մասնագետներ չեն, իրենց գործին չեն տիրապետում, հիմնականում վերամասնագիտացել են զուտ պաշտոնը չկորցնելու համար: Որպեսզի նման ծառայություններ զարգանան անհրաժեշտ է հատուկ մանկավարժներ պատրաստել, ովքեր լիարժեք կզբաղվեն իրենց գործով, ոչ թե ուղղակի ազատ հաստիք կզբաղեցնեն:
Մասնակիցները նշում են, որ սա կարելի է առանձնացնել, որպես շատ առաջնային խնդիր, քանի որ դպրոցների մանկավարժները պատրաստ չեն ներառված երեխաների հետ աշխատելու, ձևը չգիտեն՝ ինչպես աշխատեն:

*Իրենք՝ մանկավարժներն էլ են խոստովանում, որ չեն կարողանում հատուկ կարիքներով երեխաների հետ ճիշտ աշխատել: Բայց գիտենք, որ կան ուսուցչի հատուկ օգնականներ, ում պարտականությունների մեջ է մտնում հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ առանձին աշխատելը:*

Շատ խոցելի են հատուկ կարիքներ ունեցող երեխաները: Թեև այժմ բոլոր դպրոցները ներառական են և որոշակի փոփոխություններ ու դրական տեղաշարժեր կան, բայց խնդիրները դեռ շատ-շատ են, հատկապես վերաբերմունքի փոփոխության գործընթացը տարիներ է պահանջում:
Քննարկումների մասնակիցները նշել են, որ Գորիս համայնքի սոցիալական կարիքները շատ-շատ են: Անհրաժեշտ են այնպիսի համալիր ծառայություններ, որոնք կկարողանան արձագանքել ամբողջ ընտանիքի անդամների կարիքներին: Օրինակ՝ անհրաժեշտ են այնպիսի մասնագիտացված կենտրոններ, որտեղ հնարավոր կլիներ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին գոնե 2-3 ժամով թողնել, որպեսզի ծնողները կարողանային թեկուզ կարճաժամկետ աշխատանքով զբաղվել:
Շատ լուրջ խնդիր է տարեցների զբաղվածության խնդիրը: Կարիք կա ժամանցային կենտրոնների, որտեղ ծերերն ու միայնակ տարեցները կարողանային կազմակերպել իրենց առօրյան:
Մասնակիցների կարծիքով՝ ժամանցի վայրերի բացակայությունը ևս համայնքի կարևոր խնդիրներից է, հատկապես երեխաների և երիտասարդների համար:

**Անվտանգություն**
Այս պահին կարևորագույն մյուս հարցերից է սահմանամերձ հողատարածքների կրճատումն ու անվտանգության խնդրի առկայությունը:

Հարցվածները նշել են, որ Գորիսում արդեն շատ են խնդիրները ռազմավարության տեսանկյունից՝ անվտանգություն, ճանապարհների, այդ թվում այլընտրանքային, նաև միջհամայնքային ճանապարհների հարցեր կան:
Համայնքի գերակա ուղղությունը տուրիզմը հիմա լրիվ պարալիզացված վիճակում է:

*«Պատերազմական երկրում ինչ տուրիզմ, մարդու ծիծաղ է գալիս, որ պետական մակարդակում ասում են՝ ներդրում ենք անում տուրիզմի մեջ, Սյունիքում ինչ տուրիզմ, երբ բոլոր դեսպանատները հորդորում են, որ Սյունիք չմտնեք, այդ պրոֆիլը նոր մարտահրավերների պայմաններում նոր հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ են, այսօրվա պայմաններում դա համայնքի խնդիրը չէ, դրանք պետության մակարդակում լուծվող հարցեր են, որովհետև դրանից է կախված հետագա ներդրումները և հետագա զարգացման հնարավորությունները: Այսօր Շուռնուխում կամ Ներքին Խնձորեսկում, որոնք Գորիսի սահմանամերձ բնակավայրերն են, ինչքան էլ ուզենաս ներդրում անել, արդյունքի չես հասնի, քանի որ շատ խնդրահարույց հարցեր կան, որ մինչև դրանք չլուծվեն, ներդրումների մասին կամ կապիտալ ծրագրերի մասին խոսելը պարզապես աբսուրդի ժանրից կլինի»,- նշում է ՏԻՄ ներկայացուցիչը:*

**Բնակարանային ապահովություն**

Համայնքի առաջնային խնդիրներից է նաև բնակարանների հարցը: Գորիսում շատ են դեռևս Բաքվից գաղթած փախստականները, ովքեր տասնամյակներ շարունակ բնակարաններ չունեն, բնակվում են ինքնաշեն տնակներում: Մարդիկ կան, որ 30 տարի վարձով են ապրում:

**Համայնքի ենթակառուցվածքների զարգացում**

Քննարկման մասնակիցներից ոմանք նշում են, որ համայնքը դեռևս ունի նաև ասֆալտապատման, մայթերի բարեկարգման խնդիր, թեև վերջերս մեծ թափով սկսվել էին աշխատանքներ իրականացվել այդ ուղղությամբ:
Խմելու և ոռոգման ջրերի հետ կապված խնդիրներն էլ վերջերս են ավելացել՝ վերջին երկու տարվա ընթացքում ամռան ամիսներին ջրամատակարարաման վիճակը շատ վատ է, որոշ թաղամասերում մարդիկ օրերով ջուր չեն ունենում:

***<u>Առաջարկություններ</u>***

Համայնքում առկա խնդիրների թեթևացման և/կամ լուծման համար, հարցվողների կողմից հնչել են հետևյալ առաջարկները՝

- հաշմանդամություն ունեցող երեխաների համար մասնագիտացված վերականգնողական կենտրոնի ստեղծման անհրաժեշտություն:
- լավ վերապատրաստված հոգեբանների, հատուկ մանկավարժների, լոգոպեդների, էրգոթերապևտների, ֆիզոթերապևտների կարիք:
- տարեցների ու միայնակ ծերերի խնամքի ու ժամանցի կենտրոնների կարիք:
- բարեգործական ճաշարանի տարածքի բարեկարգում, թարմացնել գույքն ու կահույքը:
- սոցիալական ծառայությունների ոլորտում առկա մասնագետները լուրջ վերապատրաստման կարիք ունեն: Պետք է հաճախակի փորձի փոխանակման այցեր կազմակերպվեն, Երևանից հրավիրվեն փորձառու մասնագետներ, ովքեր տեղում իրենց փորձով կկիսվեն տեղացի մասնագետների հետ:

- զբաղվածության խթանման կենտրոններ ստեղծում, որոնք կօգնեն մարդկանց աշխատանք գտնելու հարցում:
- երեխաների զարգացման և ժամանցի ապահովման կենտրոնների կարիք, արդի մասնագիտությունների հետ կապված արտադպրոցական խմբակների բացումը:
- սպասարկման ոլորտի բոլոր կադրերը մասնագիտական վերապատրաստումների կարիք ունեն:
- խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների կազմակերպում և բավարար մակարդակի ապահովում:
- Սոցիալական ծառայությունների հասցեականության, հասանելիության և մատչելիության բարելավում:
- Քաղաքացիների և ՀԿ-ների մասնակցության ապահովումը. տեղական մակարդակում սոցիալական քաղաքականությունների մշակման-իրականացման գործընթացներին:

## 2.4.2. ՍԻՍԻԱՆ

| | |
|---|---|
| **Խոշորացված համայնքում ներառված բնակավայրերի թիվը** | 1 քաղաքային<br>31 գյուղական |
| **Բնակչության թիվ** | 30,575 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 4,271 |
| **Երեխաների թիվ** | 6,884 |
| **Նպաստառու տնային տնտեսությունների թիվ** | 446 |
| **Տեղական սոցիալական պլանի առկայություն** | Առկա է |
| **Համայնքային սոցիալական աշխատողի առկայություն** | Առկա է |
| **Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ** | 7 |
| **Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը** | 33<br>(18-65 տարեկան՝ 25, 65+ տարեկան՝ 8) |
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 8 |

***Համայնքի մասին***

Սիսիանը խոշորացված համայնք է, ունի 1 քաղաքային, 31 գյուղական բնակավայր:

Սիսիանը հայտնի է իր պատմամշակութային հուշարձաններով՝ Զորաց քարերով, Որոտնավանքով, Վարդան Զորավարի գերեզմանով, ունի հարուստ և գեղատեսիլ բնություն, հայտնի է նաև Շաքի ջրվեժով, Ուխտասարով, որը վերջին տարիներին տուրիստների հետաքրքրությունների կենտրոնում է, այն նախնադարյան մարդկանց սրբատեղի քարեդարան է՝ ժայռապատկերներով: Սիսիանցիները երանությամբ են հիշում նաև Համո Սահյանին, և երջանիկ են համարում լեգենդի ժամանակակիցը լինելու համար: Համո Սահյանի տուն թանգարանը համարում են ուխտատեղի:

Մասնակիցները նշում են, որ Սիսիանում մշակութային կյանքն ակտիվ է, ունեն մշակույթի տուն՝ պարբերաբար կազմակերպվող միջոցառումներով, ժողգործիքների անսամբլ, պարի խումբ, սպորտդպրոց՝ անվճար խմբակներով:

***Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները***

Սիսիանն ունի մշակութային գործող օջախներ, որոնցում ներկայացված են Սիսիանի և Սյունիքի ինչպես պատմական ժառանգությունը, այնպես էլ ներկա մշակույթը: Սիսիանի Ն. Ադոնցի անվան պատմության պետական թանգարանն աչքի է ընկնում իր պատմահնագիտական և ազգագրական հարուստ ցուցանմուշներով, ինչպես նաև Քարադարանով՝ քարե կոթողների հարուստ հավաքածուով: Գործում է նաև ՀՀ ազգային պատկերասրահի մասնաճյուղը, գեղարվեստի դպրոցը, որոնցում կարելի է ծանոթանալ ինչպես նաև հայ նշանավոր նկարիչների, քանդակագործների, այնպես էլ տեղացի

արվեստագետների աշխատանքներին: Քաղաքում գործում են հանգստի համար հարմարավետ բազմաթիվ վայրեր:

Քաղաքի տնտեսության զարգացմանը մեծ խթան հանդիսացավ Որոտանի ՀԷԿ-երի համակարգի շինարարությունը (1960թ.): Ստեղծվել են արդյունաբերական շինանյութերի և թեթև արդյունաբերության, կերերի արտադրության մի շարք գործարաններ: Դրանց մի մասը տնտեսական ճգնաժամի հետևանքով 90-ականներից չի գործում կամ էլ գործում է իր արտադրական կարողությունների թերբեռնվածությամբ: Սիսիան քաղաքում է գտնվում Սպանդարյան ՀԷԿ-ի գլխամասային կառույցների շինվարչությունը: Սիսիանում իրենց նստավայրն ունեն մի շարք միջազգային կազմակերպություններ: Քաղաքում գործում է «Բիզնես կենտրոնը», որն աջակցում է գործարարության զարգացմանը: Սիսիանն ունի նաև օդանավակայան: Սիսիան քաղաքում գրանցված են մի շարք կազմակերպություններ: Սիսիան քաղաքի տնտեսությունը հիմնականում մասնագիտացվել է հանքագործական արդյունաբերությունում, մասնավորապես՝ ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրության ու մշակող արդյունաբերության, որից՝ սննդամթերքի ու ըմպելիքների, մանածագործական և կարի արտադրանքի արտադրությունները: Քաղաքում գործում են արդյունաբերական, գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, շինարարական տրանսպորտային, ծառայություններ մատուցող և մանրածախ առևտրի գործող օբյեկտներ: Քաղաքում գործում են նաև 5 հանրակրթական, երաժշտական և արվեստի, մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկներ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, թանգարան, գրադարան, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ,հիվանդանոց:

## ***<u>Զբաղմունքը/աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները</u>***

Համայնքի բարձրադիր գոտիներում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, իսկ ցածրադիր գոտիներում նաև այգեգործությամբ: Համայնքում արտադրությունը բավականին քիչ է: Հիմանակնում զբաղվում են կաթի մշակմամբ, գործում են պահածոների մի քանի փոքր գործարաններ, փոքր կրպակներ:

Շամբ բնակավայրում գործում է Շամբի պահածոների գործարանը, որը սեզոնային է, մոտ 50 աշխատատեղերով է ապահովում բնակչությանը և Տատնի ջրերի գործարանը՝ մոտ 20 աշխատատեղերով:

Համարյա բոլոր բնակավայրերում գործում են դպրոցներ, մանկապարտեզներ, վարչական տարածքների գրասենյակներ, սննդի կետեր, իսկ քաղաքում ավելանում են նաև սննդի սպասարկման կետերը, կա նաև «Սիսիան Կաթ» կաթի վերամշակման կետը, պանրագործարան, նաև մի քանի ՀԿ-եր: Սիսիանում գործում են մի քանի պանրի մշակման արտադրամասեր, քարի մշակման արտադրամասեր: 2016 թ.-ից Սիսիանում գործում էր նաև տրիկոտաժի կարի կոմբինատը 150 աշխատատեղով, սակայն կովիդով պայմանավորված արտադրամասը փակվեց և դրանից հետո չի վերագործարկվել:

Համայնքում շատ են զինվորական պայմանագրային ծառայողները, որը պայմանավորված է ամսվա վերջում հստակ աշխատավարձ ստանալու ակնկալիքով:

Հարցվողները Սիսիանի տնտեսական վիճակը հիմնականում համեմատում են Գորիսի հետ: Նրանք նշում են, որ տարբերությունը շատ տեսանելի է.

*«Մենք բազմիցս խոսել ենք այդ մասին, գորիսեցիների պատրաստակամությունը, ակտիվությունը, աշխատունակությունը շատ բարձր է: Գորիսում տնտեսությունն ավելի*

*զարգացած է: Մեր սիսիանցիները մի տեսակ համակերպվում են ամեն ինչի հետ: Տնտեսությունն էլ այդ կերպ է զարգանում, երբ որ չես համակերպվում եղածի հետ ավելիին են ձգտում: Այդ պատճառով տնտեսությունն էլ զարգանում է բնականաբար, սկսած խանութներից վերջացրած պետական ծառայություններից: Ճիշտն ասած մասնավորից եմ տեղյակ, պետականը կոնկրետ մեր կենտրոնի մասով, եթե Գորիսի հետ մենք համեմատենք կարելի է ասել՝ մենք քայլում են նույն ուղղությամբ, տարբերություն չեմ տեսնում, բայց մասնավոր սպեկտրներում տարբերությունը շատ է զգացվում, Գորիսն ավելի առաջադեմ է: Օրինակ հասարակ խանութը, եթե Սիսիանում կբացվի 10:30-11:00-ին, հագուստի խանութը Գորիսում 9:00-ին բաց է, այդտեղից սկսած իրենք իրենց տնտեսությունը զարգացնում են»*

Գորիսի հետ համեմատելով՝ հարցվողները նաև նշում են, որ Գորիսն ավելի զարգացած է, ժողովրդի մտածելակերպը սիսիանցիներից տարբեր է, մրցակցային են, Գորիսում շատ են հասարակական կազմակերպությունները, սննդի սպասարկման օբեկտները, բանկերի մասնաճյուղերը:

*Այնտեղ ամեն 3-րդ մարդը մտածում է ինչ ստեղծի, իսկ Սիսիանցին ասում է՝ «գործ չկա»: Գորիսեցիները քարից հաց են ստեղծում, պարապ չեն մնում:*
*Գորիսեցին նաև մաքուր է պահում իր քաղաքը, ամեն առավոտ մարդիկ իրենց սեփական տան բակերը սրբում են, ծաղիկներ են աճեցնում, իսկ մենք այդ մշակույթը չունենք: Այստեղ էլ ենք մենք ծույլ, սպասում ենք, թե երբ տարին մեկ կոմունալի աշխատակիցները կգան ու կսրբեն մեր բակերը: Մեր նորաբաց այգին արդեն աղբանոցի ենք վերածել:*
*Գորիսեցին պահանջատեր է, իրենք չեն հանդուրժում չաշխատողներին, ծույլերին, գորիսեցին հանդուրժող չէ:*

Մասնակիցների մի մասը գտնում է, որ մի քանի տարի առաջ համայնքի տնտեսական վիճակն ավելի լավ էր, քան հիմա: Պատերազմն ու համավարակը որոշ չափով իրենց բացասական ազդեցությունն ունեցան՝ փակվեց տրիկոտաժի ֆաբրիկան, որն էլ չվերաբացվեց:

Բնակիչները համակարծիք են, որ Սիսիանը հարևան համայնքների համեմատությամբ ամենաաղքատն է, որովհետև գործազրկության մակարդակը բարձր է, առևտրի մակարդակը ցածր է, տուրիզմը չի զարգանում:

Համայնքի բնակիչների սոցիալական վիճակի մասին խոսելի՝ քննարկման մասնակիցները նշում են, որ սոցիալական վիճակը միջին մակարդակի է, աշխատում են սնվելու, ինչ-որ չափով հագնվելու, ապրելու, կոմունալ վճարումներ կատարելու ու գոյատևելու համար: Քիչ են այն ընտանիքների թիվը, որ զնում են հանգստանալու: Գնաճը լայն սպառման ապրանքների շրջանում լուրջ խոչընդոտ է հանդիսանում տնտեսության զարգացման համար: Մարդիկ դժվարանում են վառելիք ձեռք բերել դաշտերը ցանելու և հնձելու համար, 1 տուկ խոտի ինքնարժեքը դարձել է 1200 դրամ, իսկ այն վաճառում են 1800-2000 դրամ:

Քննարկման մասնակիցները նշում են, որ անասնապահությամբ զբաղվող ֆերմերներն այլևս չեն կարողանում անասունները պահել, փորձում են վաճառել, սակայն իրենց առաջարկած գնով գնորդ չկա: Այս տարի ոչ մեկը երաշտի պատճառով հունձ չի արել, քանի որ դաշտը բերք չի տվել: Չնայած, որ վարկ են վերցրել և դաշտերը ցանել են վարկով:

Որոշ մասնակիցներ գտնում են, որ այնպես չէ, որ սոցիալական վիճակը լավացել է, այնպես էլ չէ, որ շատ վատ է՝ ծայրահեղ աղքատները ստանում են իրենց նպաստները, հաշմանդամներն

ու թոշակառուները իրենց թոշակները։ ՄՍԾ-ի կողմից հրատապ աջակցության կարիք ունեցող բնակիչները ստանում են եռամսյակային աջակցությունները։

*«Ես ինչքանով որ հասկանում եմ, Սիսիանի բնակչությունը անընդհատ նստած սպասում է, որ իրեն պետք է օգնեն։ Երկու երեխա ունեցողն էլ է նպաստ ուզում, չեն տալիս գնում են համայնքապետարան, այնտեղ էլ են մերժում, գնում են Վորլդ Վիժն։ Մի խոսքով, 25-26 տարեկան զույգը անընդհատ գումար է փնտրում, բացի աշխատանքից։ Սիսիանում ժողովուրդը լրիվ ծուլացել է»։*

Արցախյան պատերազմի ժամանակ շատ տղամարդիկ վիրավորում են ստացել և ունեն հաշմանդամություն՝ անգործունակ են ճանաչված, սակայն ընտանիքը չի կարողանում նպաստ ստանալ տարբեր պատճառներով՝ մեկի անվամբ սեփականություն կա, մեկի անունով եղբոր մեքենան, մեկի ընտանիքի ծնողները ապրում են արտերկրում։ Փաստացի ընտանիքը կանգնած է ծայրահեղ աղքատության շեմին՝ երեխաները սոված են, բայց սոցիալական ծառայություններից մնում են զուրկ։

Հարցվողներից քչերը նկատում են, որ պայմանագրային զինծառայողի ընտանիքը և՛ աշխատավարձ է ստանում, և՛ նպաստ, հնարավորություն ունի կոմունալները փակելու և սնվելու, իսկ ընտանիքներ կան ոչ մի դրամական աջակցություն չունեն, մնում են ոչ միայն պարտքերի տակ, այլ երեխաները սոված են քնում։

## ***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը</u>***

Քննարկման մասնակիցները նշում են, որ համայնքում սոցիալական ծառայությունների բացը շատ մեծ է, հիմնականում ծառայություններ չկան։ Համայնքում գործող պետական ծառայություններից առավել հայտնի են ՄՍԾ, համայնքապետարանի և մանկավարժահոգեբանական կենտրոնի գործունեությունը, իսկ մասնավոր ծառայություններից՝ Վորլդ Վիժնի կողմից հիմնադրված Նավակ կենտրոնը և տարեցների բարեգործական ճաշարանը։

«Համայնքների խոշորացումից հետո հարևան կամ հեռու բնակավայրերի բնակիչների խնդիրներն ավելի են շատացել, եթե նախկինում որևէ տեղեկանք էր պետք, ապա դա կարող էին վերցնել գյուղից, բայց հիմա շատ է բարդացել, ամեն թղթի համար պետք է մարդիկ հասնեն Սիսիան*»։*

Համայնքում որոշակի սոցիալական ծրագրեր իրականացնում է Առաքելություն Հայաստանը, World Vision-ը, ՄՍԾ-ն և Մեծահասակների ուսուցման կենտրոնը։

## ***<u>Ռեսուրսներ</u>***

***Հարցվողները հիմնականում առանձնացրել են հետևյալ ռեսուրսները՝***

- Պետական բյուջե
- Համայնքային բյուջե
- Հասարակական կազմակերպություններ
- Եկեղեցի
- Արտերկրում գտնվող համագյուղացիներ/համաքաղաքացիների տրասֆերտներ
- Կամավորներ

- Բարեկամների, հարազատների, հարևանների ներուժ

*Տեղեկացվածություն*

Հարցվողների մեծամասնությունը նշում է, որ մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում իմանում են հենց ծառայություն մատուցողներից, ընկեր-բարեկամներից, ովքեր ստանում են այդ ծառայությունները, յուրաքանչյուր ծառայություն իրենց ֆեյսբուքյան էջերում տեղադրվում է:

ՄՄԾի գրասենյակների հասցեների, հեռախոսահամարների և այլ տեղեկատվության իրազեկման նպատակով տեղեկատվական գրքույկներ է տարածել Վորլդ Վիժնը:

Հարցվողները շեշտում են նաև, որ հեշտ չէ սոցիալական բոլոր ծրագրերից տեղեկանալը: ,

*«Միսիանի սոցիալական ծրագրեր իրականացնող կառույցները որոշել են, որ տեղեկատվության տարածումը միայն ինտերնետով պիտի իրականացնեն, որը մի շարք խոցելի խմբերի համար հասանելի չէ»:*

*Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը*

Համայնքում գործող ՀԿ-ներից հարցվողները առանձնացրել են նաև Միսիանում ակտիվ գործունեություն ծավալող «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿն, որը իրավական խորհրդատվություն է տրամադրում բնակիչներին, իսկ «Ալմարի» ՀԿն կրթական և բնապահպանական ուղղվածություն ունի: Հիմնականում աշխատում են հեռավոր գյուղերի երիտասարդների հետ:

Համայնքի կողմից ՀԿ-ների համաֆինանսավորման հարցի վերաբերյալ քննարկման մասնակիցները նշել են, որ Նավակը, օրինակ, ֆինանսավորվում է և՛ պետության կողմից, և՛ Վորլդ Վիժնի կողմից: Ավետարանչական եկեղեցուն էլ համայնքը տարածք է տրամադրել:

Համայնքապետարանի հետ համաֆինանսավորմամբ է գործում նաև «Մեծահասակների կրթության կենտրոն»-ը:

Համայնքում «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կողմից գործում է Տարեցների զբաղվածության կենտրոնը, որտեղ 90 տարեցները բացի իրենց օրը լիարժեք անցկացնելուց, նաև սնվում են: Կենտրոնն ունի սոցիալական աշխատող և բուժքույր, որոնք արագ արձագանքում են շահառուների կարիքներին: Ունեն 20 շահառուներ, ովքեր տանից դուրս չեն գալիս, խնամք իրականացնող աշխատողների և բուժքրոջ միջոցով տունայցերի կազմակերպմամբ ծառայությունը մատուցում են ամբողջ ծավալով:

Հարցվողների կարծիքով, խնդիրները շատ են առողջապահության ոլորտում՝ մասնագետներ չկան: Շատ հաճախ կարիքավոր երեխաների ծնողները ստիպված են հասնել Երևան:

*Սոցիալական հիմնական խնդիրները՝ըստ հարցվողների*

**Առողջապահության ոլորտում**

Առողջապահության ոլորտում լավ մասնագետ բժիշկների կարիք ունի համայնքը: Մասնակիցների կարծիքով՝ լավ մասնագետները Սիսիան չեն գալիս, անգամ սիսիանցի երիտասարդները, ովքեր ավարտում են բժշկական համալսարանը, Սիսիան չեն վերադառնում: Սիսիանի հիվանդանոցն ունի ժամանակակից լաբորատորիայի և բժշկական սարքավորումների կարիք:

Սիսիանի ԲԿ-ն չունի մանկական նյարդաբան: Խնդիրներ ունեցող երեխաների հետազոտման, բուժման համար պետք է խնդրով երեխայի հետ ծնողը գնա Երևան, իսկ Երևանում ինչ-որ ժամանակով մնալը ծնողների համար լրացուցիչ ֆինանսական բեռ է:

Համայնքը ունի նոր նախակրթարանի կարիք: Գործող մանկապարտեզները գերծանրաբեռնված են: Նախակրթարանի տարիքային երեխաների մոտ 35 տոկոսը դուրս է մնում կրթությունից տեղ չլինելու պատճառով: Գյուղական համայնքների նախակրթարանները գտնվում են անմխիթար վիճակում, թե՛ շենքային պայմանները, և թե՛ ֆիզիկական հագեցվածությունը: Երեխաներին չի հրապուրում նախակրթարանը:

*«համայնքը չունի հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզոթերապևտի ծառայություն՝ համապատասխան սարքավորումներով: Հաշմանդամություն ունեցող երեխաները, վիրավորում ստացած զինծառայողները դրա կարիքը շատ ունեն, իսկ Երևանում ծառայություն ստանալը թանկ հաճույք է»*

Հարցվողների մի մասն էլ կարծում է, որ խնդիր ունեն և՛ կանայք, և՛ տղամարդիկ, քանի որ պատերազմից հետո մարդկանց մի մասը հաշմանդամություն է ձեռք բերել, մյուսներն էլ հոգեբանական ծանր սթրեսի մեջ են գտնվում: Մարդկանց դեռ չի հաջողվել հաղթահարել պատերազմի ժամանակ ունեցած ապրումները: Համայնքում խնդիր է անվճար հոգեբանական աջակցության կենտրոնի բացակայությունը մեծահասակների համար:

Մասնակիցների մեծամասնությունը նշում են, որ իրենց համայնքի տարեցները անպաշտպան են: Տարիներ շարունակ մարդկանց սոցիալական խնդիրներին կարևորություն չեն տալիս: Բարեգործական ճաշարանը գտնվում է քաղաքի ծայրամասում: Ֆինանսապես մարդիկ ի վիճակի չեն տրանսպորտից օգտվելու: Նախկին քաղաքապետները լուծել էին անվճար տեղափոխման հարցը, իսկ հիմա՝ ոչ:

Կրթության ոլորտում գերակշռող են մնում առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքները, մանկավարժա-հոգեբանական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները: Բոլոր առնձնահատուկ կարիք ունեցող երեխանները ընդգրկվել են ծառայությունում, սակայն տրանսպորտի բացակայության և մասնագետների պակասի պատճառով երեխաներին քիչ ժամանակ է հատկացվում ծառայության համար, որն անարդյունավետ է: Այս խնդիրը պայմանավորված է նաև կենտրոնին հատկացված հաստիքների քիչ քանակով:

Գերիշխող խնդիր է երեխաների ամառային հանգստի կազմակերպման բացակայութունը: Ամբողջ 3 ամիս, հատկապես սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող երեխաները ոչ մի կերպ հնարավորություն չունեն ամառային հանգիստը անցկացնելու ճամբարներում: Նախկինում Վորլդ Վիժնը կազմակերպում էր, և երեխաները հանգստանում էին ճամբարներում, այս տարի էլ է կազմակերպել, միայն իրենց կենտրոն հաճախող երեխաների համար:

**Գործազրկություն**

Համայնքում առկա է գործազրկություն, հատկապես քաղաքային բնակավայրում, իսկ գյուղաբնակները ինքնազբաղ են՝ զբաղվում են իրենց հողամասերի մշակմամբ և անասնապահությամբ: Գործազրկության պատճառով Սիսիանում մեծ թիվ է կազմում արտագաղթը: Քննարկումների մասնակիցների մի մասը նշում է, որ բնակչության 90% ն է աշխատանք փնտրում, մի մասը՝ 40-50%-ը: Տոկոսների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ծառայության համար պիտանի 20-45 տարեկան առողջ անձինք արդեն պայմանագրային զինծառայող են կամ կան մարդիկ, ովքեր չեն ցանկանում աշխատել:

*«Համայնքում գործազուրկներ շատ կան, մի մասը այն պատճառով, որ աշխատատեղեր չկան, մյուս մասն էլ այն պատճառով է, որ մարդիկ որոշում են, որ իրենց հարմար չէ այդ աշխատանքը: Ցավոք, այս երկրորդն ավելի շատ է հանդիպում: Աշխատանք փնտրել ասվածն այնքան հարաբերական է, մարդ կա, որ, իրոք, շատ անհրաժեշտ է այդ աշխատանքը ու ինքը աշխատանք է փնտրում ու վստահ կարող եմ ասել աշխատանք գտնելուց ինքը աշխատելու է և ունենք այնպիսի մի խավ, որ նստում է տեղում ու տխրում՝ասելով աշխատանք չկա: Երկու կատեգորիա կա՝ առաջին աշխատանք փնտրողներ, ովքեր միշտ գտնում են և երկրորդ՝ փնտրողներ, ովքեր այդպես էլ չեն գտնելու»*

Մասնակիցները նշում են, որ Սիսիանում կա 155 առավել խոցելի ընտանիք, որոնց 70 տոկոսը չի աշխատում: Մարդիկ չեն ուզում աշխատել, պետությունից անընդհատ մուրում են: Ըստ քաղաքապետարանի տվյալների՝ գործազուրկ է բնակչության 30-40%-ը: Գործազրկության տեսանկյունից առավել խոցելի խումբը հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներն են, խոցելի ընտանիքներն են, 45-63 տարեկան մարդիկ են, հաշմանդամություն ունեցող մարդիկ են, աշխատող և մինչև 3 տարեկան երեխաների մայրիկներն են:

Տարեց մասնակիցներից մեկը նշում է՝ *«Ես արդեն 23 տարի գործազուրկ եմ, նախկինում աշխատել եմ և 23 տարի այդպես էլ չկարողացա աշխատանք գտնել ու ծերացա: Այժմ ինձ հետ ծերանում է իմ 40- ամյա հարսը, ով երբևիցե աշխատանք չի ունեցել»:*

Աշխատող մայրերի համար դժվար է, երբ «դայակի» ծրագիրը վերջանում է երեխայի երկու տարեկանը լրանալուց հետո, մայրը կա՛մ պիտի դառնա գործազուրկ, կա՛մ «անպատասխանատու աշխատող» Սիսիանում մանկապարտեզներում վերցնում են միայն 3 տարեկանը լրացած երեխաներին: Հաշմանդամ երեխա ունեցող մայրերը նշում են, որ իրենք այն մարդիկ են, որ միշտ երազելու են աշխատանքի մասին, քանի որ իրենց երեխաների խնամքը միայն ու միայն իրենց վրա է:

Միջին մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդները նույնպես լրացնում են գործազուրկների շարքերը: Սիսիանի քոլեջում առկա մասնագիտությունները ժամանակակից չեն, սակայն կրթությունից դուրս չմնալու պատճառով ստիպված որևէ բաժին են դիմում, բայց համայնքը այդ մասնագետի կարիքը չունի:

*«650 փաստացի գրանցված գործազուրկ ունենք, ովքեր հրաժարվում են ոչ տրամաբանական պատճառով: Չեն ցանկանում սպասարկման ոլորտում աշխատել: Եթե նախկինում գործազրկության նպաստ էր սահմանված, կարող է դա էր ոգևորել մարդկանց, հիմա դա չկա և մարդիկ գրանցվում են աշխատելու համար, 650 գործազուրկ ունենք, բայց 1020 աշխատանք փնտրող, 1020 աշխատանք փնտրողների մեջ ներառված են այն մարդիկ, որոնք ուզում են իրենց աշխատանքը փոխել: Անձը մինչև դիմում չգրի հաշվառումից դուրս գալու համար, նա մնում է հաշվառման մեջ, գյուղական բնակչությանը հետաքրքրում են անասնապահական ծրագրերը, որոնք հաջողությամբ ենք իրականացնում: Մենք 34 ծրագիր ենք իրականացրել,*

*որից 33-ը նպաստառու ընտանիքների հետ ենք իրականացրել, սեզոնային զբաղվածության ծրագիրն ենք իրականացրել»*

ՄՄԾ-ի ներկայացուցիչը նշում է, որ համայնքում ծայրահեղ աղքատ է բնակչության 10%-ը:

Խնդիրները շատ են նաև կրթական ոլորտում, հատկապես գյուղական բնակավայրերում՝ ուսուցիչների պակաս կա, ներառական կրթության ոլորտի մասնագետները չեն կարողանում գնալ-գալ հեռու գյուղեր՝ միջհամայնքային տրանսպորտի մասնակի առկայության կամ ընդհանրապես բացակայություն պատճառով:

## *Առաջարկություններ*

Քննարկման մասնակիցների մեծամասնությունը կարևորում է՝

- 0-5 տարեկան երեխաների համար խնամքի կենտրոնի ստեղծումը /թեկուզ վճարովի/, որը կնպաստի աշխատող մայրերի, հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հոգսը թեթևացնելուն: Անհրաժեշտ է ունենալ նաև այնպիսի ծառայություն, որ ծնողը կարողանա շտապ մեկ-երկու ժամով երեխային կենտրոն տանի և իր հրատապ գործերով զբաղվի:
- հաշմանդամություն ունեցող երեխաների/մեծահասակների համալիր կենտրոնի բացումը, որտեղ շահառուները կստանան նեղ մասնագիտական ծառայություններ, ինչպես նաև ֆիզիոթերապիա և լող: Գնահատման չափանիշներն այնքան բարձր են դրված, որ խնդիրներ ունեցող երեխաները գնահատումից հետո չեն կարողանում օգտվել ծառայությունից:
- համայնքում ունենալ ճամբարային ծառայություն, տարվա բոլոր եղանակների համար:
- Սիսիանի ԲԿ-ն ունենա նաև սոցիալական աշխատողի հաստիք, ճիշտ ուղղորդումների ու հիվանդների շահերի պաշտպանության համար:
- Տարեցներն առաջարկում են, որ համայնքապետարանը բյուջեում տոն օրերին նվերների և Սյունիքի տեսարժան վայրեր էքսկուրսիայի համար տրանսպորտի գումար հատկացնի, ավելի քան 30 տարի նմանատիպ ծառայություն չեն ստացել:
- Ծառայությունների որակի բարձրացումը: Քանի որ այսօր ծառայությունները որակյալ չեն մատուցվում, դա նաև շահառուների խնդիրն է, չեն բողոքում, իրենց իրավունքները չեն պաշտպանում:
- Կառույցները պետք է գնահատեն իրենց կառույցի նշանակությունը: Ծառայություն մատուցողներին ընտրեն մրցույթային կարգով. ոչ թե նշանակեն բարեկամների, ծանոթների: Անընդհատ ուղարկեն կարճաժամկետ վերապատրաստումների, ակնկալեն աշխատանքի մեջ բարձր կատարողականություն:

Հարցվողները նշել են, որ վերոնշյալ ծառայությունները պետք է գործեն համայնքապետարանի, ՀԿ-ների և/կամ մասնավոր սեկտորի համագործակցությամբ, համաֆինանսավորմամբ, ինչպես նաև առկա և նոր ստեղծվելիք ծառայությունների որակի բարելավման համար շատ կարևոր են մասնագետների վերապատրաստումները, ատեստացիաները:

## 2.4.3. ՏԱԹԵՎ

| | |
|---|---|
| **Խոշորացված համայնքում ներառված բնակավայրերի թիվը** | 8 գյուղական բնակավայր |
| **Բնակչության թիվ** | 6,107 |
| **Տնային տնտեսությունների թիվ** | 1,267 |
| **Երեխաների թիվ** | 1,361 |
| **Նպաստառու տնային տնտեսությունների թիվ** | 195 |
| **Տեղական սոցիալական պլանի առկայություն** | Առկա չէ |
| **Համայնքային սոցիալական աշխատողի առկայություն** | Առկա է |
| **Համայնքում գործունեություն ծավալող ՀԿ-ների թիվ** | 2 |
| **Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների թիվը** | 32<br>(18-65 տարեկան՝ 24, 65+ տարեկան՝ 8) |
| **Ֆոկուս խմբային քննարկումների թիրախ խմբեր** | աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք |
| **Խորին հարցազրույցներ** | 3 |

***Համայնքի մասին***

Տաթև խոշորացված համայնքը կազմված է 8 գյուղական բնակավայրերից՝ Շինուհայր, Հալիձոր, Խոտ, Հարժիս, Տաթև, Սվարանց, Տանձատափ և Քաշունի: Համայնքի նստավայրը Շինուհայր բնակավայրն է:

Տաթև խոշորացված համայնքն ունի մոտ 6000-ից ավել բնակչություն, որից 2500 մարդ ապրում են Շինուհայր բնակավայրում:

Սովետական միության տարիներին Շինուհայրը համարվել է այժմյան Տաթև խոշորացված համայնքի համար թեթև արդյունաբերության կենտրոն, գործել է ռետինե կոշկեղենի գործարանը: Տաթև բնակավայրն այժմ համարվում է տուրիստական կենտրոն, որի շնորհիվ էլ ապահովվում է համայնքի հիմնական տնտեսական զարգացումը: Տաթև համայնքի բնակչության մեծ մասը ներգրավված է սպասարկման ոլորտում: Շինուհայր, Տաթև բնակավայրերում՝ նոր հյուրանոցներ, հյուրատներ են բացվել, ավելացել են սննդի կետերը, խանութները, բացվել են նոր աշխատատեղեր: Համայնքում աշխատատեղեր են ապահովում նաև դպրոցը, մանկապարտեզը, համայնքապետարանը, ճոպանուղին: Տղամարդկանց չնչին տոկոսը պայմանագրային զինծառայողներ են:

***Համայնքի ինֆրաստրուկտուրան և ֆիզիկական պայմանները***

Տաթև համայնքի վարչական տարածքում են գտնվում Տաթևեր ճոպանուղին /գ. Հալիձոր, գ.Տաթև/, Սատանայի կամուրջը /գ.Տաթև/, Տաթև վանական համալիրը /գ.Տաթև/: Համայնքի Տարածքում գտնվում է չօգտագործվող օդանավակայան /գ. Խոտ/: Համայնքի տարածքում գտնվում է խոշոր էլեկտրական ենթակայան /Շինուհայրի ենթակայան/: Ձորի մեջ առկա է 2հատ փոքր հզորության էլեկտրակայան, որոնք ձգվում են դեպի հարավ՝ դարձյալ Որոտանի

ձորը՝ «Զուվարի» այգիները, իսկ էլեկտրակայաններից դեպի հյուսիս սահմանագիծը հանդիսանում է Գորիս տանող ճանապարհը:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է բքաշունչ: Ամառը զով է երբեմն էլ շոգ ու երաշտ: Զորում գարունը շուտ է բացվում, աշունը ուշ վերջանում: Ձնածածկույթը Եռաբլրի տարածքում տևական է լինում, ուղեկցվում է բքի վերածվող ուժեղ քամիներով: Երբեմն փակվում են ճանապարհները, դադարում է երթևեկությունը: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարվա մեծ մասը մառախուղը Որոտանի ձորի անբաժան ընկերակիցն է: Համայնքը հարուստ է տարածքում գտնվող տարբեր ժամանակներին կառուցված պատամշակութային հուշարձաններով: Դրանցից որպես խոշորներ առանձնանում են «Տաթևի Անապատը» /գ.Տաթև/ և «Հալիձորի Մեծ Անապատը» /գ.Հալիձոր/:

Համայնքն ունի 7 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն, 3 գրադարան: Համայնքում արհեստի, արվեստի դպրացներ, մասնագիտացված ուսումնական հասատտություններ չկան:

## *Զբաղմունքը/աշխատանքը, եկամտի հիմնական ոլորտները*

Համայնքի գյուղական բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: 2020թ արցախյան պատերազմից հետո անասնապահությամբ զբաղվողները արոտավայրերի համար նախատեսված տարածքների կրճատման (հիմնական մաստ գտնվել է Արցախի տարածքում), խոտի պակասի ու թանկացման պատճառով որոշել են անասունները վաճառել:

Համայնքում գործող ծառայությունների մասին խոսելիս բնակիչները նշում են, որ Տաթև համայնքում գործում են երկու առողջության պահպանման կենտրոններ՝ Շինուհայրի ԱԱՊԿ-ն և Տաթևի ԱԱՊԿ-ն, որոնք սպասարկում են ողջ բնակչությանը: Ըստ քննարկման մասնակիցների համայնքաբնակների սոցիալական վիճակը որոշ մատուցվող ծառայությունների շրջանում փոխվել է դեպի դրականը: Օրինակ՝ նախորդ տարիների համեմատ Տաթև համայնքում բարելավվել են առողջապահական ծառայությունները: Մարդիկ օգտվում են պետպատվերի չափորոշիչներից, ուղեգրով հանրապետության տարբեր բժշկական կենտրոններում հետազոտություն և անվճար բուժում են ստանում: Այս ծառայությունից բոլոր խոցելի խմբերը՝ նպաստառուները, հաշմանդամություն ունեցող մեծահասակներն ու երեխաները, շաքարային դիաբետ ունեցող անձիք օգտվում են: Կարծիքի հետ համաձայն էին բոլոր մասնակիցները:

Ըստ մասնակիցների համայնքաբնակ ընտանիքների 80 տոկոսը ունեն վարկեր, և բոլոր եկամուտները ուղղում են վարկերի մարմանը:

Քննարկման ներկաները նշում են, որ համայնքը նոր ծառայություն է սկսել մատուցել, ստեղծվել է գյուղատնտեսական մեքենաների պարկ՝ նպատակ ունենալով էժան սակագներով սպասարկել համայնքաբնակներին՝ քիչ ծախսերով բարելավելու տնային տնտեսությունների սոցիալական վիճակը, սակայն գյուղացիներին հասանելի չէ, քանի որ բարձր վարձավճարով տրվում է ձեռնարկություններին, ինչպես նաև խոշոր հողատերերին:

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից Շինուհայրում հիմնադրած «Բարեկամ» երեխաների և երիտասարդների զարգացման կենտրոնը կրթության ոլորտում թեթևացրել է ընտանիքների սոցիալական վիճակը: Խոցելի ընտանիքների ծնողների մեծամասնությունը նշում է, որ կենտրոնի կողմից

մատուցվող ծառայություններից դասապատրաստումները տարբեր առարկաներից շատ օգտակար են, քանի որ այլևս գումար չեն ծախսում երեխաներին պարապմունքների ուղարկելու համար: Սակայն տեղերը սահմանափակ են և ոչ բոլոր երեխաներն են հաճախում Կենտրոն:

***<u>Հանրային ծառայությունները, տեսականին և մատչելիությունը</u>***

Խոսելով հանրային ծառայությունների մասին հարցվողներից մի քանիսը նշել են, որ ծառայությունների ոլորտում մասնագիտացված մոտեցումների և թիմային աշխատանքի բացակայության խնդիրներ կան:

*Մեջբերվում է մի օրինակ. «Կոնկրետ առողջապահության ոլորտը, եթե վերցնենք, ունենք շատ լավ ամբուլատորիա, շենքային պայմանները կարելի է բարելավել, այստեղ կա գործիքների, սարքերի, գործիքակազմի խնդիր, նաև մասնագիտական թիմի խնդիր: Ամեն տեղ մասնագիտկան մոտեցման խնդիրը կա և, եթե լինեն համապատասխան մասնագետները շատ ավելի լավ ծառայություններ կմատուցվեն՝ ավելի ճիշտ մոտեցմամբ, ինչպես դա արվել է օրինակ խորհրդային շրջանում և հետխորհրդային շրջանում մինչև 1997-1998 թվերը: Այդ շրջանում մեր գյուղում ծննդատուն կար, որը կրճատվեց, փակվեց, տարբեր տեղերից եկած մասնագետներն էլ հետ գնացին պատերազմական իրավիճակով պայմանավորված»:*

Կրթական ծառայությունների ոլորտում նս թերություններ կան, բայց այդքան շատ չեն, կարծում են որոշ հարցվողներ:

*«Ինչպես սոցիալական աշխատանքը, այնպես էլ հատուկ մանկավարժությունը նոր ներմուծված մասնագիտություններ են, նոր կիրառվող մեթոդիկա է, և այստեղ ոչ թե պետք է դնենք ձևական դերի հիման վրա, այլ մասնագիտական հիմքի վրա: Գուցե, կադրային խնդիր ունենք այդ ոլորտում: Հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ ճիշտ աշխատանքի պակաս կա, որովհետև բոլորը սովորում են հիմնականում փորձի վրա, ինչպես նաև ես՝ մոտ երկու տարի է աշխատում եմ սոցիալական աշխատող, սկզբում չէի պատկերացնում թե դա ինչ է, բայց փորձի հետ աստիճանաբար սովորում եմ: Ամեն ինչ պետք է հիմնված լինի փորձի վրա»,-նշում է համայնքապետարանի սոցիալական աշխատողը:*

Քննարկման մասնակիցները նշում են, որ համայնքային սոցիալական ծառայությունը լուրջ խնդիրներ ունի: Բնակիչները չեն ճանաչում սոցիալական աշխատողին, իրազեկ չեն, չգիտեն ինչ հարցերով կարող են դիմել և ինչ աջակցություն կարող են ստանալ սոցիալական ծառայողներից:

Համայնքում ուրիշ ծառայություններ չկան .

*«Դե հիմնականում նյութական միջոցներ են եղել մինչև այժմ, խոսքը դրամական աջակցությունների մասին է: Նաև տարբեր կազմակերպություններ, որոնք կան համայնքի տարածքում և գործում են շատ դեպքերում մասնագիտական դասընթացներ են կազմակերպում: Համայնքապետարանի կողմից տրամադրվող հիմնական աջակցությունը, եթե լինում է, իհարկե նյութական միջոցի տեսքով է միայն լինում»,- նշում է հարցվողներից մեկը:*

**Ռեսուրսներ**

*Հարցվողները համայնքի հիմնական ռեսուրսները համարում են՝*

- Պետական բյուջե,
- Հասարակական կազմակերպություններ,
- Արտերկրում գտնվող համագյուղացիներ/համաքաղաքացիների տրասֆերտներ:

Հարցվողները դժվարանում են պատասխանել, թե համայնքային բյուջեի քանի տոկոսն է տրամադրվում սոցիալական ոլորտին:

## *Տեղեկացվածություն*

Տաթև համայնքում իրազեկության մակարդակը սոցիալական ծառայությունների վերաբերյալ շատ ցածր է: Այն մարդիկ են իրազեկված լինում, ովքեր միշտ այդ ծառայություններից օգտվում են: Օրինակ մասնակիցները չգիտեին, որ համայնքապետարանի նույն իրենց նպաստի թղթեր տրամադրողը համայնքի սոցիալական աշխատողն է և ունի պարտականություններ և պետք է աշխատանք տանի խոցելի ընտանիքների հետ:
Սոցիալական ծառայությունների մասին բնակիչները հիմնականում տեղեկանում են համայնքապետարանից, դպրոցից, հեռուստացույցից, հարևաններից, բարեկամներից, ծանոթներից, սոցցանցերից:
Կարելի է տարանջատել մշտական օգտվողների և անիրազեկների: Իրազեկվածությունը համայնքում ցածր մակարդակի է: Ծառայություններից օգտվում են համայնքաբնակների մի քանի տոկոս՝ բացառությամբ ընտանեկան նպաստի:
Մի քանի մասնակիցներ նշում են, որ նմանատիպ ընտանիքներ գիտեն, որ սոցիալական ծառայություններից չեն օգտվում:

Գրեթե բոլոր մասնակիցները նշում են, որ հեշտ չէ սոցիալական բոլոր ծրագրերի մասին տեղեկանալը: Համայնքում իրազեկումն իրականացվում է շատ նեղ շրջանակում: Տարիներ շարունակ ոչ միայն Շինուհայրում, այլ նաև մյուս բնակավայրերում նման քննարկումներն իրականացվել են համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատողների հետ:

Նշում են, որ ոչ մի տեղ հայտարարություն չեն տալիս, ֆեյսբուքով կամ այլ սոցիալական ցանցերով չեն իրազեկում, գյուղամիջյան երևացող տեղերում հայտարարություններ չեն փակցվում, բայց երբ հարցնում են, համայնքապետարանի աշխատակիցները արդարանում են՝ ***ասելով հայտարարությունը եղել է, դուք տեղյակ չեք, անգամ այդ հայտարարության ձնն էլ չեն կարողանում գտնեն ցույց տան: Հենց մենակ իրանց շրջապատի 20 տոկոսն է միշտ տեղյակ լինում, այսինքն՝ իրենք են տեղյակ պահում իրենց հարմար մարդկանց:***

Մասնակիցներից ոմանք նշում են, որ իրենք հեշտ են տեղեկանում, քանի որ համայնքապետարանում, ՄՍԾ-ում ունեն բարեկամներ, ովքեր տեղեկացնում են և օգնում են ծրագրերում ընդգրկվելուն:

## *Բավարարվածություն*

Մասնակիցների մի մասը նշում է, որ հիմնականում օգտվում են պետական ծառայություններից՝ նպաստից, կենսաթոշակից, հաշմանդամության նպաստից: Մի քանի հոգի նշել են, որ համայնքից են ստացել մեկանգամյա դրամական աջակցություն՝ անհետաձգելի և հրատապ դեպքերի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերը նշում են, որ իրենց երեխաները ընդգրկված են կրթության մեջ և ընդգրկվելու կարգի մասին տեղեկացրել է դպրոցի ՄԿԱ փոխտնօրենը:

## *Ոչ պետական ծառայությունների տեսականին, ծածկույթը և ֆինանսավորումը/համաֆինանսավորումը*

Հարցվողներից մի քանիսը նշում են, որ համայնքում գործում է ԳՈՒՄ ՀԿ-ի «Բարեկամ» երեխաների զարգացման կենտրոնը, որի համար տարածքը տրամադրել է համայնքը՝ անվճար հիմունքներով: Կենտրոնը գործում է մանկապարտեզին կից, այն ունի նաև հոգեբանական ծառայություններ, զարգացնող խմբակներ:

Համայնքապետարնի կողմից ՀԿ-ների հետ համաֆինանսավորվող ծրագրերից հարցվողները հիմնականում տեղյակ չեն:

## *Սոցիալական հիմնական խնդիրները՝ ըստ հարցվողների*

Տաթև համայնքի կարիքները շատ են ու բազմազան: Տաթև համայնքի բոլոր դպրոցներում երեխաների համար բացակայում են արտադասարանական խմբակներն ու առարկայական պարապմունքները՝ հատկապես լեզուների:

Մեծահասակները չունեն զբաղմունքի համար հարմարավետ պայմաններ: Տարվա բոլոր եղանակներին հավաքվում են բացօթյա տաղավարում և խաղում տանից բերված սեղանային խաղերով:

Շինուհայր բնակավայրի ամենախոցելի տեղը **մշակույթի տան և մշակութային կյանքի բացակայությունն** է: Շենքը համայնքապետարանի անտարբերության արդյունքում գտնվում է անմխիթար վիճակում: Համայնքապետարանում հանել են մշակույթի, սպորտի, կրթության բաժնի պատասխանատուի հաստիքը: Տարածաշրջանում ամենամեծ գյուղական համայնքը լինելով՝ ոչ մի մշակութային միջոցառում չի կազմակերպվում բնակիչների համար, բավարարվում են միայն դպրոցական միջոցառումներով և երաժշտական դպրոցի հաշվետու համերգներով:

Բնակիչները նշում են, որ որոշ երեխաներ պարի, նկարչության, դհոլի խմբակներ են գնում Գորիս քաղաքում, որը Շինուհայրից գտնվում է 20 կմ հեռավորության վրա: Տաքսի ծառայության արժեքը Շինուհայրից Գորիս հասնելու համար 2500 դրամ է առանց հետադարձի, որը հասանելի չէ ոչ միայն խոցելի խմբերին, այլ ընդհանրապես ողջ համայնքաբնակներին: Իսկ Սվարանց, Տաթև, Հարժիս, Հալիձոր Խոտ բնակավայրերի երեխաների համար այդ խմբակները երազանք են: Բնակիչները հավատացած են՝ եթե Շինուհայրում նման **խմբակներ** լինեն, նաև սպորտային /կարատե, բոքս/ բոլոր հարակից գյուղերի երեխաները կգան, կմասնակցեն:

Համայնքը չունի **խաղահրապարակ**: Բնակիչները նշում են, որ տարածքը կա, սակայն ոչ մի համայնքապետ երբևիցե չի մտածել երեխաների հանգստի համար: Երեխաները, մասնակցելով տարբեր ծրագրերի, այդ տարածքը ցանկապատել են, սակայն կահավորած չէ, բայց անկախ ամեն ինչից երեկոյան բոլոր երեխաները հավաքվում են, իրենց գնդակներով խաղում:

Մասնակիցները նշում են, որ Տաթև խոշորացված համայնքի բոլոր դպրոցները համարվում են ներառական: Առանձնահատուկ կրթական կարիք ունեցող երեխաները գնահատվել են Գորիսի մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից և ստանում են մասնագիտական

աջակցություն: Ծնողների մեծամասնությունը գոհ են մատուցվող ծառայություններից, ասելով, որ երեխաների մոտ տեսնում են դրական դինամիկա:

Դպրոցում **առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները** գնահատված են և համապատասխան մասնագետներ են աշխատում իրենց հետ: Սակայն մասնակից ծնողների ¼ մասը նկատեց, որ տեսողության խնդիր ունեցող երեխաները ծաղրանքի են ենթարկվում հասակակիցների կողմից՝ հատկապես ակնոց կրողները: Ուսուցիչները երբեք չեն անդրադառնում խնդրին՝ անգամ ծնողների կողմից բարձրաձայնելուց հետո էլ և երեխաների մոտ առաջանում է թերաժեքության և ինքնագնահատականի անկում:

Մասնակիցները նշում են, որ համայնքում տարեցները, հաշմանդամները ստանում են իրենց թոշակները, նպաստները, ԱԱՊԿ-ից իրենց դեղորայքը, սակայն զուրկ են մնում **մշակութային միջոցառումներից**: Օրինակ, երբ Գորիսի թատրոնը ներկայացում է բերում ու դպրոցի դահլիճում ցուցադրում, նկատվում է, որ տարեցները, ծնողներն էլ հետաքրքրված են, բայց որ արդեն դպրոցի դահլիճում է հրաժարվում են մասնակցել՝ մտածելով, որ տեղերը սահմանափակ են:

Հարցվողների մեծամասնությունը նշում են, որ **սոցիալական խնդիրներից** գերակշռողը աշխատատեղերի բացակայությունն է:

*«Երբեմն լինում են համայնքում տարբեր հարցերի շուրջ քննարկումներ, հիմնականում երիտասարդներն են ներգրավված, իհարկե, այնպես չէ որ տարիքային սահմանափակումներ ենք դնում, ուղղակի հետաքրքրությունները ավելի շատ երիտասարդների մոտ է նկատվում տարբեր հարցերի շուրջ: Մեր վարչական ղեկավարների հետ հայտարարություններ ենք փակցնում, իհարկե, մեր համայնքապետարանի կայքում է տեղադրվում», -նշում է համայնքապետարանի սոցիալական աշխատողը:*

*«Համայնքի հանրային քննարկումներին չեն մասնակցում, տեղեկացված չեն: Հիմնականում նման քննարկումները փակ են տեղի ունենում կամ ձևական մի քանի մարդ են բերում»,- նշում է մեկ այլ հարցվող:*

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Մասնակիցները նշում են, որ համայնքում կա գործազրկության խնդիր՝ որոշները աշխատանք են փնտրում, որոշները չեն փնտրում: Հիմնականում աշխատանք փնտրողները կանայք են: Համայնքում հիմնականում աշխատատեղերը դպրոցում են, երաժշտական դպրոցում, մանկապարտեզում, համայնքապետարանում, բուժկետերում, «Բարեկամ» կենտրոնում, որոնք արդեն համալրված են աշխատողներով: Նշում են, որ այժմ դաշտերում օրավարձով բանվորի գործ կա, սակայն ոչ մեկը չի համաձայնվում 7000-8000 դրամով աշխատելու, պատճառաբանում են, որ մշտական գործ են փնտրում:

Աշխատանք փնտրողներ են համարվում նաև երիտասարդները, ովքեր ավարտել են ԲՈՒՀ – երը և իրենց մասնագիտություններով աշխատանք չեն գտնում:

Գործազրկությունը խիստ արտահայտվում է հաշմանդամություն ունեցող անձանց վրա, քանի որ, նախկինում լինելով մասնագետներ, այժմ չեն կարողանում իրենց ծառայությունները ողջ ծավալով մատուցել բնակչությանը:
Գործազրկության տեսանկյունից խոցելի խումբ են երեխաներ /ներառյալ հաշմանդամ երեխա/ ունեցող ծնողները: Մանկապարտեզը գործում է մինչև ժամը 3-ը: Դպրոցից, մանկապարտեզից հետո երեխաների խնամքը մնում է չաշխատող ծնողների վրա, աշխատելու դեպքում երեխաները մնալու են առանց խնամքի և առանց զբաղվածության:

*«Գործազրկության խնդիր ունենք, ինչպես բոլորը, հիմնականում նոր ավարտած, փորձառություն չունեցող երիտասարդներ, կանայք, որոնք չունեն աշխատելու հնարավորություն, բայց ցանկություն ունեն, 15-20 տոկոս աշխատելու ցանկություն ունեցողներ կան»,- նշում է հարցվողներից մեկը:*

Հարցվողները գործազրկության տեսանկյունից ավելի խոցելի են համարում փորձ չունեցող երիտասարդներին, կանանց, կրթություն չունեցող մարդկանց, ինչպես նաև տարեցները, նախակենսաթոշակային տարիքի մարդիկ:

Հարցվողների մեծամասնությունը երիտասարդներին խոցելի չեն համարում, գտնելով, որ ժամանակակից տեխնոլոգիանները իրենց լայն հնարավորություն են տալիս անգամ տնից աշխատելու, անգամ մի քանի տեղ աշխատելու:

Համայնքի տնտեսական վիճակի մասին խոսելիս՝ հարցվողների մի մասը նշել է, որ թեև վերջին 44-օրյա պատերազմը և համավարակը՝ Covid19-ը, իրենց բացասական ազդեցությունն են թողել համայքնի տնտեսական զարգացման վրա, սակայն չի կարելի ասել, որ համայնքը տնտեսական ծանր վիճակում է: Ներկայումս տուրիստական հոսքերը մի քիչ նվազել են համեմատած մնացած տարիներին, բայց ամեն դեպքում հույս ունեն, որ որոշակի զարգացում նորից կլինի:

## *Առաջարկներ*

Քննարկումների մասնակիցները առաջարկում են, որ՝

- Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է վերապատրաստվեն, օրենքներին լավ տիրապետեն, քանի որ անընդհատ օրենքներում փոփոխություններ են լինում:
- Փորձի փոխանակման հանդիպումներ պետք է կազմակերպվեն, տեսնեն ուրիշ տեղերում մարդիկ ոնց են աշխատում:
- Պետք է, որ մասնագետները իրենց վրա աշխատեն ու սիրեն իրենց աշխատանքը:
- Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է լինեն համայնքաբնակների նկատմամբ հանդուրժող, բարի: Գիտակցեն, որ մարդիկ իրենց կողմից մատուցված որակյալ ծառայությանն են սպասում:
- Սոցիալական ծառայությունների աշխատակիցները պետք է անընդհատ ինքնակրթվեն, անցնեն վերապատրաստման դասընթացներ, նոր հմտություններ ձեռք բերեն:
- Մշակույթի տան կառուցում, որը հնարավորություն կտա երիտասարդներին զարգացնելու իրենց կարողությունները:
- Ժամանցային կենտրոնների ստեղծում:
- Խմելու և ոռոգման ջրի հարցը:
- Զբոսայգու կառուցում երեխաների համար:
- Բնակիչների մեծ մասը կարծում է, որ վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը պետք է իրականացվեն համագործակցաբար՝ համայնք-ՀԿ-բիզնես:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով ծրագրային թիրախ համայնքներում խոցելի խմբերի կարիքների գնահատումը՝ պարզ է դառնում, որ բնակիչների կողմից բարձրաձայնված կարիքներն ու խնդիրները գրեթե նույնն են։ Այսպես, օրինակ, երեխաների՝ հատկապես հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների համար զարգացման կենտրոնների բացակայությունը, տարեցների համար զբաղմունքի/ժամանցի վայրի բացակայությունը, սոցիալական աջակցության ծառայությունների մատուցման ցածր որակը, չափորոշիչների ոչ հստակ լինելը, սոցիալական աշխատողների և ինտեգրացված սոցիալական ծառայությունների մատուցման պատասխանատուների վերապատրաստման կարիքը, ենթակառուցվածքների՝ ճանապարհների, խմելու ու ոռոգման ջրագծերի անմխիթար վիճակը և այլն։

Հասարակական կամ միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվում են բազմատեսակ՝ սահմանափակ ժամկետայնությամբ և ռեսուրսներով ծրագրեր, որոնք սոցիալական աջակցություն են տրամադրում իրենց թիրախ խմբերին։ Չնայած որ այսպիսի ծրագրերը թիրախավորված և որակյալ աջակցություն են տրամադրում, դրանք խիստ սահմանափակ են և ոչ միշտ է հնարավոր լինում խուսափել վերածածկերից։

Ծրագրային թիրախ համայնքներում խոցելի խմբերի կարիքների դուրս բերման և գնահատման նպատակով իրականացված մասնագիտական հարցազրույցների ընթացքում ու բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումների ժամանակ հիմնականում կարևորվել է՝

- 0-5 տարեկան երեխաների համար ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծումը /որոշ համայնքներում նույնիսկ վճարովի/, որը կնպաստի աշխատող մայրերի, հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հոգսը թեթևացնելուն։
- հաշմանդամություն ունեցող երեխաների/մեծահասակների համալիր կենտրոնի ստեղծումը, որտեղ շահառուները կստանան նեղ մասնագիտական ծառայություններ թե՛ հոգեբանական, թե՛ ֆիզիկական, վերականգնողական։
- Տարեցների և երիտասարդների համար համատեղ զարգացման-ժամանցային կետրոնի ստեղծում, որտեղ տարեցները կկարողանան իրենց կյանքի և մասնագիտական փորձը փոխանցել երիտասարդների, իսկ երիտասարդները հնարավորություն կունենան լրացուցիչ հմտություններ և գիտելիքներ ձեռք բերել։
- Երեխաների համար խմբակների ստեղծումը և դրանց հասանելիության ապահովումը,
- Այնպիսի կենտրոնի ստեղծումը, որը հնարավորություն կտա հաշմանդամություն ունեցող անձանց զարգացնել իրենց հմտությունները, զբաղմունքի հնարավություն կստեղծի, միևնույն ժամանակ էլ կկարողանան ձեռքի աշխատանքներ պատրաստել և վաճառել։

Այսպիսով, սոցիալական ծառայությունների արդյունավետությունը և կարիքահեն բնույթը խթանելու նպատակով դրանց իրականացման և պատվիրակման գործընթացքում անհրաժեշտ է ակտիվացնել տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարում։

Ծրագրային թիրախ համայնքների ներկայացուցիչների հետ հարցազրույցներից, ինչպես նաև զարգացման ծրագրերի և դրանց հաշվետվությունները դիտարկելիս, պարզ է դառնում, որ թե՛ մարզային, թե՛ տարածքային զարգացման ծրագրերը, թեպետ ներառում են սոցիալական ոլորտին առնչվող հարցեր, դրանք հիմնականում միանվագ աջակցության բնույթ են կրում և

չեն արտացոլում սոցիալական խնդիրների երկարաժամկետ լուծումներ կամ դրանց հաղթահարման ուղիներ:

Համայնքներում բացակայում են տեղական սոցիալական պլանները, թեև դրանց մշակման մեթոդաբանությունը հաստատված է ՀՀ ԱՍՀՆի կողմից, սակայն պրակտիկ կիրառություն չունի:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ որակյալ և թիրախավորված սոցիալական աջակցության ծառայությունների ստեղծման և մատուցման հիմքում նախ և առաջ պետք է ընկած լինի որակյալ և մասնակցային եղանակով մշակված տեղական սոցիալական պլանը, որը կներառի համայնքի սոցիալական կարիքների գնահատումը և դուրս բերված խնդիրների լուծման պրակտիկ ուղիները: Սոցիալական պլանի հիման վրա հիմնված սոցիալական ծառայությունների հասցեականության, հասանելիության և մատչելիության խնդիրներն անհրաժեշտ է հստակ ձևակերպել որակի չափորոշիչների միջոցով, ինչպես նաև ապահովել դրանց պրակտիկ կիրառումը:

Ի վերջո, համայնքային զարգացմանը միտված ցանկացած նախաձեռնություն պետք է լինի մասնակցային՝ քաղաքացիները, ՀԿ-ները, տեղական իշխանություններն ու ձեռներեցները պետք է մասնակցեն սոցիալական քաղաքականությունների մշակման-իրականացման գործընթացներում:

## Հավելված 1. Ֆոկուս խմբերի վարման ուղեցույց

*Ներկայացում (մասնակիցների սեռը, տարիքը, ընտանիքի կազմը, զբաղվածությունը)*

Համայնքի մասին

- Խնդրում եմ, պատմեք Ձեր համայնքի մասին: Ինչո՞վ է համայնքը հայտնի: Որո՞նք են համայնքի տնտեսվարման հիմնական ոլորտները (արտադրություն, գյուղատնտեսություն)
- Խնդրում եմ, համեմատեք Ձեր համայնքի տնտեսական վիճակը հարևան համայնքների հետ: Ո՞ր համայնքներն են ավելի լավ վիճակում և ինչու՞: Որո՞նք են ավելի վատ վիճակում և ինչու՞:
- Ինչպե՞ս է փոխվել Ձեր համայնքի տնտեսական վիճակը վերջին տարիների ընթացքում:
- Ինչպե՞ս է փոխվել Ձեր համայնքի բնակիչների սոցիալական վիճակը վերջին տարիների ընթացքում:
- Կա՞ արդյոք գործազրկության խնդիր Ձեր համայնքում: Ի՞նչ կասեք այդ մասին: Բնակչության մոտավորապես ո՞ր մասն է աշխատանք փնտրում:
- Համայնքի բնակչության ո՞ր խմբերն են առավել խոցելի գործազրկության տեսանկյունից:

Կարիքներ

- Ինչպիսի՞ առաջնային կարիքներ կան Ձեր համայնքում:
- Հասարակության ո՞ր խմբերն են սոցիալապես անպաշտպան Ձեր համայնքում (երեխաներ, տարեցներ, կանայք, հաշմանդամներ և այլն): Ինչու՞:
- Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներն գերակշռում, ինչո՞վ է դա պայմանավորված:
- Արդյո՞ք խոցելի խմբերը ներգրավված են/մասնակցում են համայնքի հանրային քննարկումներին/միջոցառումներին:

Տեղեկացվածություն

- Տեղյակ եք արդյոք ի՞նչ սոցիալական ծառայություններ են գործում համայնքում (Պետական/ մասնավոր/հասարակական):
- Ի՞նչ աղբյուրներից եք տեղեկացել:
- Որքանո՞վ են դրանք հասանելի Ձեր համայնքի բոլոր բնակիչների համար:
- Արդյոք գիտե՞ք այնպիսի անձանց/ընտանիքների, որոնք կարիք ունեն, բայց ընդգրկված չեն սոցիալական ծրագրերում:
- Արդյոք սոցիալական բոլոր ծրագրերի մասին հեշտ է տեղեկանալ:
- Որքա՞ն ժամանակ եք օգտվում համայնքում առկա սոցիալական ծառայություններից Եթե երկար ժամանակ է օգտվում եք, ապա ծառայությունների որակի փոփոխություն նկատել եք, թե ոչ:

Բավարարվածություն

- Ինչպիսի՞ սոցիալական ծառայություններից եք օգտվում: Արդյոք օգտվել/օգտվում եք ոչ պետական սոցիալական ծրագրերից:
- Ձեր շրջապատում կա՞ն սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչներ ովքեր օգտվում են սոցիալական ծառայություններ: Եթե չեն օգտվում տեղյա՞կ եք պատճառների մասին:
- Որքանո՞վ եք դուք կամ Ձեր ծանոթը գոհ մատուցվող ծառայությունների որակից:
- Որքանո՞վ են մատուցվող ծառայությունները հասանելի և մատչելի:
- Ինչպիսի՞ն է սոցիալական ծառայությունների սպասարկման որակը:
- Ինչպիսի՞ վերաբերմունքի եք արժանացել սոցիալական ծառայությունների աշխատակիցների կողմից:
- Արդյոք լուծում է ստացել Ձեր ներկայացրած խնդիրը : Եթե այո, ապա ինչպիսի ժամկետներու՞մ: Եթե ոչ, կարո՞ղ եք նշել պատճառների մասին:

- Ըստ Ձեզ, որքանով են մատուցվող ծառայությունները բավարարում ձեր/համայնքի սոցիալական կարիքները:

Առաջարկներ

- Ինչպիսի՞ սոցիալական ծառայություններ կցանկանայիք ունենալ ձեր համայնքում:
- Ըստ Ձեզ, ինչպիսի քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել մատուցվող սոցիալական ծառայությունները արդյունավետ և որակյալ դարձնելու համար:
- Ի՞նչ կարողությունների կարիք ունեն ծառայություն տրամադրողները (գիտելիք, հմտություններ, վստահություն, լիազորություններ, օրենսդրություն, ընթացակարգեր, պայմաններ, ֆինանսական միջոցներ, կադրերի թիվ, փոխգործակցության մեխանիզմներ):

## Հավելված 2. Փորձագիտական հարցման ուղեցույց

*Ներկայացում (անուն ազգանուն, պաշտոն, կառույց)*

***Ընդհանուր տեղեկություն***

- Խնդրում եմ, պատմեք Ձեր համայնքի մասին: Ինչո՞վ է համայնքը հայտնի: Որո՞նք են համայնքի տնտեսվարման հիմնական ոլորտները (արտադրություն, գյուղատնտեսություն)
- Խնդրում եմ, համեմատեք Ձեր համայնքի տնտեսական վիճակը հարևան համայնքների հետ: Ո՞ր համայնքներն են ավելի լավ վիճակում և ինչու՞: Որո՞նք են ավելի վատ վիճակում և ինչու՞:
- Ինչպե՞ս է փոխվել Ձեր համայնքի տնտեսական վիճակը վերջին տարիների ընթացքում:
- Ինչպե՞ս է փոխվել Ձեր համայնքի բնակիչների սոցիալական վիճակը վերջին տարիների ընթացքում:
- Ձեր կարծիքով որո՞նք են Ձեր համայնքի ամենաարդիական սոցիալական հիմնախնդիրները (առողջապահություն, կրթություն, սոցիալական աջակցություն):
- Կա՞ արդյոք գործազրկության խնդիր Ձեր համայնքում: Ի՞նչ կասեք այդ մասին: Բնակչության մոտավորապես ո՞ր մասն է աշխատանք փնտրում:
- Համայնքի բնակչության ո՞ր խմբերն են առավել խոցելի գործազրկության տեսանկյունից:
- Համայնքի բնակչության մոտավորապես քանի՞ տոկոսն է Ձեր կարծիքով ծայրահեղ աղքատ:

***Համայնքի մասին***

- Ինչպիսի՞ առաջնային կարիքներ կան Ձեր համայնքում:
- Ինչպես են այդ կարիքները թիրախավորված/թիրախավորվում համայնքում:
- Հասարակության ո՞ր խմբերն են սոցիալապես անպաշտպան Ձեր համայնքում (երեխաներ, տարեցներ, կանայք, հաշմանդամներ և այլն): Ինչու՞:
- Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներն գերակշռում, ինչո՞վ է դա պայմանավորված:
- Ինչպիսի միջոցառումներ են ձեռնարկվում այն խնդիրների հաղթահարման համար:
- Արդյո՞ք խոցելի խմբերը ներգրավված են/մասնակցում են համայնքի հանրային քննարկումներին/միջոցառումներին:

***Ծրագրեր և ծառայություններ***

- Նշված խոցելի խմբերի ներկայացուցիչների կարիքների բավարարմանն ուղղված ինչ ծրագրեր, ծառայություններ կամ օգնություն է տրամադրվում և ու՞մ կողմից:
- Ծրագրերի իրականացման հետ կապված ինչպիսի խնդիրներ կնշեք:
- Ինչ կարիքներ կան համայնքում որ որևէ կերպ լուծում չեն ստանում:

***Ռեսուրսներ***

- Համայնքի սոցիալական կարիքները հոգալու նպատակով ի՞նչ ռեսուրսներ կան և ինչ ծրագրեր են իրականացվում՝

○ Պետական բյուջե,
○ Միջազգային դոնորներ
○ Հասարակական կազմակերպություններ
○ Սփյուռքի աջակցություն
○ Եկեղեցի
○ Մասնավոր բիզնես/գործարարներ
○ Արտերկրում գտնվող համագյուղացիներ/համաքաղաքացիների տրասֆերտներ
○ Կամավորներ
○ Բարեկամների, հարազատների, հարևանների ներուժ
○ Այլ/ նշել

- Համայնքի բյուջեի քանի՞ տոկոսն է հատկացվում սոցիալական ոլորտներին (առողջապահություն, կրթություն, սոցիալական)/նշեք նաև գումարի չափը:

- Ի՞նչ ծրագրեր են իրականացվում այդ միջոցների շնորհիվ:

*Համագործակցություն*

- Գործում են արդյոք համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ներ:
- Իրականացվում է արդյոք սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ների համաֆինանսավորում համայնքի կողմից: Եթե այո, խնդրում եմ նշել, թե ինչպես:
- Համայնքում կա արդյոք համայնք-համայնք, համայնք-հասարակական կառույցներ, համայնք-բիզնես համագործակցության պրակտիկա սոցիալական ծրագրեր իրականացնելու շրջանակում: Եթե այո, խնդրում եմ նշել դրանք:

*Առաջարկություններ*

- Ինչ ծրագրեր են անհրաժեշտ իրականացնել համայնքի խոցելի խմբերի կարիքների բավարարման ուղղությամբ:
- Ֆինանսական միջոցների առկայության դեպքում առաջին հերթին ինչ սոցիալական ծրագրեր կնախընտրեիք իրականացնել Ձեր համայնքում:
- Ում կողմից պետք է իրականացվեն այդ ծրագրերը:
- Ի՞նչ կարողությունների կարիք ունեն ծառայություն տրամադրողները (գիտելիք, հմտություններ, վստահություն, լիազորություններ, օրենսդրություն, ընթացակարգեր, պայմաններ, ֆինանսական միջոցներ, կադրերի թիվ, փոխգործակցության մեխանիզմներ):
- Ըստ Ձեզ, ինչպիսի քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել մատուցվող սոցիալական ծառայությունները արդյունավետ և որակյալ դարձնելու համար:

## Հավելված 3. Խորին հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ

1. Խորին հարցազրույցների ցանկ

| | Ամիս, ամսաթիվ, տարեթիվ | Համայնք/մարզ | Անուն, ազգանուն | Պաշտոն |
|---|---|---|---|---|
| 1. | 7/23/21 | Մեծամոր/Արմավիր | Նոնա Թաղևոսյան | Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար |
| 2. | 7/21/21 | Մեծամոր/Արմավիր | Տեր Տաթև քահանա Կիրակոսյան | Մեծամոր համայնքի հոգևոր հովիվ |
| 3. | 7/26/21 | Մեծամոր/Արմավիր | Մարգարիտ Սեդրակյան | «Հույսի Մեծամոր» ՀԿ-ի նախագահ |
| 4. | 7/28/21 | Մեծամոր/Արմավիր | Բարսեղյան Վոլոդյա | Մեծամոր համայնքի ավագանու անդամ |
| 5. | 10/27/21 | Այգեշատ/Արմավիր | Արամայիս Մխիթարյան | Այգեշատ համայնքի ղեկավար |
| 6. | 10/28/21 | Արգավանդ/Արմավիր | Արշավիր Աղաջանյան | Արգավանդ համայնքի ղեկավար |
| 7. | 20/29/21 | Վարդանաշեն/Արմավիր | Միհրան Հովհաննիսյան | Վարդանաշեն համայնքի ղեկավար |
| 8. | 11/1/21 | Նալբանդյան/Արմավիր | Գրիգոր Մկրտչյան | Նալբանդյան համայնքի ղեկավար |
| 9. | 11/2/21 | Տանձուտ/Արմավիր | Մխիթար Պետրոսյան | Տանձուտ համայնքի ղեկավար |
| 10. | 11/3/21 | Բամբակաշատ | Ստեփան Նազարյան | Բամբակաշատ համայնքի համայնքապետարանի առաջատար մասնագետ |
| 11. | 11/6/21 | Ջանֆիդա | Միշա Կարապետյան | Ջանֆիդա համայնքի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար |
| 12. | 11/7/21 | Փշատավան | Հերմինե Հակոբյան | Փշատավան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար |
| 13. | 7/30/21 | Արմավիր/Արմավիր | Անի Խաչատրյան | Արմավիր համայնքի համայնքապետի օգնական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | 7/13/21 | Արմավիր/Արմավիր | Հակուհի Խառատյան | Արմավիրի միասնական սոցիալական ծառայության պետ |
| 15. | 7/15/21 | Արմավիր/Արմավիր | Քրիստինե Մկրտչյան | Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի օգնական |
| 16. | 7/20/21 | Արմավիր/Արմավիր | Հովհաննես Հարությունյան | Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության բաժնի պետ |
| 17. | 7/14/21 | Արմավիր/Արմավիր | Արմեն Կարապետյան | «Արմավիրի զարգացման կենտրոն» հկ-ի տարեցների ծրագրով սոցիալական աշխատող |
| 18. | 8/2/21 | Արմավիր/Արմավիր | Անահիտ Նահապետյան | «Արևածագ» հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն |
| 19. | 5/22/21 | Մրգաշատ/Արմավիր | Խաչատրյան Լարիսա | Մրգաշատի Կանանց խորհրդի նախագահ |
| 20. | 6/20/21 | Մրգաշատ/Արմավիր | Տեր Սահակ քհն. Մարտիրոսյան | Մրգաշատի հոգևոր հովիվ |
| 21. | 6/22/21 | Մրգաշատ/Արմավիր | Հարությունյան Անահիտ | Մրգաշատի համայնքային սոցիալական աշխատող |
| 22. | 6/22/21 | Մրգաշատ/Արմավիր | Սողոմոնյան Հասմիկ | Մրգաշատի համայնքապետարանի առաջատար մասնագետ |
| 23. | 6/20/21 | Մրգաշատ/Արմավիր | Գալստյան Աննա | Մրգաշատի մշակույթի տան տնօրեն |
| 24. | 7/29/21 | Իջևան/Տավուշ | Մանվելյան Ռուզաննա | Իջևանի ՄՍԾ ավագ սոցիալական աշխատող |
| 25. | 7/15/21 | Իջևան/Տավուշ | Տեր Սիմեոն քհն. Առաքելյան | Իջևան համայքի հոգևոր հովիվ |
| 26. | 8/3/21 | Իջևան/Տավուշ | Ներսիսյան Արմինե | Իջևանի «Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ |
| 27. | 8/3/21 | Իջևան/Տավուշ | Մարալչյան Մանուշ | «Երիտասարդ Տավուշ» ՀԿ նախագահ |
| 28. | 8/3/21 | Իջևան/Տավուշ | Օրդինյան Շամիր | «Հայկական կարմիր խաչ» նախագահ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 29. | 8/3/21 | Իջևան/Տավուշ | Ղարայան Էրինե | ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժնի մասնագետ |
| 30. | 7/15/21 | Նոյեմբերյան/Տավուշ | Անտոնյան Լուսինե | Նոյեմբերյանի «Հույսի կամուրջ» ՀԿ –ի տնօրեն |
| 31. | 7/25/21 | Նոյեմբերյան/Տավուշ | Տեր Սմբատ քհն.Աբրահամյան | Նոյեմբերյան համայնքի հոգևոր հովիվ |
| 32. | 7/30/21 | Նոյեմբերյան/Տավուշ | Անանյան Լուսինե | Նոյեմբերյանի համայնքային սոցիալական աշխատող |
| 33. | 8/5/21 | Նոյեմբերյան/Տավուշ | Հարությունյան Անի | «Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպությունհասարակական կազմակերպություն սոցիալական աշխատող |
| 34. | 8/5/21 | Նոյեմբերյան/Տավուշ | Սոնյա Զուրաբյան | Նոյեմբերյանի մշակույթի տան տնօրեն |
| 35. | 7/29/21 | Կապան/Սյունիք | Աննա Ոսկանյան | ՀՀ Սյունիքի մարզպետարանի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ |
| 36. | 7/23/21 | Գորիս/Սյունիք | Նունուֆար Ղուկասյան | Գորիսի ՄՍԾ, բաժնի պետ |
| 37. | 7/23/21 | Գորիս/Սյունիք | Իրինա Յոլյան | Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ |
| 38. | 7/26/21 | Գորիս/Սյունիք | Էլմիրա Բալասանյան | «Մաքուր Գորիս» հասարակական կազմակերպության ծրագրերի ղեկավար |
| 39. | 7/23/21 | Սիսիան/Սյունիք | Աննա Հովհաննիսյան | Սիսիանի Տարածքային Մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն/ՏՄԱԿ-ի տնօրեն ժ/պ |
| 40. | 7/23/21 | Սիսիան/Սյունիք | Անուշ Մարտիրոսյան | Սիսիանի երեխայի և ընտանիքի ցերեկային զարգացման Նավակ կենտրոն, համակարգող |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 41. | 7/23/21 | Սիսիան/Սյունիք | Գայանե Գրիգորյան | Սալվարդ ԿԶՀ, տնօրեն |
| 42. | 7/24/21 | Սիսիան/Սյունիք | Գոհար Համբարձումյան | «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի սոցիալական աշխատող |
| 43. | 7/24/21 | Սիսիան/Սյունիք | Դոնարա Ասրյան | Սիսիանի ավագ դպրոցի տնօրեն |
| 44. | 7/23/21 | Սիսիան/Սյունիք | Կատյա Բաբայան | «Ալ Մարի» ՀԿ-ի հիմնադիր |
| 45. | 7/24/21 | Սիսիան/Սյունիք | Նաիրա Սարգսյան | ՄՍԾ-ի Սիսիանի բաժնի պետ |
| 46. | 7/25/21 | Սիսիան/Սյունիք | Վարդան Իվանյան | Սիսիանի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար |
| 47. | 7/22/21 | Տաթև/Սյունիք | Անժելա Ղուլյան | Շինուհայր բնակավայրի նախակրթարանի տնօրեն |
| 48. | 7/22/21 | Տաթև/Սյունիք | Արման Սերոբյան | Տաթև խոշորացված համայնքի սոցիալական աշխատող |
| 49. | 7/22/21 | Տաթև/Սյունիք | Ժաննա Բարսեղյան | Բարեկամ կենտրոնի համակարգող |
| 50. | 8/4/21 | Գյումրի/Շիրակ | Անահիտ Աղաջանյան | Գյումրիի վերկանգնողական կենտրոնի ղեկավար |
| 51. | 8/6/21 | Գյումրի/Շիրակ | Լիլիթ Գորգինյան | Շիրակի Մարզպետարանի Աշխատակազմի «Ընտանիքի, Կանանց և Երեխաների Իրավունքների Պաշտպանության» բաժնի պետ |
| 52. | 8/3/21 | Գյումրի/Շիրակ | Կարեն Արշակյան | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար |
| 53. | 8/4/21 | Գյումրի/Շիրակ | Մարինե Ղալաչյան | Ախուրյան խոշորացված համայնքի ՄՍԾ-ի պետ՝ /Մարմաշեն համայնքին սպասարկում է Ախուրյանի ՄՍԾ-ն/ |
| 54. | 8/8/21 | Գյումրի/Շիրակ | Նելլի Սարգսյան | Գյումրիի քաղաքապետարանի քաղաքապետին կից «Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի» քարտուղար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 55. | 8/9/21 | Ախուրյան/Շիրակ | Մարինե Ղալաչյան | Ախուրյանի ՄՍԾ-ի պետ |
| 56. | 7/23/21 | Մարմաշեն/Շիրակ | Տեր Փառեն Պետրոսայան | Մարմաշեն խոշորացված համայնքի քահանա |
| 57. | 8/9/21 | Գյումրի/Շիրակ | Հրայր Կարապետյան | Շիրակի մարզպետարանի «Մշակույթի, Սպորտի և Կրթության վարչության» պետ |
| 58. | 8/8/21 | Գյումրի/Շիրակ | Գայանե Գալոյան | Գյումրիի ՄՍԾ սոցիալական ծառայության ղեկավար |

2. Ֆոկուս խմբային քննարկումների ցանկ

| N | Ամսաթիվ | Համայնք/մարզ | Իրականացման վայրը | Թիրախ խումբը | Մասնակիցների քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | 8/3/2021 | Արմավիրի մարզ, ք. Արմավիր | Ք. Արմավիր | Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ | 12 |
| 2. | 7/21/2021 | Արմավիրի մարզ, ք. Արմավիր | Ք. Արմավիր | Նպաստառուներ | 15 |
| 3. | 7/26/2021 | Արմավիրի մարզ, ք. Արմավիր | Ք. Արմավիր | Տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք | 14 |
| 4. | 7/27/2021 | Արմավիրի մարզ, ք. Արմավիր | Ք. Արմավիր | Տարեցներ | 8 |
| 5. | 7/27/2021 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր | Ք. Մեծամոր | Տարեցներ | 9 |
| 6. | 8/4/2021 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր | Ք. Մեծամոր | Հաշմանդամություն ունեցող անձինք | 8 |
| 7. | 7/23/2021 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր | Ք. Մեծամոր | Նպաստառուներ | 14 |
| 8. | 7/29/2021 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր | Ք. Մեծամոր | Հաշմանդամ երեխա ունեցող | 6 |
| 9. | 8/3/2021 | Արմավիրի մարզ, Մրգաշատ | Գյուղ Մրգաշատ | Երիտասարդներ | 10 |
| 10. | 8/4/2021 | Արմավիրի մարզ, Մրգաշատ | Գյուղ Մրգաշատ | Հաշմանդամություն ունեցող անձինք | 11 |
| 11. | 8/4/2021 | Արմավիրի մարզ, Մրգաշատ | Գյուղ Մրգաշատ | Տարեցներ | 8 |
| 12. | 8/3/2021 | Արմավիրի մարզ, Մրգաշատ | Գյուղ Մրգաշատ | Նպաստառուներ | 9 |
| 13. | 7/30/2021 | Տավուշի մարզ, ք. Իջևան | Ք. Իջևան | Ուսանողներ | 10 |
| 14. | 7/21/2021 | Տավուշի մարզ, ք. Իջևան | Ք. Իջևան | Առավել խոցելիներ | 10 |
| 15. | 7/28/2021 | Տավուշի մարզ, ք. Իջևան | Ք. Իջևան | Հաշմանդամ երեխա ունեցող | 8 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | 7/27/2021 | Տավուշի մարզ, ք. Իջևան | Ք. Իջևան | Տարեցներ | 9 |
| 17. | 8/4/2021 | Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան | Ք. Նոյեմբերյան | Նպաստառուներ | 7 |
| 18. | 7/23/2021 | Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան | Ք. Նոյեմբերյան | Առավել խոցելիներ | 11 |
| 19. | 7/26/2021 | Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան | Ք. Նոյեմբերյան | Տարեցներ | 15 |
| 20. | 8/4/2021 | Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան | Ք. Նոյեմբերյան | Հաշմանդամ երեխա ունեցող | 8 |
| 21. 1 | 7/21/2021 | Սյունիքի մարզ, Տաթև | գյուղ Շինուհայր | Տարեցներ | 8 |
| 22. 2 | 7/21/2021 | Սյունիքի մարզ, Տաթև | գյուղ Շինուհայր | Առավել խոցելիներ | 8 |
| 23. 3 | 6/30/2021 | Սյունիքի մարզ, Տաթև | գյուղ Շինուհայր | Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ | 8 |
| 24. 4 | 7/22/2021 | Սյունիքի մարզ, Տաթև | գյուղ Շինուհայր | Խառը խումբ | 8 |
| 25. 5 | 7/23/2021 | Սյունիքի մարզ, ք. Սիսիան | ք. Սիսիան | Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ | 9 |
| 26. 6 | 7/28/2021 | Սյունիքի մարզ, ք. Սիսիան | ք. Սիսիան | Առավել խոցելիներ | 8 |
| 27. 7 | 7/28/2021 | Սյունիքի մարզ, ք. Սիսիան | ք. Սիսիան | Տարեցներ | 8 |
| 28. 8 | 7/28/2021 | Սյունիքի մարզ, ք. Սիսիան | ք. Սիսիան | Խառը խումբ | 8 |
| 29. 9 | 7/20/2021 | Սյունիքի մարզ, ք. Գորիս | ք. Գորիս | Նպաստառուներ | 6 |
| 30. 10 | 7/20/2021 | Սյունիքի մարզ, ք. Գորիս | ք. Գորիս | Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ | 8 |
| 31. 11 | 7/22/2021 | Սյունիքի մարզ, ք. Գորիս | ք. Գորիս | Խառը խումբ | 10 |
| 32. 12 | 7/22/2021 | Սյունիքի մարզ, ք. Գորիս | ք. Գորիս | Տարեցներ | 9 |
| 33. 13 | 30.07.2021 | Շիրակի մարզ, Գյումրի | ք. Գյումրի | Նպաստառուներ | 10 |
| 34. 14 | 02.08.2021 | Շիրակի մարզ, Գյումրի | ք. Գյումրի | Հաշմանդամություն ունեցող անձինք | 9 |
| 35. 15 | 02.08.2021 | Շիրակի մարզ, Գյումրի | ք. Գյումրի | Ծերեր, թոշակառուներ | 8 |
| 36. 16 | 30.07.2021 | Շիրակի մարզ, Գյումրի | ք. Գյումրի | Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ | 16 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 37. 17 | 01.08.21 | Շիրակի մարզ, Մարմաշեն | Մայիսյան բնակավայր | Նպաստառուներ | 11 |
| 38. 18 | 27.07.21 | Շիրակի մարզ, Մարմաշեն | Մարմաշեն բնակավայր | Նպաստառուներ | 9 |
| 39. 19 | 03.08.21 | Շիրակի մարզ, Մարմաշեն | Շիրակ բնակավայր | Տարեցներ | 8 |
| 40. 20 | 04.08.21 | Շիրակի մարզ, Մարմաշեն | Շիրակ բնակավայր | Խառը խումբ | 8 |